



ՀԱՅՈՒԿ ԱՏԵՓՈՍԵԱՆ



ԱՆՐԱՍ

ԱՓԵՐՅԱՆԻ ՀԵՏ





ԳՐԱՆԻՎ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԱԶԲԱՄ

ԼԻԲՐՅԱՆՆԻ ՀԵՏ



792 AP  
Փ 31a

ББК 85.443 (2AP) 7

**Ստեփանյան Գառնիկ**

**Վահրամ Փափազյանի հետ: Դպր. միջին և բարձր տարիքի համար: Եր. Սովետ. գրող, 1979—104 էջ**

Գրքուկում ամփոփված են հեղինակի հուշերը ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանի մասին: Տասնամյա մի ժամանակաշրջան ընդգրկող այդ հիշողությունները Փափազյանին պատկերում են առօրյա փոխհարաբերություններում, մտերմական միջավայրում, միաժամանակ ներառնում այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք պատմել է մեծ դերասանը՝ հեղինակի հետ ունեցած իր հանդիպումների ընթացքում:

70803 (699)

U-----217-79 «S»

705 (01) 79

Վահրամ Փափազյանի հետ իմ հանդիպումներից մի քանի-  
ալ գրի եմ առել վաղուց, դեռևս նրա կենդանության ժամանակ,  
օրը-օրին:

Սակայն այլ բան է պատմել կամ գրի առնել այս կամ այն  
դեպքը, այլ բան՝ տալ հուշերի համապարփակ շարադրանք՝  
Փափազյանի նման բարդ անհատականության մասին: Հուշա-  
գրողը կամա-ակամա պատմությանն է հանձնում փաստեր, ո-  
րոնք եթե չեն դիտվում ավյալ անձնավորության ընդհանուր նը-  
կարագրի շարկապումների մեջ կամ շատ են մասնակի, կարող  
են ապագա հետազոտողներին օգնելու փոխարեն՝ մոլորության  
մեջ գցել:

Այս չափանիշը առաջին հերթին պահանջում է հուշերի ա-  
ռանցքը եղող անձնավորության բազմակողմանի ճանաչումը:

Ճանաչել էմ Փափազյանին այս բառի իսկական առումով,  
իմ մտերմության տասը տարիների, հարյուրից ավելի հանդի-  
պումների, պուլցների ընթացքում:

Խոստովանում եմ՝ ոչ ամբողջովին: Շատ էր բարդ Փափազ-  
յան-մարդու անհատական նկարագիրը: Ծիածանի գույների նը-  
ման բազմազան ու տարբեր էին նրա տրամադրության պահե-  
րը, յուրաքանչյուր դեպքում՝ ավարտուն մի հոգեվիճակ դրոշմ-  
ված դեմքին: Մերթ տեսել եմ կենսուրախ, կատակող, զվարթ,  
մերթ՝ մռայլ ու պրկված, զուսպ ու քշախոս, մերթ՝ անգամ հա-  
կառակորդների նկատմամբ անհիշաչար ու ներող, մանրուքնե-  
րը արհամարհող, մերթ՝ նույնիսկ ճշմարիտ բարեկամների դեմ  
դժգոհող, մերթ թվացել է, թե անկեղծ է, մերթ՝ թե խաղում է,  
անշուշտ միշտ արդյունք օրվա տրամադրության:

Փոխնիփոխ ի հայտ եկող այս այդակերպությունների ներ-  
քին համադրությունը, սակայն, ինձ բերել է այն համոզման, որ  
Փափազյանը ավելի բարի, ազնիվ մարդ էր, քան կարող էր թը-  
վալ արտաքուստ: Ուներ զարմանալի պարզամտություն՝ ման-  
կական անմիջականություն, քրիստոնեական ներողամտություն  
ու անհիշաչարություն: Մարդիկ տարօրինակ են համարել բա-

ներ, որ նրա համար եղել են պարզապես մանկական կատակներ:

Հնարավոր է, որ մարդ-քաղաքացի Փափապյանի նկարագրի այս կամ այն կողմը համընթաց չքայլի մեր օրերի ըմբռնումների հետ, համարվի պարտուղում, ինչպես այդ տեսում ենք բացառիկ այլ մեծությունների մոտ:

Նշանավոր մարդկանց դատավորը ժամանակն է, և ոչ ժամանակակիցը: Նրանց ամբողջապես ընկալելու համար տարածություն է պետք: Հետագա սերունդները Փափապյանի մեծությունը փաստարկող նոր հատկանիշներ, գույներ պիտի տեսնեն, որ մենք՝ ժամանակակիցներս, ի վիճակի չենք եղել տեսնելու:

Ինչէ՛ր ասեք չեն պատմվել Ադամյանի մասին՝ նպաստավոր, աննպատ: Ժամանակը սրբագրել է այդ բոլորը, մաքրել և մեզ հասցրել մի մեծություն, որը պատիվ պիտի բերեր ամեն մի կարգացած ժողովրդի:

Հումորը, կատակաբանությունը, կյանքի օհաճ դեպքերը զավեշտական գույներով ներկայացնելու ձգտումը հատուկ է եղել Փափապյանին ամբողջ կյանքում: Չի սիրել ակադեմիկ լրջությունը, բայց նրա բնավորության այս կողմը տարբեր երանգ ստացավ կյանքի վերջին տարիներին, երբ միմյանց հաշորդող դեպքեր՝ կնոջ մահը, բեմական ուժերի աստիճանական թուլացումը և այլ իրողություններ փոխեցին նրան հոգեբանորեն: Մաքառում էր մարմնական հյուծման, հիվանդությունների դեմ: Դարձյալ կատակում էր, դարձյալ զվարթ երևում, բայց դաժան իրողությունը ամենից ավելի իրեն էր հայտնի՝ հիվանդ Փափապյանին: Հիմա նա կատակաբանության դիմում էր՝ ներաշխարհի պրկված լարը գեթ ժամանակավորապես հանգիստ պահելու միտումով, ինչպես այդ արել էր իր արվեստում, ամենաողբերգական տեսարաններում հոգեբանորեն մի պահ կտրվելով ծանր ապրումների կաշկանդումից:

Հպանցիկ այս նկատումները որքանով են ի հայտ գալու իմ հիշողություններում՝ թողնում եմ ընթերցողին:

1956 թվականի հունվար ամսին էր: Աշխատում էի Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում: Լենինգրադից ստացվեց մի նամակ, ստորագրված **Վահրամ Փափապյան:**

«Հարգելի ընկեր Ստեփանյան,— գրում էր Փափապյանը,— սյարագաների բերումով որոշեցի ձեր թանգարանին հանձնել այն բոլորը, ինչ կապում ե իմ մոտ կես դարու ժամանակաշրջան ընդգրկող արխիվը»:

Ասում էր, թե այդ արխիվը ստանալու համար առաջարկներ են եղել տարբեր թանգարաններից, սակայն ինքը նախընտրում է Հայաստան ուղարկել:

Այնուհետև մանրամասն նկարագրում էր արխիվի բովանդակությունը՝ 50 տարվա ընթացքում տարբեր լեզուներով իր մասին գրված թատերախոսականներ պարունակող ալբոմներ, բավաթիվ նամակներ, թարգմանություններ, ձեռագիր աշխատություններ, լուսանկարներ և այլն:

Վերջում խնդրում էր տեղյակ պահել իրեն՝ թանգարանի որոշման մասին և տալիս էր հասցեն՝ Լենինգրադ, Շեստայա Սովետսկայա 5, բն. 6: Նամակը ավարտում էր հետևյալ նախադասությամբ. «Մինչև որ ինձ ևս կվիճակվի Հայաստանի մայրաքաղաքի մնայուն բնակիչը լինելու բախտը»:

Պատասխանեցի իսկույն: Խնդրեցի արխիվը տեղափոխել Երևան:

Վերջապես եկավ սպասված օրը: Մի առավոտ հնչեց հեռախոսի ձայնը: Վերցրի լսափողը:

— Ես Վահրամ Փափապյանն եմ, արխիվը բերել եմ: Ե՞րբ կարող եք գալ «Ինտուրիստ»:

Որոշեցինք այցի ժամը:

Դա իմ առաջին պրոյցն էր լինելու Փափապյանի հետ: Մինչ այդ տեսել էի միայն բեմից, մի քանի անգամ էլ կյանքում, բայց հեռվից:

Նույն օրը թանգարանի թատերական բաժնի վարիչ Ս. Մելիքսեթյանի հետ այցելեցինք Փափապյանին: Դուռը բաց արեց ինքը: Մենակ էր, սափրված, ճաշակով հագնված, մի բան, որ առհասարակ հատուկ էր նրան: Կապել էր գեղեցիկ փողկապ՝ վրան ոսկեպօծ վարդասեղ:

Երբ նստեցինք մեզ առաջարկված աթոռներին՝ սկսվեց հաճելի մի պրոյց: Ասաց, թե որոշել է այլևս չխաղալ:

— Մոտ հիսուն տարի, այսինքն՝ կես դար խաղացել եմ, հոգնել եմ, վերջին անգամ Երևանում պիտի կատարեմ Օթելլոյի դերը և հանեն բեմական լզեստոներս՝ այլևս չհագնելու պայմանով:

Ասում էր վստահ, անդառնալիորեն որոշած, բայց հե՞շտ էր դերասանի, այն էլ Փափապյանի նման դերասանի համար, թողնել բեմը: Չէր կարող: Ապացույց՝ մի տասնամյակ ևս անցավ, ընդհուպ մինչև ծանր հիվանդության օրերը, որ նա վերջապես թողեց բեմը:

Ծիսում էր «Աստրա» սիգարետ: Տրամադրությունը տեղը չէր: Գոնե ինձ այնպես թվաց: Մերթընդմերթ փորձում էր ժղպ-

տալ, ուրախ երևալ, բայց Վագսվում էր, որ անում է առ ի քաղաքավարություն:

Պատմեց ցնցող դեպքեր Լենինգրադի շրջապատման օրերից, շատ համառոտ հիշեց, թե ինչպես մի օր ֆաշիստական արկը պայթել էր իրենց պարտեպում, որտեղ այդ պահին գլտնըվելիս են եղել ինքն ու կինը՝ Վալենտինան: Կինը Վոկալ է տեղն ու տեղը, իսկ ինքը ստացել է մի քանի վերք՝ արկի բեկորներից, որոնք դիպել են թևերին, երեսին, ձեռքերին: Ասաց, թե վիրաբույժների հոգատարության շնորհիվ արագորեն ապաքինվել է, բայց իրեն գտել մենակ՝ կյանքի ընկերուհու կորստի ահավոր վշտի մեջ:

Մինչ խոսում էր, ես ուշադիր դիտում էի նրա դեմքի հարափոփոխ արտահայտությունը, այնքան ներդաշնակ փոթորկված հոգու ելևէջներին:

Չգացինք, որ հաճելի չէր կրույցի այդպիսի ընթացքը: Հարցրինք Լենինգրադի վերաշինության մասին: Պատմեց որոշ բաներ, ասաց թե ֆաշիստների ավերածությունները շատ մեծ էին, երկար ժամանակ էր պահանջվելու, մինչև որ գեղեցիկ Լենինգրադը իր նախկին տեսքն ընդուներ:

Սենյակի մի անկյունում, սեղանի վրա, դարսված էր ինչ-որ բան, ծածկված սպիտակ շորով: Փափալյանը հանկարծ ոտքի կանգնեց, մոտեցավ սեղանին, այնպիսի երկյուղածությամբ, ինչպես պիտի մոտենար Դեպոնոմոնայի մահճին՝ վերջին եղերական գիշերը: Արագ ետ քաշեց սփռոցը. կանգնեց, նայեց, դողացող ձայնով սկսեց ծանոթացնել թղթապանակները, մեկ-մեկ թվարկել յուրաքանչյուրի պարունակությունը:

Ասաց, թե գտնվում է շատ տարօրինակ, անբացատրելի հոգեվիճակի մեջ: Ե՛վ կսուփնում է բաժանվել այդ բոլորից, և՛

չի ուզում, կամենում է, որովհետև ամեն անգամ, երբ որևէ ձեռագիր տեսնում է, հիշում է ոչ թե նրա պարունակությունը, այլ՝ իր սիրելի Թինային, քանի որ նա է այդպես խնամքով դասավորել, կարգի բերել և աչքի լույսի պես պահել:

— Թինան այս արխիվի բովանդակությունը ավելի լավ գիտեր, քան ես,— ասաց,— մոռացել եմ անգամ, թե նամակներից շատերի հեղինակները ովքեր են, ի՞նչ պայմաններում ենք ծանոթացել, ե՞րբ, որտեղ: Իսկ նա ծանոթ էր բոլորին. ինձնից հարցնելով՝ օրը-օրին իմացել էր նրանց մասին: Ամեն ինչ գիտեր սանրամասներով: Հետագայում հաճախ էր ինձ հիշեցնում, ծիծաղում, կատակում, առանց մազաչափ չարության ու խանդի... Բարի՛, բարի՛ Թինան... Այո՛, ուզում եմ արխիվիցս բաժանվեմ և ազատվեմ Թինայի ուրվականի հալածանքներից: Բայց և՛ չեմ ուզում. ինձ թվում է, թե ձեռագրերը ձեզ հանձնելուց հետո մնալու եմ կրկնակի մենակ, ապրումներս ավելի խորն են լինելու:

Սփռոցը նորից փռեց սեղանի վրա, ծածկեց արխիվը: Կարծեք այլևս ասելիք չունեք: Ծխում էր, նայում սեղանին:

Հրաժեշտ տվինք ու հեռացանք:

ՄՏԵՐԻՄ ԶՐՈՒՅՅՆԵՐ

Հաջորդ օրը կրկին այցելեցի հյուրանոց, այս անգամ արդեն արխիվի տեղափոխման գործով:

Մենակ չէր: Անահիտ Դատյանն էլ այնտեղ էր: Իմացել էի, որ նրանք հիմա ապրում են միասին:— Անահիտը ինձ կհաս-

կանա, ծերությանս օրերին հոգաւար խնամքի կարիք ունեմ, հին ծանոթներ ենք,— ասել էր դերասաններից մեկին:

Այս նոր այցիս Փափապանը ուրախ տրամադրության մեջ էր: Նախաճաշում էր: Ախորժակով ուտում էր տապակած բանջարեղեն: Ինձ ընդունեց այնքան սիրալիք, որ կարծեք հին ծանոթներ լինեինք:

Ավարտեց նախաճաշը, լվացվեց, եկավ նստեց բազմոցին: Հակառակ նախորդ օրվա հագուստ-կապուստին, հիմա տնային խալաթով էր:

Խոսեցինք արխիվը տեղափոխելու, ցուցակագրելու մասին: Չարնացա, որ մինչև այդ օրը որևէ պայման չէր դրել, ի՞նչ էր վճարվելու, ե՞րբ էր վճարվելու: Ընդհակառակը, ասում էր, թե որքան շուտ տանենք, այնքան լավ կլինի: Միայն հետաքրքրվեց ձեռագրերի, մասնավորապես նամակների հետագա ձակատագրով: Տվեցի որոշ բացատրություն՝ թանգարանային նյութերի պահպանման և օգտագործման կարգի մասին: Հարցրեց, թե բոլոր փաստաթղթերն էլ տրամադրվելո՞ւ են ցանկացողներին:

— Մշակվելուց, մանրամասն արձանագրվելուց ու ցուցակագրվելուց հետո կտրամադրվեն, եթե, անշուշտ, արխիվի տերերը հատուկ պայման չեն դրել,— ասացի:

— Ի՞նչ պայման,— հարցրեց հետաքրքրությամբ:

— Օրինակ, ձեզ լավ ծանոթ դերասանուհիներից մեկը թանգարանին հանձնելով Ա. Բսահակյանից ստացած նամակները, պայման է դրել, որ ոչ ոքի չտրամադրվեն, քանի դեռ ինքը կենդանի է: Մենք այդ ցանկությունը պարտավոր ենք հաշվի առնել:

— Հասկանալի է,— ես այդպիսի պայման չեմ դնում, բոլորն էլ կարող եք տրամադրել՝ ում որ հարմար կգտնեք:

Նույն օրը արխիվը տեղափոխվեց:

Դրանից հետո արդեն հաճախ էր այցելում թանգարան: Երբ գալիս էր, կարծեք իր հետ բերում էր յուրահատուկ թարմություն, վվարթ մթնոլորտ:

Առաջին շաբաթներին մեր կրույցները պաշտոնական բընույթ ունեին, թեև հենց սկզբից Փափապյանը ինձ վրա թողեց պարզ, անմիջական ու կատակասեր մարդու տպավորություն: Նա մեր հանդիպումներին գնալով ավելի ու ավելի մտերմիկ շեշտ էր տալիս:

Ես այդ տարիներին սկսել էի գրել արևմտահայ թատրոնի պատմությունը: Որոշեցի օգտվել առիթից՝ պարզել ինձ հետաքրքրող մի շարք հարցեր, կես դար առաջ պատահած եղելություններ: Սիրով պատասխանում էր: Խոստովանում էմ, ավելի քիչ ստացա, քան ենթադրում էի: Նախ մոռացությունը կատարել էր իր դերը: Հաճախ երկար ժամանակ նստում էինք դեմ ու դեմ, հարցեր էի տալիս, թուղթ ու մատիտ վերցրած՝ պատրաստվում գրի առնել նրա ասածները, բայց այնպես էլ թուղթս մնում էր մաքուր: Մտածում էր, մտածում, մի քանի քան ասում և իսկույն ավելացնում, թե չի հիշում, չի ցանկանում սխալ բաներ պատմել, քանի որ գիտական նպատակի համար պիտի օգտագործվեին դրանք: Ընդհակառակը, հաճույքով խոսում էր կենցաղային դեպքերի մասին:

Այստեղ անշուշտ կար նաև Փափապյանի նախասիրությունը: Նա հակում ուներ դեպի ուրախ կրույցները: Հենց որ փորձում էի արվեստի, մասնավորապես թատրոնի հետ կապված խնդիրների մասին խոսել, աննկատելիորեն խոսքը թեքում էր

դեպի կենցաղայինը. պատմում էր ինչ-որ դեպք այս կամ այն մարդու կյանքից, հուշեր՝ տարբեր երկրներից:

Հետագայում, երբ իմ խնդրանքով գրավոր պատասխանեց որոշ հարցերի, վարվեց նույն կերպ: Դա հատուկ էր Փափազյանին: Թերթեցեք նրա «Աշխարհի թատրոններում» ռուսերեն ինքնակենսագրական գիրքը: Ընդարձակ էջեր կարող էք գրտնել Ենուվք Շահենի կամ այլոց հետ կապված վավեջտական դեպքերի մասին, չէք գտնի թեկուզ 1—2 էջ արևմտահայ թատրոնի այն շրջանի մասին, որտեղ կենտրոնական դեր է եղել ինքը: Անգամ «Հետադարձ հայացք» հուշագրություններում հանդիպում ենք կենցաղային մանրուքների, թեև դրանք կարդացվում են մեծ հաճությամբ:

Մի անգամ հարցրի թե հայ գրողներից ո՞ւմ է շատ սիրել: Ասաց՝ քիչ է ժամանակ գտել հայ գրողներին կարդալու: Ինչ որ տվել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, այդ է: Կարդացել է մեր հին մատենագրության ընտիր նմուշները հրաշալի գրաբարով, իսկ նորերից՝ Ղևոնդ Ալիշանին, Մկրտիչ Պեշիկթաշյանին, Պետրոս Դուրյանին: Ավելի տարվել է անտիկ գրականությանը և իտալական վերածննդի հսկաներով:

— Դանթեն իմ ամենասիրած գրողներից է, — ասաց, — ու սկսեց արտասանել «Դժոխքից» ընդարձակ հատվածներ՝ իտալերեն: — Նույնքան սիրել եմ «Իլիականը», — շարունակեց, — անգերապանցելի գիրք է, ով չի կարդացել, շատ բան է կորցրել:

Նրան նորից դեպի հայ գրականություն բերելու համար՝ հարցրի, թե ի՞նչպես է գնահատում Հակոբ Պարոնյանին: Գովեց, բայց զգացի որ շատ ոգևորված չէր: Գիտեր Երուխանին. գովեց նրա և՛ գրական կարողությունը, և՛ պատկերած կյանքը: — Չկնորսների աշխարհը ես էլ շատ եմ սիրել, — ասաց: Հիշեց

Երվանդ Օտյանին, Գրիգոր Զոհրապին, հանկարծ բացական-  
ջեց.

— Իսկ Վարուժանը, ուրիշ է, նա դեռ արժանի գնահատա-  
կան չի ստացել: Բանաստեղծ է բառիս լայն առումով:

Արտասանեց նրա «Կարոտի նամակը»: Մի երկու տեղ  
կանգ առավ:

— Հիսուն տարի է, որ չեմ արտասանել, մոռացել եմ, բայց  
սահմանադրության տարիներին հաճախ եմ կատարել երեկույթ-  
ցերեկույթներում:

Քանի որ սահմանադրության տարիներին նա «Չարդով»  
էր հռչակվել, խոսեցի այդ բանաստեղծության մասին: Հիշե-  
ցի այնտեղ գործածված մի բառ, որ չէի հասկացել:

— Պիլպի բառը չեմ հասկացել,— ասացի,— Վարուժանը  
գրում է.

«Հրամանը օ՛ն, քարոպին մեջ պիլպի

Կը ցըցե ոխն ահա ցուլի եղջյուրներ»:

Ժպտաց. շեշտակի նայեց ինձ և տվեց ուշագրավ պատաս-  
խան: Բացատրեց թե պիլպին Ղուրանի այն գլուխն է, որը  
Մուհամմեդը գրել է Եմենից Մեկկա գնալիս, գրել՝ ոգևորելու  
համար փոքրաթիվ պորքին:

— Վարուժանը դրանով ուզում է ասել՝ Աբդուլ Համիդի  
1895—1896 թթ. ջարդերի հրամանը հրահանգվել է մոլեռանդ  
ամբոխին՝ սպկիթներում արտասանված Ղուրանի այդ հատ-  
վածներով: Բանաստեղծության հաջորդ երկու տողերը բացատ-  
րում են այդ միտքը: Կարդա, կտեսնես:

Տանը կարդացի: Այդպես էր:

«Հետադարձ հայացք» հուշագրությունը նոր էր լույս տեսել  
և կարդացել էի համիշտակությամբ, համարել գրական գոհար:

Սակայն ունեի դիտողություններ: Հայ բեմի գործիչներից մի քանիսի նկատմամբ արդար չէր, ինչպես Աննա Բուդաղյանի, Ա. Շահխաթունու, Ե. Շահենի և ուրիշների: Դա միայն իմ կարծիքը չէր. շատերն էին նկատել, ասել իրեն, գրել: Այո՛, նըկատել էի, բայց չէի համարձակվել հայտնել: Մի օր աննկատելիորեն խոսք բացվեց նրանցից մի քանիսի մասին: Որոշ բան ընդունեց, բայց երբ պաշտպանության տակ առնելով Էլիպ Գովանին, ասացի թե Գովանը եթե կյանքում սխալ ուղի չընտրեր և գար Հայաստան, կարող էր լինել մեր պետական թատրոնի վարդը և մրցել Արուս Ոսկանյանի հետ, Փափապյանը առարկեց վճռականորեն:

— Զե՛, — ասաց, — չափավանցություն է: Գովանը երբեք Ոսկանյան չէր կարող դառնալ: Անտարակույս տաղանդավոր դերասանուհի էր, բայց փոքր էր նրա հնարավորությունների շրջանակը: Նախ՝ մեծացած լինելով թուրքախոս ընտանիքում, չունեի հայերենի հարապատ առողջանություն, իսկ լավ դերասան լինել՝ առանց մայրենի լեզվի նրբությունները հաղթահարելու՝ անհնար է: Բացի այդ՝ նա հաջողություն է ունեցել ֆրանսիական նոր ժամանակների այն պիեսներում, որոնց նյութը շատ է միանման և ընդգրկում է ընտանեկան սիրային նեղ շրջանակ: Հաջողություն չի ունեցել եվրոպական դասական պիեսներում, ասենք՝ Շեքսպիրի, Շիլլերի պիեսներում: Անգամ չկարողացավ հաղթահարել Սեդայի դերը «Հին աստվածներում»:

Թվարկելով «Հետադարձ հայացքի» վրիպումներից մի քանիսը, ասացի.

— Եթե ձեր հիշողությունները գրեիք տարիներ առաջ, ավելի հավաստի չէի՞ն լինի, չէ՞ որ շատ բան մոռացել էք, կարող էք

շփոթել դեմքերն ու դեպքերը, մանավանդ ժամանակագրությունը:

— Չէ՛, — ասաց, — երիտասարդ տարիքում հուշագրությունը չի գրավում մարդու: Վաթսունից հետո է, որ երևակայությամբ դեպի ետ ենք գնում, ներկան այլևս չի կարողանում բռնել, գրավել, եթե նույնիսկ շատ հաճելի լինի: Մարդիկ մտքով գնում են դեպի մանկությունը, որը հիմա այնքան հրապուրիչ է թվում, եթե անգամ այդպիսին չի եղել: Վրիպումները անխուսափելի են: Այստեղ ոչ միայն մոռացությունն է իր դերը կատարում, այլև ենթագիտակցական ընկալումների անդրադարձը: Պարզեմ միտքս: Անցյալի հրապուրիչ կամ հիշարժան որևէ դեպք, որը շատ է պաղեցնում մեր միտքը, եթե անգամ անմիջապես մեր հետ չի կատարվել, այնքան է մշակվել, խմորվել մեր ուղեղում, որ դարձել է մերը, դժվար է դառնում նրանից հրաժարվելը, երբ անգամ մեկնումեկը փորձում է ապացուցել, որ մենք առընչված չենք դեպքի հետ: Խոսքը չի վերաբերում փաստական՝ անունների, տարեթվերի անճշտություններին:

## ՄԻ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Երկար ժամանակ ինձ հուզել էր այն հարցը, թե Թովմաս Թերպանի «Սանդուխտ կույս» պիեսը, որը ամենևին բեմական գործ չէր, ինչպե՞ս էր պատահել, որ Փափապյանին բերել էր մեծ հաջողություն, ավելի քան Շեքսպիրի «Օթելլոն»: Վավերական փաստ էր, որ 1908 թվականին Պետրոս Ադամյանի թիկնոցը Փափապյանի ուսերին էին գցել ո՛չ թե Օթելլոյի դերա-

կատարման ժամանակ, այլ՝ Սանատրուկի դերակատարումից հետո:

Փորձել էի ինձ հուլյոյ հարցի պատասխանը գտնել «Հետադարձ հայացք» հուշագրությունում: Գտել էի բանալին. Փափայանն այնտեղ խոստովանում էր, թե դժվար էր ավելի ձանձրալի մի պիես գտնել, քան «Սանդուխտը», բայց հեղինակը շատ էր խնդրել խաղալ և ինքը մի կերպ համաձայնվել էր, Սանատրուկի կերպարի մեջ փնտրելով ապագայում իր խաղալիք Լիր Արքայի «թեպիսները»:

Բայց սա շատ քիչ էր՝ ներկայացման հաջողությունը բացատրելու համար: Ի՞նչ էր նշանակում «Լիր Արքայի թեպիսներ»:

Մի օր խնդրեցի բացատրել: Պատմեց մանրամասնորեն: Պարզվեց, որ Շեքսպիրի պիեսից վերցրել էր ամբողջական հատվածներ, փոխարինել Թերզյանի ողբերգության ձանձրալի մասերով: «Սանդուխտի» այն հատվածները, որտեղ խոսում են Հայաստանի հեթանոս Սանատրուկ թագավորն ու նրա քրիստոնյա դուստրը՝ Սանդուխտը, դեն էր գցել և դրանց փոխարեն վերցրել էր Լիրի և Կորդելիայի խորապես հոգեբանական ու կենդանի պրուլցները: Միաժամանակ տաղտկալի մի քանի մենախոսություններ կտորատել էր և վերածել աշխույժ երկխոսությունների, կապել գործողությունների հետ, իսկ քրիստոնեական գաղափարախոսությունն էլ երանգավորել էր հայրենասիրությանը, մի բան, որ սահմանադրական այդ տարիների կարգախոսն էր:

Հիմա ինձ համար ամեն ինչ պարզ էր: Բայց պարզ էր ինձ համար, իսկ գիտական աշխատություն գրողը պետք է ընթերցողին էլ համոզի, այն էլ՝ գրավոր վկայություններով:

Խնդրեցի գրի առնել առածները: Կատարեց ցանկությունս՝

մի քանի էջանոց սրամիտ մի գրությանը, որը հեշտությանը կարող էր տեղ գտնել «Հետադարձ հայացք» գրքում: Կարծում եմ, որ անգամ Ա. Չոպանյանը իր ընդարձակ ուսումնասիրությանը Թերվյան-մարդուն չի կարողացել այնքան բազմակողմանիորեն և իրական ու վառ գույներով ներկայացնել, որքան Փափապյանը սեղմ այս գրությանը:

Ես այդ նամակը տպագրել եմ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» աշխատության 3-րդ հատորում, ավելորդ եմ համարում մեջ բերել նույնությամբ, սակայն քանի որ «Ուրվագծի» այդ հատորը քչերին է մատչելի, իսկ նյութը սերտորեն կապվում է իմ հուշերի հետ, ավելորդ չեմ համարում ծանոթացնել բովանդակությունը և հիշատակել մի քանի տող:

Փափապյանը իրեն հատուկ գրական տաղանդով ու պատկերավոր ռճով, թանձր գույներով նկարագրում էր Թովմաս Թերվյանին թե՛ կյանքում և թե՛ հասարակական միջավայրում, ներկայացնում էր այնքան մանրամասնորեն, որ կարծեք ձեր առաջ կանգնած է Թերվյանը՝ պաշտոնական համազգեստով, պսպրղուն կոշիկներով, սպիտակ ձեռնոցներով, գլխին՝ կարմիր ֆես՝ ծոպերը քամուն տված: Ուշագրավն այն է, որ հիշատակված կենսագրական բոլոր փաստերն էլ հավաստի են և հեշտությամբ կարող են հաստատվել այլ աղբյուրներով:

Նույնքան մանրամասնորեն նկարագրում էր, թե ինչ պայմաններում է ծանոթացել ծերունազարդ գրողին, որ նրան առաջարկել է իր պիեսը, որպես Սանդուխտի դերակատար էլ ներկայացնելով հայերեն լավ իմացող մի հրեուհու: Դժբախտաբար Փափապյանը շատ ավելի տողեր է հատկացրել հրեա աղջկա արտաքին բարեմասնություններին, քան անմիջապես ինձ հետաքրքրող հարցին, թեև այդ քիչն էլ բավական էր ինձ՝ որպես հաստատում բանավոր պատմածների:

Որոշ կրճատումներով ահա այն հատվածը, որ վերաբերում էր իմ հարցին և որով ավարտվում էր Փափազյանի շատ արժեքավոր այդ նամակը.

«Այնքան էի տարվել օրիորդ Մողիանիով, որ սիրեցի այդ պիեսը, գործի հնացած լեզուն չնկատեցի, գործողության բացարձակ պակասը, ինչպես թատերգության ողորմելի ազուցվածքը և Շեքսպիրի «Լիր Արքայի» ներշնչումով մոտեցա Սանատրուկին, սովոր հատվածներ ավելացնելով տեքստի մեջ Լիրի ու Կորդելիայի տեսարաններից... Ամեն օր փորձերին ներկա էր Թերյանը. կտորները, որ ավելացրել էի դերիս մեջ, խմբագրել ուլեց իր գիտցած ոճով. համաձայնվեցի: Միպանսցենի փոփոխություններ պահանջեց, ընդունեցի... Չնայած այդ բոլորին՝ սիրեցի այդ միշտ կոկիկ, անհունորեն հաճելի մարդը, որ թովմաս Թերյանն էր և, որը այնքան տարիներ հետո այս տողերը քեզ գրելիս, նստել է կարծես գրչիս ծայրին և թելադրում է տողերս այնպես՝ ինչպես թելադրում էր ինձ փորձերի պահին, տարիներ առաջ, երբ դու դեռևս չկայիր, սիրելի Գառնիկ: Իսկ թե ինչ արժեք ունի ըստ իս՝ այդ թատերգությունը, ինքքդ էլ գիտես և չեմ պարմացնի քեզ, եթե ասեմ, որ ձևը խիստ նման է կորնեյան ժամանակաշրջանի ոճին: Գործողությունը, սակայն, կաղում է և գործի միակ առավելությունը այն ոսկեբերան լեզուն է, ինչպես և բառերի հարուստ ջրվեժը և պատկերավորումների գունագեղ ծովը, որով հայարտ կլինեք այսօր ամեն մի գրող: Մի խոսքով՝ գործն այդ, գեղեցիկ է, այո... ինչպես մեծ մայրս այսօր գեղեցիկ կլինեք, եթե ողջ լինեք: **Քն Վահրամ Փափազյան»:**

Սպառնիչ պատասխան՝ գեթ ինձ համար առեղծված համարված մի հարցի:

2. Վահրամ Փափազյանի հետ



Փափապանը եկավ թանգարան: Աշխատում էի Պետրոս Աղայանի «Նամականիի» վրա: Հետաքրքրվեց, թե քանի՞ նամակ է պարունակելու ժողովածուն, ո՞ւմ են հասցեագրված, ո՞ր տարիների նամակներ են: Տվեցի որոշ բացատրություն: Ամենից շատ խանդավառվեց Երանուհի Շահբապյանին ուղղված նամակներով, երբ ասացի, թե դրանք ինչպիսի բովանդակություն ունեն և այդ կինը ինչ մեծ դեր է կատարել Աղայանի բեմական և անձնական կյանքում:

Հանկարծ ասաց.

— Իսկ դու գիտե՞ս Աղայանի միօրյա բանտարկության մասին:

— Բանտարկություն, նոր եմ լսում, ի՞նչ պատճառով, ե՞րբ,— հարցրի հետաքրքրությամբ:

— Հինգ ոսկու պատճառով,— ասաց,— կարծեմ 1890 թվականին պիտի լինի: Նրա բեմական գործունեության 25—ամյակը ե՞րբ նշվեց:

— 1888 թվականին:

— Այդ է ուրեմն, 1888:

— Պատմեցեք խնդրեմ, թե այդ դեպքը և թե ձեր կարծիքը Աղայանի մասին:

— Բայց ես երեխա էի, որ Աղայանը մեռավ. ես նրան չեմ տեսել ոչ կյանքում և ոչ էլ բեմում:

— Այո՛, սակայն հետագայում հետաքրքրվել եք, ապացույց՝ որ ձեր ամբողջ խաղացանկը կապվել էք նրա դերերից, ընթացել եք նրա շավղով: Մարդիկ ձեր բեմելի հենց առաջին օրերին ձեզ համարել են Աղայանի արվեստի շարունակողը:

Մի քիչ մտածեց. ասաց, որ Ադամյանով առաջին անգամ հաիշտակվել է 1906 թվականին, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում սովորելիս: Դպրոցի գրադարանից վերցրել է Վ. Հացունու հրատարակած ժողովածուն, կարդացել հաճույքով: Գեղարվեստական ստեղծագործություններով չի խանդավառվել:— Նրանից լավերը կային,— ասաց,— կար Դուրյանի կախարդանքը: Ինձ ավելի ոգևորեց Ադամյանի բեմական փառքը, հատկապես ռուսական մամուլի գնահատականը: Դպրոցական ներկայացումների մասնակցել էի, սիրում էի թատրոնը:

Այա ժպտաց և շարունակեց.

— Ավելի լավ է հինգ ոսկու պատմությունն անեմ, քանի չեմ մոռացել: Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի մնայուն ուսուցիչներից էր Ղրբաջյան վարժապետը: Տասը տարի առաջ Պոլսից փախել էր և եկել Վենետիկ: Շնորհիվ թուրքերենի հըմտության՝ պաշտոն էր ստացել, թե՛ մեր դպրոցում և թե՛ Վենետիկի ս. Մարկոսի գրադարանում, որտեղ նրան հանձնարարվել էր թուրքերեն հին ձեռագրերի ցուցակագրման գործը: Մի օր, նա, աշակերտների ձեռքին նկատելով Հացունու վերոհիշյալ գիրքը, չարությամբ ու արհամարհանքով ասաց, թե դերասանները խաբեբաներ են: Այս լսելով՝ ձեռքերս քոր եկան. ուզում էի ապտակել ածիված գլխով այդ տխմարին, բայց կարողացա ինձ կսպել, թեև մի քանի նախատական խոսք ասացի:— Ծո,— ասաց Ղրբաջը,— ինչո՞ւ կբարկանաս, կկարծեաքի սո՞ւտ կըսեմ: Ձեր այդ օյինջիներուն մեջ ամենեն մենծը Ադամյանը չե՞ր, անոթի մեռավ՝ պարտքի տակ խեղդված, փալաս-փուլաքը ասոր անոր մոտ էմանեթ դրած: Է իջտե հինգ ոսկի ալ ինձմե առավ տե, հետո չկրցավ տալ: Օղու, քուկին խելքդ ատանկ բաներու չի հասնիր: Դուն ան ատեն գրկի չո-

շուխ էիր: Իշտե Ադամյանը նոր եկած էր Ռուսիայէն: Հոբէյանը պիտի ընէին: Օր մը եկավ քի սա մուարիֆին մտըր պիտի երթալ և հոբէյանին օրը խաղցվելիք օյիններուն վրա ինչպա դնել տալ: Աղաչեց, պաղատեց: Ես ալ ելա տե գնացի: Պետք եղավ, որ ինչպան դնել տալու համար հինգ ոսկինոց մը դնեմ մարդուկին ձեռքը: Ադամյանը առ հինգ ոսկին համար ինծի վեքսիլ մը տվավ:

Ադամյանը չի կարողացել ժամանակին վերադարձնել գումարը: Ղրբաջը մի քանի անգամ սպառնացել է, ի վերջո հիվանդ դերասանին հանձնել է ոստիկանության: Ադամյանին այս ծանր վիճակից ապատել է ածխի վաճառական ոմն Թերւյան, որին է փոխանցվել մուրհակը: Թերւյանն էլ հետագայում մի առիթով այն տվել է Փափապյանին:

— Հիմա այդ գրությունը ձեզ մո՞տ է,— հարցրի թանգարանային աշխատողի հետաքրքրությամբ:

— Հարկավ, Լենինգրադում է:

— Չե՞ք հանձնի թանգարանին, որպեսզի տպագրենք այս ժողովածուում:

— Երբ Լենինգրադ գնամ, կբերեմ:

Ուլում էի այս պատմությունն էլ գրավոր ունենալ: Խնդրեցի: Փափապյանը տանը թելադրել էր Անահիտին: Բերեց ինքը: Արման Կոթիկյանի հետ եկան:

Այդպիսի հանդիպումների օրերին վարմանալի ուրախ էր անցնում մեր վրույցը: Երեքով խոսում էինք արևմտահայերեն: Կոթիկյանն իր ինքնատիպ խոսելակերպով, հումորով ու կատակաբանություններով դառնում էր կենտրոնական դեմք ամբողջ վրույցի ընթացքում: Հրաշալի տեսարաններ էին ստեղծվում մանավանդ, երբ Կոթիկյանն ու Փափապյանը վիճում էին: Փափապյանը պահում էր հանդարտ վրուցակցի լրջությունը, իսկ

Կոթիկյանը տաքանում էր, փորձում հիմնավորել տեսակետները ամեն կերպ, վկայություններ բերել:

— Արման,— ասաց Փափապյանը գրությունը հանձնելով ինձ,— Գառնիկը ինձի չի հավատար, ամեն բան գրավոր կույե, վեքսիլ կույե... վեքսիլ...

— Ես ձեզ հավատում եմ,— ասացի,— վախենում եմ ընթերցողս ինձ չհավատա: Գրավորը ուրիշ է:

— Հարկավ, հարկավ,— միջամտեց Կոթիկյանը,— գրավոր վկայությունը կարևոր է, թատրոնի պատմություն կգրե մարդը, ատանկ հետաքրքիր փաստ չօգտագործե՞: Գրավորը ուրիշ է: Հիմա ես ալ քիչ մը պատմաբան դարձած եմ տե ատոր համար կըսեմ:

— Դո՞ւն ինչ կգրես,— հարցրեց Փափապյանը վարմացած,  
— Դո՞ւն ալ գիտնական դառնալ կույե:

— Հապա, հապա, սեպե քի դարձած եմ:

— Ի՞նչ կգրես:

— Գրածս չե՞ս կարդացած:

— Ո՛չ:

— Տրապիպոնի հայոց թատրոնի պատմությունը գրած եմ, Գառնիկն ալ տպած է: Ան ալ գիտե՞ս որտեղ:

— Ո՞րտեղ:

— Ամենեն բարձր տեղը: Գիտություններու ակադեմիայի... կեցի՛ր, կեցի՛ր, ինչպես կկոչվի... հա՛ գիտություններու ակադեմիայի հասարակական բաժանմունքի «Տեղեկագրին» մեջ: Բերեմ տե անգամ մը նայե: Հին շրջանեն սկսած եմ, մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը բերած հասցուցած եմ:

Չգիտեմ ինչով վերջացավ այս խոսակցությունը և Փափապյանը, ի վերջո, կարդա՞ց Կոթիկյանի հողվածը, բայց ես ան-

սահման ուրախացա՝ ստանալով Ադամյանի միօրյա բանտարկության գրավոր վկայությունը: Պարունակում էր այն փաստերը, որ պատմել էր ինձ և որը շարադրեցի վերևում: Մուրհակի մասին Փափապյանը խոսում էր Ղրբաջի բերնից, նրա ոճով. Ադամյանին բանտարկել տալու պատմությունը Ղրբաջը ասել էր հետևյալ կերպ. «Ամա ինձի Ղրբաջ կըսեն. խըռս ելա և գացի շիտակ Ղալաթա-Սերայի փոլիս մյուղիրին, որը բարեկամս էր: Չարթիե մը դրկեց և Ադամյանը, որ այդ միջոցին Ալքապարի կապինոն նստած էր, Ղալաթա-Սերայ բերվեց. մյուղիրը ներկայությանս պահանջեց, որ Ադամյանը հինգ կարմիր օսմանյանը ցնձա, ֆայիպն ալ հետը... և փոլիսին<sup>1</sup> հետ քովի օդան բանտարկել տվավ: Ամա կենե խիղճս հանգիստ չէր, իրիկվան դեմ նորեն գացի: Թապախ մը ֆասուլյայի փիյալ պատվիրեցի քի անոթի չի մնա: Թուղթի կտորի մը վրա բանտարկված սենյակը կգծագրեր կոր: Շատ աղաչեց, որ պարտքը իր մեկ ուրիշ բարեկամին՝ քյոմյուրի և փայտի մեծաքանակ վաճառական Թերպյան էֆենտիին հեվալե ընե. խաբուլ ըրի: ... Ֆայիպս խայիբ եղավ, ամա հինգ ոսկիս առի»:

Ապա Փափապյանն իր նամակում մանրամասն պատմում էր, թե ինչպես հանդիպել է ածուխի վաճառականին, ստացել մուրհակը:

«Էֆենտին տվեց ինձ այդ մուրհակը,— վերջացնում էր Փափապյանն իր գրությունը,— մի փոքրիկ թղթիկի վրա մատիտով գրված մի երկտողիկ է. «Կը պարտավորվիս թվականես ամիս մը վերջը Ղրբաջյան էֆենտիին վճարել հինգ օսմանյան լիրա և տոկոսը՝ 50 դուրուշ, որը լրիվ ստացա իրմե որպես պարտք: **Պ. Ադամյան**»:

1. Այսպես էին կոչում ոստիկանին պոլսահայերը:

հանձնել բարեկամիս՝ Գառնիկ Ստեփանյանին, ուրիշ այլ կարևոր թղթերի հետ, իր ժամանակին: Ցանկանում եմ, որ այդ ժամանակը հնարավորին չափով երկարի, և սիրում եմ հավատալ, որ այդ ցանկությունս բաժանում է և Գառնիկ Ստեփանյանը, որ մի շարք ուրիշ առավելությունների և առաքինությունների հետ՝ բարեկամությունս վայելելու պատիվը ունի: Վ. Փափապյան»:

Այս բոլորից հետո անխոհեմություն պիտի լիներ հիշեցնել Ադամյանի ստորագրությունը կրող մուրհակը: Պայման էր դրել մինչև մահվան տարին: Հնարավոր էր հուշել այդ չարագուշակ օրը: Բարեբախտաբար նա դրանից հետո ապրեց ուղիղ ինը տարի: Այդ ժամանակի ընթացքում հաճախ հանդիպեցինք, վերուցեցինք, նույնիսկ խոսեցինք իր մոտ դեռ մնացած արխիվային այլ արժեքները ձեռագրերին միացնելու մասին, բայց ո՛չ ես, ո՛չ էլ նա այլևս ակնարկ չարեցինք մուրհակի մասին:

Ու հիմա, երբ նրա մահվանից էլ անցել է տասը տարի, մըտածում եմ՝ արդյո՞ք մի օր Փափապյանի լենինգրադյան թղթերի մեջ պիտի հայտնվի Ադամյանի վեքսիլը, ինչպես սիրում էր ասել Փափապյանը:

ԹՈՒԼՈՒՄԲԱԶԻՆԵՐԸ

Այդ օրն էլ մեր վրույցը աննկատելիորեն թեքվեց դեպի Պոլսի աշխատավորական խավի կյանքն ու բարքերը: Գովեց ձըկնորսներին, սամաթիացի հայերին համարեց բարության, աշխատասիրության, ընկերասիրության և մարդասիրության տիպարներ:

— Շատ ապնիվ նկարագրի տեր մարդիկ են նաև թուլումբաջիները,— ասաց,— նրանց նույնպես շատ են սիրել: Կանգնած Պոլսի փողոցների մայթերին՝ ընկերներ շարունակ հաճույքով դիտել են, թե ինչպես ոտաբորիկ կամ թեթև մաշիկներ հագած, գլխներին չալմաններ, թուլումբաջիները ոգևորությամբ վազում էին հրդեհի վայրը՝ հանգցնելու: Մեծ մասամբ հայեր էին, հայկական եկեղեցիներին կից գործող խմբեր:

Հանկարծ հարցրեց.

— Լսե՞լ ես թուլումբաջիների նաղարան, այսինքն՝ հիմնը:

— Ո՞րտեղից: Պոլսում երբեք չեմ եղել:

— Ափսո՛ւ: Լսի՛ր ուրեմն.

Ալտրան, պալտրան,

Սեքսեն խավար սու գալտրան,

Դենիկ օրթասընտու գըզ քաջըրան,

Անաֆորա ելքեն աշան...

Բավական երկար էր նաղարան: Արտասանեց այնքան ոգեվորված ու այնքան հաճույքով, որ կարծեք կատարում էր Օթելլոյի մենախոսություններից մեկը: Չարմացել էի: Ե՞րբ էր սովորել, ինչպե՞ս էր միտը մնացել այդքան երկար հիմնը: Նա արտասանում էր, ես լիաթոք ծիծաղում էի:

— Ինչո՞ւ կխնդաս,— ասաց վերջացնելուց հետո:

— Բայց անպատշաճ բառեր, պատկերներ է պարունակում, ինչպե՞ս էին փողոցով անցնելիս նման բան արտասանում կամ երգում:

— Նրանք այնքան սիրված էին բնակչության կողմից, այնպիսի օգտակար գործի համար էին վազում, որ ամեն մարդ պարտավոր էր ճանապարհ տալ: Պոլսի հրդեհի ուժը հասկանալու համար պետք է այնտեղ ապրած լինես: Շենքերը, հաճախ

ընդարձակ թաղամասեր, փայտաշեն են. բավական է՝ կրակը տարածվի մի քանի տուն՝ որ այլևս անհնար լինի առաջը առնել: Ժողովուրդը այդ գռեհիկ արտահայտությունները լսում էր ներողամտությամբ ու ծիծաղով:

Փափապյանի արտասանած նաղարան իր բովանդակությամբ, սրամիտ պատկերներով, բառախաղերով ժողովրդական ստեղծագործության հիանալի նմուշ էր, անշուշտ գրված հայ թուլունբաջիներից մեկի ձեռքով: Միաժամանակ տիպական էր այդ հուժկու, համարձակ, բայց և անգրագետ մարդկանց համար: Լնդրեցի նորից արտասանել, որ գրի առնեմ ու պահեմ:

— Ա՛յս էլ թատրոնի պատմության մեջ պիտի օգտագործես, — ասաց կատակով:

— Ո՛չ, պարզապես հետաքրքիր է:

Չարտասանեց: Ասաց, թե մի քանի տող մոռացել է: Գիշերը կհիշի, կթելադրի Անահիտին և կտա:

— Երեխայի բնավորություն ունես, — ասաց, — խանդավառվում ես այնպիսի բաներով, որ մի լուրջ մարդ բանի տեղ պիտի չդներ:

— Բայց դուք բանի տեղ դրել եք և մինչև հիմա հիշում եք:

Ծիծաղեց:

— Այո՛, բանի տեղ դրել եմ և ոչ միայն հիշում եմ նաղարան, այլև մասունքի պես պահել եմ թուլունբաջիների խմբակարը: Մնացել էր գրքերիցս մեկի մեջ: Ամեն անգամ, երբ նայում եմ, ուրախանում եմ, որ այդ ապականված քաղաքում ապրել են ազնիվ հոգու տեր նման մարդիկ: Ո՛չ մի այլ բան ինձ այնպես չի տեղափոխում Պոլիս, որքան թուլունբաջիների այդ նկարը: Նայում եմ, նայում ու ինձ թվում է, թե նրանց շարքերում եմ, ծանոթ եմ բոլորին:

Ասաց: Մոռացալ: Հիշեցրի մի քանի անգամ: Վերջապես Անահիտը զանգահարեց և հայտնեց, թե նաղարան թելադրել է, կարող եմ ստանալ:

Գնացի նրանց տուն:

— Բեր, չոջուխս,— ասաց Անահիտին,— բեր անգամ մը միասին կարդանք թուլումբաջիների նաղարան. խըյախ բան է:

Անահիտը բերեց: Կարդաց Փափապանը: Լիաթոք ծիծաղում էինք երեքով, ամենից շատ՝ Փափապանը:

Հանկարծ ասաց.

— Անահիտ, քանի որ այսքան ուրախացալ բարեկամս, թուլումբաջիների լուսանկարն էլ տուր նրան:

Հիանալի նկար էր, այն էլ գունավոր, երևի լուսանկարված 1910-ական թվականներին: Նկարում երևում էին մի խումբ հրջեջներ՝ մի մասը ոտաբոբիկ, մի մասը՝ յուրահատուկ մուճակներ հագած, ջրհան գործիքը ուսամբարձ տանելիս:

Քանի որ թուլումբաջիների նաղարան այդքան վբաղեցրել էր Փափապանին, ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել որոշ հատվածներ, որոնք չեն պարունակում անպատշաճ բառեր կամ արտահայտություններ:

Գալիս են, գալիս են՝  
Ութսուն խավար ջուր վերցնող,  
Ծովակենտրոնում աղջիկ փախցնող,  
Դատարանում քամի բաց թողնող,  
Դաշույն ճոճող, պատժից չփախեցող,  
Ոստիկան, ժանդարմ հաշվի չառնող,

Ահա գալիս է հայոց եկեղեցու հրջեջ խումբը,  
Ղեկավարը՝ Մկրտիչ րեհվը... Յալլա՛ւ-ա՛ւ-ա՛ւ-ա՛ւ...

Պետք էր լսել, թե ինչպես էր արտասանում վերջին «Յալա՛ա՛ա՛» բառը, արտասանում բացառիկ ոգևորությամբ ու վճարթ տրամադրությամբ:

Հարցրի, թե երբևէ արտասանե՞լ է այդ նաղարան:

— Ավելի շատ, քան Վարուժանի «Ջարդը»,— ասաց վարմացած:

— Գիտե՞ք, որ Պետրոս Ադամյանն էլ սիրել է նման ուրախ բաներ արտասանել, դարձյալ թուրքերեն:

— Չեմ լսել:

— Ինքն էլ հորինել է: Մի պատառիկ պահվում է նրա արխիվում: Ավելի անպատշաճ արտահայտություններ է պարունակում: Երևի արտասանել է տղամարդկանց միջավայրում, կերուխումի սեղանների շուրջ:

— Անշուշտ: Ես էլ տղամարդկանց մոտ եմ արտասանել, երիտասարդ հասակումս, օսմանյան սահմանադրության տարիներին:

Երբ արտասանում կամ պատմում էր վլարձալի բաներ, արտակարգորեն փոխվում էր, դեմքը պայծառանում, կարծեք թարմանում: Ջգում էի, որ երևակայությամբ տեղափոխվում է Պոլիս, իրեն զգում Իստանբուլի նեղլիկ փողոցներում, ծովափնյա սրճարաններից մեկում, որտեղ ասում էր, այնքան բավնապիսի ձկներ կան:

Ու հիմա, երբ ամեն անգամ կարդում եմ Փափապյանի հետին վրույցների գրառումները և աչքս ընկնում է թուլումբաջիների նաղարայի ու լուսանկարի վրա, հիշում եմ ինձ համար հիշարժան այդ օրը, երբ ծիծաղում էինք երեքով, ծիծաղում մանկական անմիջականությամբ ու անհոգությամբ:

Սունդուկյանի անվան թատրոնում նշվելու էր Սիրանուշի ծննդյան 100—ամյակը: Հոբելյանական երեկոյից մի քանի օր առաջ Փափազյանը հեռախոսով կանչեց սուն:

Գնացի: Խոսեցինք տարբեր հարցերի մասին: Չասաց, թե ինչու է կանչել, բայց մեր խոսակցության նյութը աստիճանաբար դարձավ Սիրանուշի շուրջ: Հետաքրքիր մանրադեպեր պատմեց դերասանուհու կյանքից: Հիշեց նրա դերակատարումներից մի քանիսը, մասնավորապես Չեյնաբն ու Մեդեան, ասաց, թե նա այդ դերերում հանդես էր բերում ստեղծագործական բացառիկ ինքնատիպություն, թե նրա անհատական նկարագիրը առավել մեծ չափով ի հայտ էր գալիս այդ դերերում, որոնք ափսոս, ժամանակի թատերագիտական մտքի ուշադրությունից գրեթե վրիպել են, ցաք ու ցրիվ հիշատակությունները քիչ են՝ ամբողջական գաղափար կազմելու համար ըմբոստ ոգու այդ երկու արտահայտությունների մասին:

Մի քիչ մտածեց, ապա պատմեց շատ ուշագրավ մի մանրադեպ, կապված Հովհաննես Աբեղյանի հետ: Ասաց թե Կովկասում «Դավաճանություն» խաղալիս մի անգամ միզանսցենային մի հարցի շուրջ Սիրանուշի ու Աբեղյանի միջև առաջացել է սուր վեճ: Երկուսն էլ համառել են: Պիեսի երրորդ արարվածում կա այդպիսի մի տեսարան: Իր ժողովրդին ու կրոնին դավաճանած Օթար բեկը ուզում է աղերսել Չեյնաբին, որ միակ դստեր՝ Գայանեին հարեմ ուղարկելու վճիռը բեկանվի: Չեյնաբն էլ ուզում է այդ բանն օգտագործել և Օթար բեկին ստիպել, որ դարձի գա և միանա Վրաստանը պարսիկներից ազատագրելու համար նախապատրաստվող շարժմանը: Պիեսի ամենից

լարված տեսարաններից մեկը հանդիսացող այս հատվածում, ըստ հեղինակի, Օթար բեկը իր խնդիրքը Չեյնաբին պիտի ներկայացնի ծնկաչոք՝ սողալով: Աբեյանը ցանկացել է այդ հատվածը կատարել արևելյան շողոքորթությամբ խոնարհվելով, բայց ոչ սողալով: Սիրանույշը պնդել է ծնկաչոք խաղալու վրա: Փորձերի ժամանակ Աբեյանը համառել է, սպառնալով, թե այլպես կհրաժարվի ներկայացմանը մասնակցելուց:— Ես կըստիպեմ, որ դու ծնկաչոք խոսես Չեյնաբի հետ,— պնդել է Սիրանույշը:

Առանց համաձայնության գալու՝ սկսել են խաղը: Մինչև երրորդ արարվածը իրենց դերերը կատարել են ներդաշնակ ու համաձայնեցված: Հասել է վեճի առարկա տեսարանը: Աբեյան-Օթար բեկը խոնարհվել է Չեյնաբի առաջ, որ արտասանի խնդիրքը՝ Գայանեին փրկելու մասին: Սիրանույշը նկատել է, որ նա խաղալու է ոչ իր ցանկացած ձևով: Բարձրացել է գահավորակից, մոտեցել Օթարին, բռնել նրա ականջից ու ասել ցատուով՝ — Ես չե՞մ ասել, որ քո տիրուհու հետ դու պետք է խոսես ծնկաչոք, ենթարկվի՛ր, դավաճա՛ն, ստոր՛ւկ:

Աբեյանը հարկադրված հնապանդվել է՝ խաղը չտապալելու համար, իսկ հանդիսականները գլխի էլ չեն ընկել, թե ականջ բռնելը ըստ պիեսի՞ էր, թե Սիրանույշի մտահղացումը: Խաղից հետո Սիրանույշը ասել է Աբեյանին.

— Բայց ծնկաչոք խաղացիր, Հովհաննես:

— Ստիպեցիր,— պատասխանել է Աբեյանը ժպտալով և հաշտվել են:

— Ես չգիտեմ մի այլ դերասանուհի, որ իր կամքը այդքան խստորեն պարտադրել կարողանար շրջապատին, որքան Սիրանույշը,— վերջացրեց մանրադեպը Փափապյանը, ապա անցավ

հոբեյանի հետ կապված հարցերի: Ասաց, թե իրեն խնդրել են խոսք ասել: Չի կարող մերժել, բայց և այնպես վախենում է հուլվի, վատ պզա, մանավանդ, որ սիրտն էլ այնքան լավ չէ:

Ինձ համար անհասկանալի էր այս երկյուղը: Փափապյանի նման ականավոր մի ողբերգուի համար,— մտածում էի,— մի՞թե դժվար էր պահել հանդարտ հոգեվիճակ՝ մի քանի ժամ:

Երբ կրկին ու կրկին ասաց, թե, այնուամենայնիվ, հեշտ չի լինելու ելույթը, համարձակվեցի խորհուրդ տալ գրավոր խոսք չասել, պատմել ուրախ դրվագներ դերասանուհու կյանքից, թեկուզ Աբեյանի հետ պատահած այդ դեպքը: Չհամաձայնվեց: Ուրիշ բան առաջարկեցի.— Պատմեցեք առաջին անգամ ձեր միասին խաղալը. նա Համլետ, դուք՝ Լաերտ: Դարձյալ չհամաձայնվեց:

Հոբեյանի երեկոյան Փափապյանին գտա շատ հուլված:

— Սիրտս վատ է, վախենում եմ ինձ մի բան պատահի,— ասաց: Խոսում էր աջ ձեռքը սրտի վրա պահած:

Այդպես, ձեռքը սրտին, իջավ նախագահության սեղանի մոտ:

Վարագույրը բացվեց: Սկսվեց երեկոյի հանդիսավոր մասը: Չեկուցեց Ռուբեն Չարյանը: Խոսեցին, կարդացին, իր խոսքը կարդաց նաև Վահրամ Փափապյանը: Կարդաց հուլված: Բարեբախտաբար խաղաղ անցավ:

Հանդիսավոր մասը վերջացավ: Սկսվեց համերգային բաժինը: Ես արդեն դահլիճում էի: Բեմում միայնաց հաջորդում էին դերասանները: Եկավ նաև Փափապյանը: Արտասանեց «Համլետից» «Լինել, թե չլինել» հատվածը: Անցավ աննկատ: Ինքն էլ առանձին ճիգ չէր թափում:

Հետո բեմ մտավ Ռուզաննա Վարդանյանը՝ ամբողջովին

սներ հագած: Արտասանեց Իսահակյանի «Հայրենիքիս» բանաստեղծությունը: Ծափահարեցին: Նորից խոնարհեց գլուխը, բարձրացրեց գեղեցիկ աչքերը, կատարեց Իսահակյանի «Բինգյոլը»: Առաջին քառյակը արտասանեց հանգիստ, երկրորդ քառյակի կեսին կարծեք մի շանթ խփեց անցավ նրա մարմնով. մի պահ աչքերը բարձրացրեց, ցնցվեց, ետ-ետ գնաց ու, երբ ասում էր՝ «Ասա, քույրիկ, ո՞րն է ճամփան Բինգյոլի». անսովոր շարժումներ արեց և հապիվ կարողացավ ընկնել բեմի ետնամասը, մարդկանց բազուկների մեջ...

Դահլիճը իրար անցավ:

Ի՞նչ պատահեց այդ օրը: Մնացածը չեմ հիշում:

Անահիտից հեռախոսով իմացա, որ Փափապյանը երկու օր գիշերները չէր քնել, շարունակ կրկնել էր. «երջանի՛կ մահ»:

#### ՓԱՓԱՉՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70—ԱՄՅԱԿԸ

1959 թվականին, մեկ տարի ուշացումով նշվեց Փափապյանի ծննդյան 70—ամյակը: Չեկուցողն էր Ռուբեն Չարյանը: Ես ողջունելու էի հոբեյարին՝ Հայաստանի գրականության ու արվեստի թանգարանի կողմից:

Տոնական մթնոլորտ էր տիրում թատրոնում: Սկզբում Փափապյանի տրամադրությունը տեղն էր, կատակում էր, աջ ու ձախ ժպիտներ, ակնարկներ փոխանակում: Բայց աստիճանաբար լրջացավ, մռայլվեց: Իսկ երբ թատրոնի դիրեկտորի սենյակից պատրաստվում էինք իջնել բեմ, բոլորն էլ նկատեցին, որ հուլված է, ինչ-որ բան վբաղեցնում է նրա ուղեղը: Ոմանք վերագրեցին օրվա հանդիսությանը: Մեզնից մեկը հարցրեց, թե

ինչո՞ւ է այդքան անտրամադիր: Ակնհայտ հուզմունքով ասաց.

— Բոլորը եկել են, բոլորը այստեղ են, բացի մեկից, որ կու-  
պենայի ամենից շուտ գար:

— Ո՞վ:

— Մարիան:

Մարիան աղջիկն էր, որ այդ օրը հոբեյար հորը ողջունելու  
էր Լենինգրադի թատրոնի կողմից: Ուշացել էր: Այդ մենք էլ  
գիտեինք, անշուշտ պիտի գար, բայց կարող էր հոբեյանին  
չհասնել:

Հանկարծ կուլիսներում նկատվեց աշխույժ եռուկեռ,— Մա-  
րիան եկա՛վ, Մարիան եկա՛վ,— լսվեց ամեն կողմից: Փափապ-  
յանը իսկույն թեքվեց դեպի դուռը և ողջագուրվեց աղջկա հետ:  
Հուպիչ պահ էր, որը վարակեց նաև մեզ: Բոլորիս տրամադրու-  
թյունը փոխվեց, իսկ Փափապյանի դեմքը ուրախությունից ճա-  
ռագայթում էր:

Խմբով իջանք բեմ: Բացվեց վարագույրը: Սկսվեց նիստը:  
Չեկուցումից հետո հերթը եկավ ուղերձների ընթերցմանը, այ-  
սինքն՝ ողջույններին: Կարդում էին, խոսում, նվերներ դնում  
սեղանին:

Հոբեյարը հիմա ուրախ էր և այդպես էլ մնաց մինչև վերջ:

Ողջունեցին թատրոնները՝ Սունդուկյանի անվան պետա-  
կան թատրոնը, պատանի հանդիսատեսի, տիկնիկային, ռուսա-  
կան և այլ թատրոններ, սրամիտ կառուցված պատկերներ ցու-  
ցադրեցին, առիթը օգտագործելով ակնարկեցին նաև իրենց հու-  
լող հարցերի, մեկը շենք էր խնդրում, մյուսը՝ կահույք, երրոր-  
դը՝ հաստիքներ և այլն: Ծիծաղ էին առաջացնում այս բոլորը,  
ծափահարություններ խլում: Փափապյանը մերթ ժպտում էր,  
մերթ ծիծաղում:

Հայտարարվեց.

— Լենինգրադի թատրոնի կողմից ողջույնի խոսք ունի դերասանուհի Մարիա Փափապյանը:

Փափապյանը երիտասարդական աշխույժով ցատկեց տեղից, փաթաթվեց իր սիրասուն դստերը, այս անգամ բեմում: Ծափերից պոռթկաց ամբողջ թատրոնը. մարդիկ ծափահարում էին ոտի կանգնած, ուրախությունից հուզված: Երեկոյի հանդիսավոր մասի գագաթը կայմող այս պահը տևեց մի քանի րոպե և ապրեց ընթացքի վրա:

Մարիայի ողջույնից հետո այլևս ուղերձները չէին կարողում: Ես էլ չկարողացի: Չկարողացին տասից ավելի այլ հիմնարկներ: Մոտենում էինք, ուղերձները դնում սեղանին ու հեռանում:

Հորբեյանից մեկ-երկու օր անց Փափապյանը ինձ ու Ռուբենին ճաշի հրավիրեց իրենց տուն:

Շատ հաճելի երեկո անցկացրինք: Շարունակ կատակում էր, պատմում իր կյանքից մանրադեպեր, խոսեց երիտասարդական տարիների ընկեր դերասան ու նկարիչ Լաքայի մասին, ասաց, թե նույն տարիներին սովորել են Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, թե հիանալի իմացել է իտալերեն, անգամ խաղացել է իտալական խմբերում: Հետագայում եկել է Կովկաս, խաղացել Բաքվում, Թիֆլիսում, Չարիֆյանի, Աբեյանի, Սևունյանի հետ: — Նրա ճակատագիրը, ասես, որ այլ կերպ տնօրինվեց, այլապես պիտի լիներ հայ թատրոնի աչքի ընկնող դեմքերից մեկը: Նույնքան հայտնի ծաղրանկարիչ էր, — ասաց, ավարտելով Լաքայի մասին իր պատմածները:

Հետո հիշեց Մարիայի ուշանալու դեպքը: Նկատվում էր, որ հոգով շատ է կապված դստեր հետ: Հարցրի, թե հայերեն գիտի՞ Մարիան:

— Շատ քիչ, — ասաց, — մեղավոր չէ, ամբողջ կյանքը հայկական միջավայրից հեռու է անցկացրել, ես էլ միշտ թափառել եմ. ունի՞ց պիտի սովորեր:

Հանկարծ ժպտալով ասաց.

— Բայց ես փոքր հասակում նրան սովորեցրել եմ «Հայր մերը», որ մայրը՝ Թինան էլ գիտեր, այն էլ գրաբար:

Մի պահ տիկին Անահիտը մեր պրուպը թեքեց դեպի սեղանը, ասաց թե պատրաստել է Փափապյանի սիրած կերակուրները՝ մեծ մասամբ վեյթունի յուղով. չգիտի մեզ էլ դուր կգա՞ն: Գովեցինք: Փափապյանն ասաց, թե պոլսական խոհանոցը աշխարհի ամենաբազմազան և ճոխ խոհանոցներից է: Գովեց ձրկան տեսակները, վեյթունի յուղով պատրաստվող կերակուրները: Հարցրինք, թե ո՞րն է պոլսական կերակրատեսակների բազմազանության պատճառը: — Այն մարդիկ, — ասաց, — որոնք գլխի մասին չեն մտածում, անշուշտ պիտի մտածեն փորի մասին: Իսկույն էլ ավելացրեց, թե կատակ է անում, կերակուրների այդ բազմատեսակությունը գալիս է հին Բյուզանդիոնից:

Ուշ գիշեր էր, որ ուրախ տրամադրության մեջ թողինք մեր հյուրընկալներին ու բաժանվեցինք:

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ՊՈՌԹՎՈՒՄ

Նույն տարվա ամռանն էր: Փափապյանը և Անահիտը եկել էին մեր տուն՝ ընթրիքի:

Հաճելի ժամեր անցկացրինք: Նա պատմում էր, մենք հափշտակությամբ լսում էինք: Այդ օրվա հանդիպման գրառումը չունենա: Հիմա չեմ հիշում, թե ինչ հարցերի մասին խոսեցինք

և ինչ պատմեց իր կյանքից: Մտքունս մնացել է իմ մի հարցին նրա տված պատասխանը: Հարցրի, թե ճի՞շտ է արդյոք, որ Պոլսում Օթելլո խաղալիս՝ այն տեսարանում, որտեղ խեղդում է Դեպդեմոնային, և դահլիճը սարսափի մեջ է, ինքը հանկարծ դարձել է կուլիսներում կանգնած դերասաններից մեկին և ասել՝ մի համեղ փլաքի լինե՞ր ուտե՞ինք: Ասացի, թե նույնպիսի մի դեպք էլ արձանագրված է ֆրանսահայ մամուլում, դարձյալ իր Օթելլոյի դերակատարման հետ կապված: Մի՞թե նման լարված պահերին կատակներ կարելի է անել:

— Ճիշտ է,— ասաց Փափապյանը,— դա իմ արվեստի գաղտնիքներից մեկն է, եթե այդպես չանեմ, չեմ կարող խաղի ամենալարված այդ կետը ավարտին հասցնել. այն ապրումները, որ ունենում եմ Դեպդեմոնային խեղդելու պահին, մի բարձրակետ է, ձգված աղեղ, որի նոր լարումը կարող է կտրել աղեղը, ասել է, թե իմ կյանքի թելը: Այդ պահը խաղալիս միշտ ժամանակավոր հանգստի, ուժերի վերահավաքման պահեր եմ ստեղծում, նորից լիցքավորվում, շարունակում հաջորդ պահը: Երբեմն այդ արել եմ նման ռեպլիկներով, երբեմն՝ առանց ռեպլիկի, իմ ներաշխարհում հավասարակշռվելով: Ոչ մի դերասան չի կարող ողբերգական նման պահերի ծանրությունը հաղթահարել՝ առանց խորը ապրումների ու հուզման:

— Թերթերից մեկում գրված է, որ փարիսյան ձեր հյուրախաղերի օրերին խաղի ընթացքում վրադված եք եղել նաև դերասաններին սովորեցնելով, թե ինչպես պետք է խաղան, ուր պետք է շարժվեն, անգամ՝ ինչպես պետք է արտասանեն նախադասությունները: Սրանք չե՞ն խանգարել ձեր դերակատարմանը:

— Դա արդեն ուրիշ բան է: Երբ փորձերի համար շատ ժա-

մանակ չի եղել, հարկադրված այդ միջոցին եմ դիմել: Այդ անում են բոլորն էլ:

Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցին մեկնելու: Որդիս՝ Պերճը գնաց մեքենայի ետևից: Մինչ նա կգար, Փափապյանը ցանկացավ ծանոթանալ գրադարանիս:

— Ասում են լավ գրադարան ունես, — ասաց, — տեսնենք ինձ հետաքրքրող ինչ գրքեր կան:

Չգիտեի՝ ինչ գրքեր է սիրում: Անշուշտ թատրոնի, բեմական արվեստի հետ կապված գրքեր պիտի հետաքրքրեին նրան: Դրանք, մեծ մասամբ ռուսերեն, դասավորել էի մի քանի շարքով: Նայեց: Մեկ-երկուսը վերցրեց թերթեց, բոլորն էլ անշուշտ իրեն ծանոթ գրքեր էին: Ա. Պ. Լենսկու հոդվածներն ու նամակները պարունակող ժողովածուով ավելի հետաքրքրվեց, նայեց նկարները:

— Մի քիչ էլ հայերեն գրքերդ նայեմ, — ասաց, անցավ գրադարանիս այլ մասերին: Նրա դեմքը հանկարծ ճառագայթեց, երբ տեսավ վենետիկյան գրաբար գրքերը, բոլորն էլ շքեղ կապով: Նայեց Սենեկայի ճառերը, Կիկերոնը, Պլուտարկոսը, Մարկոս Ավրիլիոսը: Հետո գրեթե խլեց Հոմերոսի «Իլիականը» ու ասաց. — Օ՛, ունե՞ս այս սքանչելի գիրքը:

— Բայց գրաբար է, այն էլ Եղիա Թոմաճանի խրթին թարգմանությամբ, — ասացի, մտածելով, թե հիմա՞ էլ կարող է աշխարհում մարդ գտնվել, որ «Իլիականը» կարդա գրաբար:

— Չէ՛, պիտի կարդամ, այս գիշեր պիտի կարդամ, վենետիկում սովորելիս՝ իմ ամենասիրած գրքերից էր Հոմերոսի «Իլիականը»՝ գրաբար: Ամբողջ հատվածներ անգիր գիտեմ: Սկսեց արտասանել մի ընդարձակ հատված: — Սովորել եմ 50-60 տա-

րի առաջ և մինչև հիմա չեմ մոռացել: Պիտի տանեմ ու կարդամ, մաքուր կպահեմ, մի վախենա:

Վերցրեց «Իլիականը», դրեց գրպանը:

Գնաց: Չէի կարծում, թե պիտի կարդա, կնայի ու կդնի մի կողմ, մտածում էի, պարզապես պատանեկան տարիների վերհուշն է գրավել նրան:

Առավոտյան նոր էի հասել թանգարան, երբ հնչեց հեռախոսը:

— Գառնիկ,— լավեց Անահիտի ձայնը,— անուշա, շուտ եկուր տես՝ «Իլիականիդ» վիճակը: Տրոյայի պատերազմը մեր տունը փոխադրեցիր:

— Ե՞ս,— հարցրի վարմացած, առանց խնամարու, թե ինչի մասին է խոսքը:

— Այո:

— Ի՞նչ է պատահել:

— Եկուր, կիմանաս, հեռախոսով պատմելու բան չէ:

Ավելի մեծացավ կասկածս:

— Փափազանք տա՞նն է,— հարցրի:

— Պառկած է, եկուր, շուտ եկուր, մինչև գաա՝ կարթննա:

Ասում էր ու մի կողմից էլ ծիծաղում:

Շտապեցի հյուրանոց:

Դուռը բաց արեց Անահիտը: Դեմքին ինչ-որ խորհրդավոր ժպիտ կար:

Բեմական մի տեսարանի առաջ էի կանգնել. իսկապես որ Տրոյայի պատերազմը հիշեցնող տեսարան: Փափազանք մարտից հոգնած պինվորականի նման, շորերը հագին, պառկել էր բազմոցի վրա, բրդյա մի ծածկոց գցած թիկունքին: Կարծեք մի առյուծ էր մոնչում ծածկոցի տակ: Երբեք այնքան հաղթա-

կան ու հուժկու մարդու տպավորությունն չէր թողել ինձ վրա, որքան այդ օրը, այդպես պառկած: Սեղանի վրա ընկած էր իմ խեղճ «Իլիականը»՝ գրկված 110 տարվա ամուր կապմից, որ բացված մնում էր կողքին: Նայեցի շուրջս, գլխարկը մի կողմ, փողկապը մի այլ կողմ: Ոչինչ չէի հասկանում, իսկ Անահիտը լիաթոք ծիծաղում էր, մի բան, որ ինձ հույս ներշնչեց, թե որևէ վատ բան, ասենք հիվանդության նոպա, չէր պատահել:

— Բայց ի՞նչ է նշանակում այս բոլորը, — հարցրի շատ կամաց, որպեսզի Փափապյանը չզարթնի:

Անահիտը պատմեց դեպքը, որ երբեք չայիտի հավատայի, եթե ականատես չլինեի այդ տեսարանին:

Հյուրանոց հասնելուց՝ հետո Փափապյանը արագ հանել էր գլխարկը, գցել բազմոցի վրա, վերցրել գիրքը, սկսել էր բարձրաձայն, մեծ հանդիսավորությամբ կարդալ, պահելով հոմերոսյան չափի ռիթմն ու շեշտադրությունը: Սկսվում Անահիտին թըվացել էր, թե մի քանի էջ կարդալուց հետո պառկելու է: Բայց անցել էին երկար պահեր, իսկ Փափապյանը գնալով ավելի ու ավելի էր ոգևորվել ու շարունակել: Անահիտը հիշեցրել էր, թե ժամը 2-ն անց է, լավ կլինի հանգստանա: Փափապյանը չէր լսել կամ լսել էր, բայց կարևորություն չէր տվել:

Ժամը 3-ին՝ կից սենյակի մարդիկ խփել էին պատին, հասկացնելու համար, թե խանգարում է իրենց քունը: Փափապյանը դրան էլ կարևորություն չէր տվել և շարունակել էր ընթերցել: Երկրորդ անգամ էին խփել: Չէր ընդհատել: Առավոտյան դեմ, ժամը 4-ից էլ անց, հարևանը եկել էր և խփել սենյակի դուռը: Քնաթաթախ բաց էր արել Անահիտը: Անձանոթը պարմացած տեսել էր, թե ինչպես հարևանը ոգևորությամբ կարդում

է: Անքաղաքավարություն էր համարել ուրիշների քունը խանգարելը: Ասել էր, թե պիտի բողոքի: Ահա այդ պահին է, որ Փափապյանը վայրացած դեն էր շարտել գիրքը այնպիսի ուժգնությամբ, որ կապմահան էր եղել: Ապա մոտենալով անծանոթին, վայրալից ասել էր.— Կորիք այստեղից, չթողեցիր, որ կարդամ Աքիլեսի պատասխանը պատգամավորներին...

Հարևանը, որ արտասահմանից եկած հյուր է եղել և վբաղմունքով էլ առևտրական, չէր էլ լսել մեծ դերասանի անունը, վզուշությամբ մոտեցել էր տիկին Անահիտին և հարցրել.

— Խե՞նթ է այս մարդը...

— Այո...

— Անունը ի՞նչ է:

— Վահրամ Փափապյան:

Մարդը խորհրդավոր մի ակնարկ գցելով Փափապյանի վրա, օրորել է գլուխը, մեկնել, առանց հասկանալու, թե ով է և ինչ մասնագիտության տեր իր տարօրինակ հարևանը:

Նրա մեկնումից հետո նոր միայն Փափապյանը պառկել էր բազմոցի վրա, խսկույն քնել:

— Բիչ մը սպասե. հիմա կարթննա,— ասաց Անահիտը աթոռ առաջարկելով, բայց ես շտապում էի աշխատանքի: Վերցրի գիրքը և հարցրի:

— Տանե՞մ, թե թողնեմ որ շարունակի:

— Տա՛ր:

Ու այդպես էլ մինչև հիմա իմ գրադարանում պահվում է կապմից վրկված «Իլիականը», այդ օրվա այնքան բազմախոս վկան:

1958 թվականի հոկտեմբեր ամիսն էր: Փափապյանը եկել էր թանգարան, ցանկացել ինձ տեսնել, չէր գտել. աշխատակիցներից Արփիկ Ավետիսյանին թելադրել էր հետևյալ գրությունը. «Գառնիկ փաշա, երեքշաբթի գնում եմ արտասահման. որովհետև ասում են՝ գնալ կա, գալ չկա, ուզում եմ քեզ հանձնել մի շարք արժեքավոր թղթեր: Դրա համար, ուրեմն, բարի եղիր կիրակի օրը գալ ինձ մոտ: Հասցե՝ Կիևյան փողոց 5, մուտք 5, բն. 47: Հեռ. 3—03—27: ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱՉՅԱՆ»:

Նրա նոր բնակարանում դեռ չէի եղել: Նշված համարով իսկույն պանգահարեցի և պայմանավորվեցի ժամի համար:

Այցիս՝ Փափապյանին ու Անահիտին գտա բացառիկ ուրախ տրամադրության մեջ: Անահիտը, գոգնոցը կապած, վբաղված էր սենյակների վերադասավորումով, իսկ Փափապյանը, շրջելով նրա հետ սենյակից սենյակ, կատակում էր, կահույքի ուրիշ դասավորություն առաջարկում, որը ծիծաղ էր պատճառում կնոջը: — Դուն կնիկ մարդու գործին մի խառնվիր,— ասում էր յուրահատուկ ծեփծեքումով:

Հասկանալի էր նրանց ուրախության պատճառը. Փափապյանը վերջապես առաջին անգամ Երևանում ունենում էր իր մշտական բնակարանը, դառնում էր մեր մայրաքաղաքի բնակիչ, մի բան, որի մասին գրել էր ինձ հասցեագրած առաջին նամակում: Անահիտի մոտ էլ նկատելի էր տուն-տեղ լինելու, սենյակները իր ճաշակով դասավորելու կանացի գոհունակությունը:

— Իմ բնակարանը աշխարհն է, աշխատասենյակս թատրոնը, — ասաց Փափապյանը, — պարտադրել ինձ թեկուզ մեկ տարի

մնալ նույն քաղաքում, հավասար է վանդակի մեջ փակված պահելու պատժի: Բայց, դրանով հանդերձ, հոգնել եմ հյուրանոցային պայմաններից: Իսկ Անահիտը՝ տես, որքան ուրախացել է, հիվանդությունը մոռացած՝ երեխայի պես սենյակից սենյակ է վազում, հիմա մեզ համար սուրճ պատրաստելն էլ պիտի մոռանա:

Տեղավորվեցինք ու սկսեցինք կրույցը: Հարցրի, թե իսկապե՞ս մի քանի օրից մեկնելու է արտասահման:

— Երեքշաբթի պիտի գնամ,— պատասխանեց:

— Բայց հաջորդ օրը հայտարարված է ձեր «Ուրիել Ակոստան», գիշերը պիտի խաղաք, առավոտյան ճանապարհի ընկնեք:

— Ի՞նչ կլինի: Կարող եմ 1-2 օր ուշ դուրս գալ Երևանից: Վիզա ստացել եմ, երբ ուզեմ՝ կարող եմ գնալ: Պիտի մեկնեմ Լենինգրադ, մերոնց տեսնեմ, հրաժեշտ տամ, այնտեղից անցնեմ Վարշավա, հետո՝ Ռուսինիա, Բուլղարիա:

— Հետո՞:

— Հետո՞,— պատասխանեց ճակատը կնճռոտելով ու մի պահ ստաժեղով,— տեսնենք. առայժմ որոշված է այսքան: Ուրիշ ծրագրեր ունեմ, պիտի համաձայնեցնեմ կուլտուրայի մինիստրության հետ, եթե հաջողվի 5—6 ամիս պիտի շրջագայեմ տարբեր քաղաքներ:

Խոսում էր հանգիստ, առանց ավելորդ ոգևորության, բայց դժվար չէր նկատել հոգեկան բացառիկ գոհունակությունը:

— Իսկ ի՞նչ եք խաղալու:

— Օթելլո, Ռիչարդ, Շայլոկ...

Մի քիչ վարմացա, բայց չհամարձակվեցի կարծիք հայտնել:

— Անշուշտ, հայերեն:

— Հայերեն, ռուսերեն, գուցե և ֆրանսերեն, եթե անհրաժեշտ լինի:

Ասաց, թե ավելի քան 25 տարի արտասահմանում չի եղել, շատ ծանոթներ, անգամ հարապատներ կարող է գտնել Ռուսի-նիայում և Բուլղարիայում, մարդիկ, որոնք Պոլսից գաղթել են 1920-ական թվականների սկզբներին: Թվեց մի քանիսի անունը:

Հիշեցրի, որ իր թողած երկտողում ակնարկել էր արխիվա-յին փաստաթղթեր թանգարանին հանձնելու մասին:

Ժպտաց:

— Այդպես էի գրել, որ անայայնան գաս,— ասաց,— հիմա ոչինչ չեմ տալու: Լենինգրադից բերել եմ նյութերի մի մասը, մյուսն էլ կբերեմ, բոլորը միասին կտամ: Սպասիր վերադարձիս: Բենական զգեստներս էլ հանձնելու եմ: Քեզ կանչել եմ ուրիշ քանի համար:

— Ի՞նչ քանի:

— Մեկ շաբաթ առաջ, երբ հանդիպեցինք, տրամադրու-թյունդ տեղը չէր...

Հասկացա, թե ինչու էր կանչել:

Դրանից մի քանի օր առաջ, տրամադրությանս վատ պահին նրան ասել էի բաներ, որ գուցե պիտի չասեի, դժգոհել էի մարդկանցից, տվել անուններ, որ գուցե չտայի հաջորդ օրը:

Բաժանել էր ապրումներս. ամեն կերպ աշխատել էր հան-գըստացնել, հանույել, որ չհրաժարվեմ թանգարանի դիրեկտորի պաշտոնից, մի հարց, որի համար նույն ամսի սկզբին դիմել էի Ակադեմիայի նախագահությանը: Խորհուրդ էր տվել տոկալ, համբերել: Լավն ու վատը, չարն ու բարին, սխալն ու ուղիղը կյանքի օրինաչափություններն են,— ասել էր: Հակառակորդ

ունենալ՝ նշանակում է բարեկամ ունենալ: Ուժ ստացիր բարեկամներիցդ, արհամարհիր հակառակորդներիդ:

Հետո փոխվել էր տրամադրությունս, հիմա, եթե հանդիպելի Փափապյանին, այդքան դառնացած չէի խոսի, բայց վիճակս նույնն էր, ուստի ասացի, թե աշխատանքից դուրս գալու որոշումս անդառնալի էր, թե սպասում էի դիմումիս պատասխանին:

Հոգատար հոր սրտացավությանը շարունակեց համուլել, որ համբերեմ, ասաց, թե կանցնեն անախորժությունները, ամեն ինչ կմոռացվի:

Հետո, կարծեք տրամադրությունս ավելի բարձրացնելու համար, Անահիտին բերել տվեց «Հետադարձ հայացքի» երկու հատորները և ասաց.

— Նայե, քեզի ինչ աղվոր նվեր պիտի տամ:

Ասում էր այնքան քնքշությամբ, ինչպես պիտի ասեր հայրը երեխային.— Նայե, քեզի ինչ աղվոր խաղալիք պիտի տամ...

Բաց արեց գրքի առաջին հատորի առաջին էջը և սկսեց մակագրել:

Սովորաբար գրքերի մակագրությունները թելադրում էր Անահիտին, ինքը ստորագրում էր, քանի որ դժվարանում էր գրել: Այս անգամ ինքը գրեց, թեև մի քանի բոպե տևեց մինչև որ ավարտեց 4—5 տողանոց մակագրությունը: Ինձ շատ շոյված վզացի, որ պիտի ունենայի նրա ինքնագիր մակագրությունը: Գրել էր. «Աղվոր, լայնսիրտ, համառ ու համբերող Գառնիկին, սրտիս մտերիմին, իմ երկրպագած արվեստի ավանդապահին, երախտապարտ սրտով: Վահրամ Փափապյան»: Ապա՝ ամսաթիվը՝ 12 հոկտեմբերի, 1958:

Կարդում ու մտածում էի՝ որքա՛ն մեծ հարստություն է այդպիսի հոգատար բարեկամ ունենալը: Չէ՞ որ մակագրությունը

թելադրված էր մեր պրուպցի տրամադրությունից և դարձյալ հորդորում էր ինձ լինել համբերող, լայնսիրտ, արհամարհել անսխորժությունները:

Ուրեմն՝ նա հենց այս պրուպցը ունենալու և գիրքը նվիրելու համար էր կանչել ինձ:

Խմեցինք սուրճը և կրկին վերադարձանք իր կատարելիք ուղևորությանը: Այս անգամ խոսեց ավելի գործնական հարցերի մասին, թե որ քաղաքում քանի օր պիտի մնա, ինչ դժվարություններ կարող են ծառանալ իր առաջ և այլն:

Բարի ճանապարհ մտախոհի և հրաժեշտ տվի:

— Ասածներս կատարիր, — խորհուրդ տվեց աստիճանների վրա:

Դրանից հետո մոտ հինգ ամիս չհանդիպեցի նրան: Մեկնեց Ռուսինիա, այնտեղից՝ Բուդարիա, վերադարձավ հաճելի տպավորություններով, որոնց հաղորդակից դարձրեց «Սովետական արվեստի» ընթերցողներին՝ հյուսիսը ոճով գրված մի հոդվածով:

Փափապյանի արտասահմանից վերադառնալուց կարճ ժամանակ անց, գրականության և արվեստի աշխատողների նեղ շրջանում նշվեց իմ ծննդյան 50—ամյակը: Անշուշտ ես այդ մասին պիտի չխոսեի իմ այս հիշողություններում, եթե Փափապյանը անուղղակի մասնակցություն չունենար դրան:

Տարեդարձի այդ երեկոյին խոսեցին իմ մասին, լավ-լավ բաներ ասացին, կարդացին ուղերձներ, ապա՝ շնորհավորական հեռագրեր՝ ընդհանուր, հապար անգամ լաված ու կրկնված բովանդակությամբ՝ «Յանկանում ենք քաջառողջություն, աշխատանքային հաջողություններ», «Երկա՛ր կյանք, բեղմնավոր գործունեություն» և այլն:

Հեռագրերից երկուսը, սակայն, մեծ աշխուժություն առաջացրին դահլիճում: Մեկը ստորագրված էր այն մարդու կողմից, որը ամենից առավել պղտորել էր իմ հոգին՝ «սխալներ» գըտնելով իմ մի գրքում: Բոլորը գիտեին փաստը, դրա համար էլ նրա շնորհավորական հեռագիրը պարմանք ու ծիծաղ պատճառեց ներկաներին: Դրանից հետո ընթերցվեց մի ուրիշ հեռագիր, որը մեծ աշխուժություն առաջացրեց: Չգիտեմ՝ պատահականություն էր հեռագրերի այդ հաջորդականությունը, թե դրանք ընթերցող Լ. Խալաթյանի սրամիտ մի խաղը, որը այնքան տրամաբանական հնչեց:

Ահա այդ վերջինը՝ Փափապյանի հեռագիրը. «Երկար կյանք, ծավալուն գործունեություն Գառնուկի նման ազնիվ բարեկամիս: Թող ինձ նման գամփռների ամուր բարեկամությունը պատվար լինի նրան՝ բոլոր գայլերի դեմ»:

Հինգ ամիս առաջվա մեր վրույցի տրամաբանական շարունակությունն էր այս հեռագիրը, ճշմարիտ բարեկամի ազնիվ հոգատարության արտահայտություն:

Իմ անձնական արխիվում էլ բազմախոս այս երկու հեռագրերը պահվում են կողք-կողքի, որպես չարի ու բարու անբաժանելի վկաներ:

ԽԱՆԴԸ

Սիրային խանդ Փափապյանի մոտ, այն էլ օթելլոյական բուռն խանդ, ճիշտն ասած՝ ինձ համար անըմբռնելի էր ու հիմա էլ դժվարանում եմ ընկալել և ամենևին չպիտի հավատայի, եթե սկանառեսը ես չլինեի:

Ինձ թվում էր, թե ականավոր դերասանների համար, ինչպիսին էր Փափապյանը, որոնք շրջապատված են հարյուրավոր խաղընկերուհիներով ու երկրպագուհիներով, սիրո հարցը ինքնին երկփեղկվում է, տարաբաժանվում ու ստանում միանգամայն այլ երանգ, քան այլ տղամարդկանց մոտ:

Ամենևին չէի կարծում, թե անվերջ սիրարկածների մեջ եղող մի դերասան կարող էր ունենալ ճշմարիտ խանդի պահեր:

Բայց ունեցել է:

Խոսքը վերաբերում է Փափապյանի առաջին կնոջը՝ Հրաչյա Դերձակյանին:

Փափապյանը նրա հետ ամուսնացել էր 1911 թվականին: Հրաչյայի մյուս քույրը՝ Ատրինեն էլ ամուսնացել էր դերասան Մկրտիչ Չանանի հետ: Փափապյանի ամուսնությունը արժանացել է ժամանակի մամուլի ուշադրությանը:

Հաճելի սկիզբ՝ արդարև, որ ունեցավ տխուր վախճան: Ամուսնությունից հալիվ երկու տարի անց, 1913 թվականին, երբ Պոլիսը դեռ ապրում էր սահմանադրական տարիների պատրանքներով, Փափապյանը հանկարծ թողեց ծննդավայրը, կնոջը, ծնողներին և եկավ Կովկաս, ընդամիջտ հրաժարվելով Հրաչյայից, որը նրանից ուներ մի տղա:

Ինչո՞ւ եկավ: Փափապյանով զբաղվողները այս հարցի կողքով անցել են՝ առանց պատճառներ որոնելու: Ինքն էլ խուսափել է այդ մասին խոսելուց:

Նախ տանք մի քանի բացատրություն:

Հրաչյան, դեռևս Փափապյանի Պոլսում գտնվելու տարիներին խաղում էր նաև թուրքական խմբերում, մի բան, որ Փափապյանի սրտով չէր:

Ամուսնու Կովկաս մեկնումից հետո՝ երեխայի հետ մենակ

մնացած կինը արդեն հարկադրված էր խաղալ որտեղ որ պայմանները ավելի նպաստավոր էին, թեև ավելի շատ մասնակցել է հայկական ներկայացումներին:

Պատերազմից հետո, երբ ստեղծվեց Պոլսո հայ դրամատիկ թատերախումբը, նա դարձավ հայ դրամատիկի աչքի ընկնող ուժերից, կատարելով մի շարք կարևոր դերեր՝ դասական պիեսներում:

1920 թվականի գարնանը, երբ Փափապյանը պոլսահայ հորիպոնում կրկին երևաց, ումանց թվաց, թե հեշտ պիտի լինի վերամիավորել միմյանց լքած գույզին: Այդ ուղղությամբ մեծ ջանքեր թափեց մանավանդ թատերական գործիչ և երգիծաբան Երվանդ Թոլայանը:

Բայց Փափապյանը Պոլիս էր եկել իր հետ բերելով ռուս կընոջը և փոքրիկ Մարիային: Նա չի ցանկացել հանդիպել Հրաչյային, տեսնել արդեն 8 տարեկան որդուն:

Իսկ երբ կրկին վերադարձավ Կովկաս, Հրաչյան հարկադրված վերցրեց երեխային և մեկնեց Ամերիկա:

Այսքանը գիտեի, երբ լույս տեսավ Փափապյանի «Հետադարձ հայացք» հուշագրությունը, որտեղ աննպաստ տողեր կային առաջին կնոջ հասցեին: Դեպքերն էլ նկարագրված էին այնպես, որ կարծեք իրական ամուսնություն չի եղել, մինչդեռ, ինչպես ասացի, նրա ամուսնությունը հիշատակվել էր անգամ մամուլում:

Դժգոհ էի մնացել նրա այդ վերաբերմունքից: Դժգոհ էին մնացել նաև փաստերին իրավեկ այլ մարդիկ, այդ թվում՝ դերասան Կոթիկյանը:

Ահա այդ ամիսներին էր, որ գրականության և արվեստի բանգարանը ձեռք բերեց Մկրտիչ Չանանի փոքրիկ արխիվը.

որտեղ կային մի քանի լուսանկարներ: Դրանցից մեկը հուպեց ինձ ու Կոթիկյանին: Դա Հրաչյայի մի լուսանկարն էր, գրկին երեխան՝ այնքա՛ն նման Փափապյանին:

Երկուսով երկար նայեցինք լուսանկարին, կարծիքներ փոխանակեցինք, բայց որոշեցինք այդ մասին ամենևին չխոսել Փափապյանի հետ, ավելորդ հուշում չչափաճառելու համար:

Որոշեցինք, բայց ես մեղանչեցի, այն էլ ոչ թե մեկ անգամ, այլ՝ երկու. առաջինը գիտակցաբար, երկրորդը՝ անգիտակցաբար: Չղջացել եմ այդ վույգ մեղանչումների համար, որոնք վրդովմունք պատճառեցին մեծ դերասանին, բայց եթե չլինեին այդ մեղանչումները, չպիտի գրվեին հուշերիս այս էջերը, որոնք վերաբերում են Փափապյանի կյանքի վաղ տարիների մի դըրվագի:

Առաջին մեղանչումս տեղի ունեցավ հետևյալ պայմաններում: Մենակ էինք թանգարանում: Չգիտեմ ինչպես պատահեց, բերնիցս թոցրի, թե տեսել եմ նրա որդու գեղեցիկ նկարը, որը շատ նման է հորը. ինձ թվում էր, թե ամեն մի ծնողի համար էլ հաճելի խոսք էր դա: Եվ որովհետև մինչ այդ Հրաչյայի բարոյական մեղանչման մասին խոսք անգամ չէր եղել, մտքովս չէր կարող անցնել, թե իմ այդ նախադասությունը ինչ հետեվանք կարող էր ունենալ: Փափապյանը այլայլվեց, պրկվեց և հանկարծ ասաց, թե Հրաչյան իրեն դավաճանել է, թե այդ մասին այն ժամանակ իմացել են բոլորը: Դրա համար թողել է Պոլիսը: Հետագայում կինը շատ էր փորձել միանալ, բայց ինքը չէր ցանկացել:

— Երբ վերջնականապես հույսը կտրեց. չվեց ինձ համար անծանոթ աջխարհներ: Այլևս ոչ ես հետաքրքրվեցի նրանով, ոչ էլ նա ինձնով և այնպես էլ չիմացա, թե ինչ եղավ:

Չէի հավատում: Մի՞թե անցած երկար տարիների ընթացքում մեկնումեկը լուր չէր բերել նրա առաջին կնոջ մասին: Չէ՛, նա չէր մոռացել ո՛չ Հրաչյային, ո՛չ էլ որդուն, որի մասին ասում էին, թե ընթացել է հոր շավղով, դարձել է կինոդերասան: Չէր մոռացել. ապացույց՝ խանդի այն տեսարանը, որին ակամատես եղա դրանից մի քանի ամիս հետո:

Ասացի, որ երկրորդ մեղանշունս տեղի ունեցավ իմ կամքից անկախ:

Այդ օրերին իմ ձեռքն էր անցել մի շատ հետաքրքրական գիրք թուրքերեն լեզվով, թուրք թատրոնի մասին: Դա Ռեֆիկ Ահմեդի «Մոտ ժամանակների թուրքական թատրոնը» աշխատությունն էր, որտեղ լայն տեղ էր տրված հայերի մատուցած ծառայությանը թուրքական թատրոնի սկզբնավորման ու վարճացման գործում: Մի մեծ գլուխ հատկացված էր օսմանյան սահմանադրության տարիներին, այսինքն՝ Վահրամ Փափապյանի բեմելի շրջանին, Մարտիրոս Մնակյանի և այլ գործիչների թատերախմբերին: Այնտեղ տպագրված էին այդ տարիներին Պոլսում գործող գրեթե բոլոր հայ արվեստագետների նկարները:

Մտածելով, որ այս բոլորը պիտի ուրախացնի Փափապյանին, նրա մեջ վարթեցնի վաղեմի հուշեր, վերցրի գիրքը և գրնացի նրանց տուն:

Ցույց տվեցի: Վերցրեց, նայեց, թերթեց մի քիչ, ասաց.

— Լատինատառ թուրքերեն քիչ եմ կարդացել. սովորել եմ արաբատառ:

Ապա ներածական հոդվածից մի քանի տող կարդաց. ծիծաղեց:

— Լեզուն որքան են փոխել, մեր ժամանակվա թուրքերենի

կեսից ավելին արաբերեն բառեր էին, որ քչերն էին հասկանում,

— ասաց:

Մեկ-մեկ շուռ էր տալիս էջերը և նկարների տակ կարդում անունները՝ մեծ մասը իրեն ծանոթ մարդիկ, հին ընկերներ:

Գովեց հեղինակին, ասաց, թե անկողմնակալ մարդ է երեվում, չի մեղանչել փաստերի դեմ: Գրքի մի էջում տպագրված էին Ադամյանի ու Մարի Նվարդի լուսանկարները, հաջորդ էջում՝ երկու այլ հայ դերասանուհիների: Տեսավ Սիրանուշին՝ Տոսկայի դերում: Հասավ սահմանադրական շրջանին, ավելի ուշադիր նայեց, ավելի դանդաղ շուռ տվեց էջերը:

Տեսավ հորիզոնական տպված մի լուսանկար: Թեքեց: Նայեց, երկար նայեց. այս անգամ մտքում կարդաց մակագրությունը: Կնճռոտեց ճակատը: Դա մի խմբանկար էր, որտեղ բոլոր դերասանուհիները հայեր էին, իսկ դերասանների մեջ կային հայեր էլ, թուրքեր էլ:

Նայեց, նայեց, հանկարծ մոլեգնորեն դեն շարտեց գիրքը, ոտի կանգնեց և գրեթե բղավելով ասաց.

— Ինձ մեղադրում էիր, թե առաջին կնոջս նկատմամբ անարդարացի եմ վարվել. չէիր հավատում, չէիր ուզում հավատալ: Եթե չլիներ ընտանեկան այդ փոթորիկը, կմնայի Պոլսում, շատ ծրագրեր ունեի, նոր թատերախումբ էի կազմել. ամեն, ամեն ինչ թողի ու հեռացա այդ երկրից: Նայիր, նայիր, թե ում կողքին է նստել քո այդ բարեպաշտ միանձնուհին:

Բառեր չէի գտնում նրան հանդարտեցնելու համար, թեև ոչ մի տարօրինակ բան չէի տեսնում. որևէ դերասանուհի կարող էր նկարվել իր խմբի մարդկանց հետ:

Բայց որքա՞ն վղջացի իմ անխոհեմ արարքի համար:

«Հետադարձ հայացքից» հետո Փափազյանը գրեց դիմանկարների մի շարք՝ 1915 թ. փոփած և մի քանի վերապրած մտավորականների մասին, որոնց անձամբ ծանոթ էր Պոլսից: Դա յուրահատուկ հուշագրություն էր՝ այդ մարդկանց գրական, հասարակական դերի բնութագրմամբ:

Ռուբեն Չարյանը մեծ դեր է կատարել այդ գրքի գաղափարը Փափազյանին ներշնչելու գործում և ինքն էլ մոտիկից հետևում էր ընթացքին: Մի օր նրա ձեռքին տեսա նոր գրքի մեքենագրված էջերը, ցույց տվեց ուրախ-ուրախ և ասաց.

— Արդեն վերջացնելու վրա է, շուտով կավարտի: Շատ է ոգևորված:

«Հետադարձ հայացքը» այնպիսի մեծ ընդունելություն էր գտել ամենուր, որ ճանապարհ էր հարթել նաև այս մեկի համար: Ռուբենը ասաց, թե գուցե Պետհրատը ինձ ուղարկի գրախոսելու:

Մի քանի օր անց Պետհրատից ստացա Փափազյանի գրքի մեքենագրված օրինակը, հետն էլ պաշտոնական գրություն, որով առաջարկվում էր գրախոսել:

Կարդացի երկու անգամ. նախ՝ հաճույքի համար, ապա արդեն ըստ էության:

Հիանալի գիրք էր: Այստեղ էլ, ինչպես «Հետադարձ հայացքում», ամենից առաջ ի հայտ էր եկել արձակի խոշոր վարպետը, դեմքերն ու դեպքերը վրձնելու նրա կարողությունը. աչքի էր ընկնում հյութեղ ոճը, ճոխ լեզուն, պատկերավոր մտածողությունը, վարակող քնարականությունը, որոնցով տոգորված էին մասնավորապես մի քանի գլուխներ:

Բայց գրքում կային, ինչպես հաճախ էր լինում նրա մոտ, փաստական անթիվ վրիպումներ: Ունեի էական դիտողություններ: Ինչպե՞ս վարվել: Այլ բան էր տեղն ու տեղը, գլուխ գլխի նստել ու պրուցել, նույնիսկ վիճել, այլ բան՝ գրավոր ներկայացնել Պետիրատին: Երբեք պիտի չուլելի, որ նա ինձնից դժգոհ մնար: Ռուբենից խորհուրդ հարցրի: Առաջարկեց գրել բոլորը, բայց նախ խոսել Փափապյանի հետ:

Այդպես էլ եղավ: Հանդիպեցինք և ծանոթացրի դիտողություններս: Փաստական սխալներին վերաբերող մասը ընդունեց և համարեց օգտակար գրքի համար: Դրանք մեծ մասամբ պարզ մոռացության արդյունք վրիպումներ էին, թերթերի, մարդկանց անունների անճշտություններ, տարեթվերի շփոթություններ:

Հանգիստ լսեց նաև ընդհանուր դիտողություններս: Որոշ դիմանկարներում կենցաղային մանրադեպերը այնքան էին ճշնշում նյութին, որ վնասում էին տվյալ գրողի մեծության ընկալմանը: Այդպես էին Ե. Օտյանին, Լ. Բաշապյանին և մանավանդ Կոմիտասին նվիրված գլուխները: Պատմվող դեպքերի պզակի մասը տիպական չէին այդ մարդկանց համար:

— Կենցաղային անհամուլիչ պատմությունները, — ասացի անհամարձակ, — աղարտել են այդ պայծառ մարդկանց դիմագիծը:

— Ուրե՞մն, — հարցրեց Փափապյանը:

— Ուրեմն, — պատասխանեցի, — հանեցեք ձեր գրքից գեթ Կոմիտասին նվիրված գլուխը:

Մի քանի րոպե լուռ դիտում էր ինձ, դիտում էր, բայց դժվար չէր գուշակել, որ երևակայությամբ Կոմիտասի հետ էր:

Պետք էր անցնել այլ գրողի: Առաջարկեցի խմբագրել Ե. Օտ-

յանին ու Լ. Բաշալյանին նվիրված գլուխները: Նույնիսկ հնարավոր է դրանք էլ հանել, գիրքը չի տուժի, երակացրի:

Երբ վերջացրի ասելիքս, հարցրի՝ պե՞տք էր բոլոր դիտողությունները գրել, քանի որ մեծ մասը փոքր անձտություններ էին և տեղն ու տեղը հնարավոր էր ուղղել:

— Չէ՛, — ասաց, — գրիր, որ հիշենք:

Այդպես բաժանվեցինք: Ինձ թվաց, թե շատ էլ գոհ չմնացիմ դիտողություններից: Հանդիպման սկզբում շատ ավելի սիրալիր էր, քան վերջում:

Մեծ եղավ վարմանքս, երբ մի օր Ռուբենը ասաց, թե Պետհրատը առաջարկելու է, որ «Սրտիս պարտքը» գրքի համար առաջաբան գրեմ: Անշուշտ այդ միտքն էլ Չարյանը հուշած պիտի լիներ Պետհրատին, այն էլ Փափալյանի համաձայնությամբ:

— Գրիր, — ասաց Ռուբենը, — մանավանդ, որ դիտողություններդ հաշվի են առնված և գիրքը հիմա ավելի սրտովդ պիտի լինի:

— Իսկ Կոմիտա՞սը, — հարցրի:

— Հանված է:

Թեթևություն վգացի:

Գրեցի առաջաբանը: Գիրքը տպագրվեց:

1959 թվականի աշնանն էր կարծեմ, որ Չարյանի գրասեղանին տեսա «Սրտիս պարտքի» ազդանմուշային օրինակը: Վերցրի ու նայեցի: Կոմիտասը հանված էր, Օտյանը բավականաչափ կրճատված, իսկ Բաշալյանը մնացել էր նույնը: Ափսոս, որ այդպես էր վարվել: Այժմ էլ կարծում եմ, որ գրքի ամենաթույլ գլուխները դրանք են:

Մի օր Անահիտը զանգահարեց և ասաց, թե կարող եմ այ-

ցելել իրենց և ստանալ «Սրտիս պարտքը» գրքից մի օրինակ:

— Մակագրվա՞ծ:

— Մակագրվա՞ծ, այն էլ ի՞նչ մակագրություն. եկուր, կըկարդաս:

Ստացա գիրքը և կարդացի մակագրությունը: Այդպիսի մակագրություն միայն Փափապյանը կարող էր դնել: Եթե այն պարունակեր միայն ինձ շոյող բառեր, անշուշտ պիտի չհամարձակվեի այստեղ մեջ բերել, բայց քանի որ ամենից առաջ երեվում էր գրող Փափապյանն իր ինքնատիպ մտածողությամբ ու պատկերավոր ոճով, մյուս կողմից՝ քանի որ 8 տողից բաղկացած մակագրության 4 տողը հենց գրքի հիանալի գնահատումն է, ինձ թույլ եմ տալիս ներկայացնելու ընթերցողներին:

«Սիրելի Գառնիկս,

Ափսոսանքի աղաղակ մըն է այս գիրքը,

Որի փողահարը դուն եղար,

Ամոռաց ցավի ուխտագնացություն մը,

Որի լուսարարը դուն եղար,

Անթաղ շիրիմների համար պատարագ մը,

Որի ժամկոչը դուն եղար,

Դառն արցունքների անձրև մը,

Որի ավազանը դուն եղար:

Քեզի ուրեմն այս գիրքը, սիրելի Գառնիկ, որովհետև ես զգացի, դու՞ն տեսար: Վահրամ Փափապյան: 1. 12. 59»:

«Դուն տեսար» բառերով Փափապյանը ակնարկում էր այն իրողությունը, որ ինքը մեծ եղեռնի մասին լսել ու զգացել էր, իսկ ես եղել էի կոտորածների ճամփին, ականատես անլուր խոշտանգումների, գրել էի «Մղձավանջային օրեր» հուշագրական վեպը, որը կարդացել էր Փափապյանը և առաջին էջում թողել դարձյալ ինքնատիպ մակագրություն:

Բայց «Սրտիս պարտքի» մակագրությունը ուրիշ էր: Ու հիմա, իմ բազմահարուստ գրադարանի իրական վարդը այս փոքրիկ գրքույկն է, այդքան մեծախորհուրդ մակագրությամբ:

### ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ՁՐՈՒՅՑ

Փափապյանի հետ իմ ունեցած բազում հանդիպումներից ոչ մեկը այնքան մանրամասնորեն գրի չեմ առել, որքան այս մեկը, և դա այն պատճառով, որ վրույցը տեղի էր ունեցել նախօրոք իմ կողմից մշակված հարցերի շուրջ և նրա հաղորդած փաստերը ուսում էի օգտագործել «Արևմտահայ թատրոնի պատմության» 3-րդ հատորում:

Կարդացել էի նրա «Աշխարհի թատրոններում» ռուսերեն ինքնակենսագրական գիրքը և դժգոհ էի մնացել: Այնտեղ չէի գտել արևմտահայ թատրոնի ամենափայլուն շրջանի՝ սահմանադրական տարիների թեկուզ համառոտ պատկերը: Կարծեք այդպիսի թատրոն գոյություն էլ չէր ունեցել, և այդ այն դեպքում, երբ այդ շրջանի արևմտահայ թատրոնի վարագույրը բաց անողը հենց ինքն էր եղել:

«Հետադարձ հայացքում» այդ վանցառումը վերացել էր, բայց այստեղ էլ կային ուրիշ հակասություններ, կապված թուրքական թատրոնին: Այժմ ինձ հետաքրքրում էր նաև այս հարցը: Թուրքական ո՞ր թատերախմբերում էր խաղացել, ինչ դերեր էր կատարել, ովքեր էին եղել խաղընկերները:

Ահա նման հարցերով դիմեցի նրան:

— Վահրամ Գամերովիչ, — ասացի, — ինչպես ձեզ հայտնել եմ, գրում եմ արևմտահայ թատրոնի պատմությունը: Որոշ խըն-

դիրների մասին խոսել ենք, անգամ գրավոր պատասխանել եք իմ մի քանի հարցումներին: Մինչև այժմ առիթ չենք ունեցել անդրադառնալու մի շատ կարևոր խնդրի:

— Ո՞րն է այդ խնդիրը:

— «Աշխարհի թատրոններում» գրքում և այլուր բավակա- նաչափ խոսում եք թուրքական թատրոնի հետ ունեցած ձեր կապի մասին, թվարկում եք պիեսներ, որոնցում խաղացել եք թուրքերեն, սակայն մամուլում դրանց անդրադարձը քիչ է. ըն- դամենը 1-2 ներկայացման հիշատակություն եմ գտել: Խնդրում եմ պատմել ձեր կապերի մասին՝ թուրքական թատրոնի և նրա գործիչների հետ, մասնավորապես Ռեշատ Ռըտվանի, Բյուրհա- նետտինի, Մուհսին Էրթուղրուլի:

Շփեց ճակատը, հիշողություններն ամփոփելու ճիգ գործադ- րեց, ապա ասաց.

— Երեքի հետ էլ լավ բարեկամ եմ եղել, թեև Բյուրհա- նետտինին չեմ սիրել: Մեծամիտ, ցուցամոլ, իր արվեստով էլ մյուսներից ցածր մարդ էր: Չգտում էր դասական գործերում հանդես գալ, սակայն Շեքսպիրում ամենևին հաջողություն չու- նեցավ: Նրա գլուխ-գործոցը մնաց Նապոլեոնը: Կրթությունը Փարիզում էր ստացել, բայց այնտեղից ավելի շատ սիրարկած- ների պատմություններ էր բերել, քան բեմական գիտելիքներ կամ արվեստի ընկալում: Տարբեր էր Ռըտվանը, նույնպես եվ- րոպական կրթության տեր անձնավորություն, բայց ամբողջո- վին արվեստի մարդ, որ աննկարագրելի պոռոգությունների գը- նով ցանկանում էր թուրքական թատրոն հիմնել: Ինքը հիմնում էր, հետադեմ քաղաքագլուխ հայրը քանդում, մինչև որ հոր մա- հից ու օսմանյան սահմանադրության հռչակումից հետո հնա- րավորություն ունեցավ աշխատել առանց արգելքների: Նա շատ

մոտիկից հետևում էր հայ թատրոնի նվաճումներին, ավստում, որ իրեն չի հաջողվում թուրք կնոջը բեմ բարձրացնել, իսկ առանց դրան՝ ոչ մի խելամիտ մարդ չէր կարող պատկերացնել թուրքական ազգային թատրոն: Դիտում էր մեր բոլոր ներկայացումները, մոտ բարեկամներ ուներ հայերի մեջ: Ես էլ մոտ էի նրան:

— Իսկ Մուհսի՞նը:

— Օ՛, Մուհսինը,— ասաց ավելի վվարթանալով,— նա թուրքական թատրոնի իսկական ռահվիրան է: Նրանից առաջ եղածը նախապատրաստական շրջան պետք է համարել, քանի որ թատերախմբերը հայկական էին, դերասան-դերասանուհիները՝ հայ, ռեժիսորները՝ հայ, այն տառերը, որոնցով իրենց դերերը սովորում էին անգամ թուրք դերասանները՝ հայերեն, թատրոնի պատերից ներս տիրող ոգին՝ հայկական: Նույնիսկ թուրք դրամատուրգները, հաշվի առնելով այս բոլորը, խուսափում էին իրենց պիեսներում հակահայկական գաղափարներ արծարծելուց: Գրվել են անգամ հայ կյանքը արտացոլող գործեր: Ինձ առաջարկվեց խաղալ նման մի պիեսում, որը կոչվում էր «Անձնագրի թուրք սպան»: Այնտեղ թուրք սպան ապատում է 1895 թվականի կոտորածներին զոհ դարձող մի հայ ընտանիք:

— Խաղացի՞ք:

— Ոչ: Ես պիտի կատարեի հարյուրապետ սպայի դերը: Ծանոթացա պիեսին, ինձ չգրավեց. դրամատիկական տեսակետից թույլ գործ էր. մի քանի ապատասիրական ճառեր չէին փրկի պիեսը: Շեքսպիրից հետո նման անցում դժվար էր: Հիմա՝ Մուհսինի մասին: Մուհսինը ինձնից 4-5 տարով փոքր էր: Նրա ուժը այն ժամանակ դեռ չէր երևում, նոր-նոր էր բեմական աս-

պարեզ մտնում: Նա ետպատերազմյան տարիներին էր, որ իր ուսերի վրա վերցրեց թուրք ազգային թատրոնի կազմակերպման դժվարին գործը:

— Միասին խաղացե՞լ եք:

— Այո, 1911 թվականին, ես՝ Օթելլո, նա՝ Յագո, նաև՝ ես Համլետ, նա՝ Լաերտ, երբ բեմադրվեց թուրքերեն լեզվով առաջին «Համլետը»: Նա դրանից առաջ տեսել էր Սիրանուշի Համլետը, որտեղ Լաերտը ես էի: Բայց, կրկնում եմ, նրա բուն գործունեությունը ծավալվեց պատերազմից հետո: Ես նրա հետ շատ երկար կրույցներ եմ ունեցել: Լայնախոհ, վարճացած, ամբողջովին արվեստին նվիրված մարդ էր: Նա էլ Ռլտվանի նըման, գտնում էր, որ թուրքական ազգային թատրոնի վարճացման առաջին նախապայմաններից մեկը թուրք կանանց թատրոնի հետ կապելն է, թուրք դերասանուհիներ պատրաստելը: Կարծեմ նա էր, որ իր ազգականուհիներից մեկին համույեց առաջին անգամ բեմ բարձրանալ: Անունը չեմ հիշում, բայց նա հանդիսացավ թուրք առաջին դերասանուհին: Մուհսինը ինձ ասել է, թե երբ 1918 թ. հայտարարվել է թուրքական ազգային թատրոնի համար ուժեր պատրաստող դասընթացների ընդունելություն, դիմողների մեջ չի եղել և ոչ մի թուրք: Մեծ մասը եղել են հայեր, մյուսները՝ բուլղարներ և հույներ:

— Հետագայում հանդիպե՞լ եք:

— Այո՛, Մոսկվայում: Այդ մարդը ապրեց որոնումների ուշագրավ շրջան: Եղավ Փարիզում, ուսումնասիրեց ֆրանսիական բեմական արվեստը, սովորեց Մյունե-Սուլիից, եղավ Գերմանիայում, Ավստրիայում և այլուր, բայց ամենից ավելի խանդավառվեց ռուսական թատրոնով: 1925-1927 թթ. ապրեց Մոսկվայում, հետևեց Ստանիսլավսկու, Մեյերհոլդի արվեստին: Հե-

տագայում մեկ էլ եղավ 1934 թվականին: Հիացած էր Վահի-  
տանգովի թատրոնով, մասնավորապես «Արքայադուստր Թու-  
րանդոտով», որը, ասում էր, թե պիտի բեմադրի Պոլսում կամ  
Անկարայում:

— Իսկ ի՞նչ վերաբերմունք ուներ դեպի ռուսական դրա-  
մատուրգիան:

— Հիացած էր Տոլստոյով, Չեխովով և Գոգոլով:

— Նամակագրական կապ չե՞ք ունեցել:

— Սրտառուչ մի նամակ է գրել ինձ, որին, կարծեմ, ժամա-  
նակ չեմ ունեցել պատասխանելու: Նամակներ գրել շատ չեմ  
սիրում:

Սրանով վերջացավ մեր պրույցը Փափապյանի հետ թուրքա-  
կան թատրոնի մասին: Վերադառնալով տուն, իսկույն մեքենա-  
գրեցի նրա ասածները, բայց մեծ մասը չօգտագործեցի, նախ  
այն պատճառով, որ բերված փաստերը չէին վերաբերվում ինձ  
պբաղեցնող ժամանակաշրջանին, հետո՝ այլ բան է բանավոր  
հուշ լսելը, այլ բան՝ դրանք որպես վավերական եղելություն գի-  
տական աշխատություններում օգտագործելը: Հնարավոր էր,  
որ որոշ փաստեր Փափապյանը շփոթած, մոռացած լիներ:

Վերջին տարիներս սակայն, երբ մոտիկից ծանոթացա թուրք  
թատրոնին վերաբերող մի քանի աշխատությունների, մասնա-  
վորապես Ռեֆիկ Ահմեդի, Մեթին Անդի և այլոց գրքերին, ինչ-  
պես և Մուհսին Էրթուղրուլին նվիրված ալբոմների, պզացի, որ  
սխալվել եմ. Փափապյանը ոչ միայն չէր չափազանցել, այլ եղել  
էր շատ համեստ, ակնարկ անգամ չէր արել, որ ինքը ապրել է  
Մուհսինի վրա, մինչդեռ Մուհսինը մի հարցապրույցի ժամանակ  
ասել է. «Վահրամ Փափապյանից էլ շատ բան սովորեցի: Փա-  
րիպ մեկնելու գաղափարը Վահրամ Փափապյանը մոցրեց ուղե-

ղըս: Օդեոնի թատրոնում նույն սենյակն էինք վբաղեցնում: Մի օր ասաց. այստեղ տեսածներիցդ որևէ բան չես կարող սովորել, Փարիզ գնա, այնտեղ մնա մինչև սովորես թատերական արվեստը: Չաշխատես շուտ վերադառնալ»:

Մուխսինը այլ բաներ էլ է պատմում Փափապյանի ու իր մըտերմության մասին: Նրա հոբեյանական արբումում տպագրված նյութերից երևում է, որ Անկարայում և Պոլսում բեմադրել է Լ. Տոլստոյի, Չեխովի, Գոգոլի և մի քանի այլ հեղինակների գործերը, ինչպես և Շեքսպիրի գրեթե բոլոր նշանավոր պիեսները, նաև Շիլլերից, Իբսենից, Գոլդոնիից, Հաուպտմանից, Օսկար Ուայլդից, Կարլո Գոցցիից և այլն:

#### ՓԱՓԱՉՅԱՆԻ ԲԵՄԱԿԱՆ ՉԳԵՍՆԵՐԸ

1961 թվականի նոյեմբերի 3—ին մի նոր նամակ ստացա Վահրամ Փափապյանից: Առաջարկում էր թանգարանին հանձնել իր արխիվի մնացած մասը՝ հիմնականում բեմական զգեստներ և իրեր: Ներկայացնում էր առաջարկվող նյութերի մանրամասն ցուցակը, որ, ըստ երևույթին, կազմել էր Անահիտը՝ նրա օգնությամբ:

Յուզակազրումը կատարվել էր իմ առաջարկով, երբ խոսել էր բեմական զգեստները թանգարանին տալու մասին, խնդրել էի մեկ-մեկ գրել, թե ինչ զգեստներ են դրանք: Այդ էր կատարել: Չոր ու ցամաք թվարկում չէր, այլ՝ կատակաբանությամբ լցված ուրախ նամակ: Այնտեղ կային յուրաքանչյուր իրի ձեռք բերման մասին արժեքավոր տեղեկություններ, որոնք պիտի հետաքրքրեին և՛ պատմաբանին, և՛ հնագետին, և՛ արվեստա-

գետին, թեև դժվար էր որոշել սահմանը իրականի և երևակայականի:

Նախ թվարկում էր Լիր Արքայի զգեստները, ապա, ավելի մանրամասնորեն Օթելլոյի զգեստներն ու իրերը՝ իր մասնավոր ցուցումներով կարված մի ներքնազգեստ՝ շնչառությունը կանոնավորելու, ինչպես և ձայնը բամբ ու թավջային դարձնելու համար, աֆրիկյան բեդվինի զգեստ, Դարաբլուսի գոտի, մի մաշլաղ, ուրույն եմենիներ, այսինքն՝ մուճակներ, վարտիք և շապիկ, մի ջեմբյե՝ փորագրված և փղոսկրյա դասակով, պատրաստված 16-րդ դարում, արծաթյա մի հին յաթաղան՝ վրան արաբերեն տառեր, դարձյալ 16-րդ դարից, որը իբր թե պատկանել է ենիչերիների ադա Մեհմեդ Սադուրին, և այլ իրեր:

Թվարկելով այս բոլորը մեկ-մեկ, ասում էր, թե դրանցից յուրաքանչյուրը երբ, ինչ պայմաններում է իր ձեռքը անցել կամ ումից է նվեր ստացել: Մեկը ինչ-որ ալժիրցի պինվորական էր նվիրել Փարիզում իր Օթելլոն տեսնելուց հետո, մյուսը 1909 թ. սուլթանի պալատում էին նրան նվիրել և այսպես շատ հավաստիացումներ:

Նամակում թվարկվում էին նաև Համլետի զգեստներն ու իրերը, հիշատակվում տասնյակ ալբոմներ, նամակներ, ուղերձներ, հեռագրեր, մի ուսումնասիրություն՝ հետևյալ բացատրությամբ՝ «Ինձ ժամանակակից, ինչպես և ինձանից առաջ ու անցած բոլոր աշխարհահռչակ Օթելլոների խաղարկության և ըմբռնման շուրջը»:

Կատակաբանությամբ սկավոզ նամակը նույն ոճով էլ ավարտվում էր, հետևյալ տողերով. «Քույրուհիս, եթե այս բոլորը քիչ է, կրնամ իբրև վերադիր հին փապուճներս (մուճակներ) ալ ավելացնել, միայն թե մահվանիցս հետո, որովհետև

այս սովորյալ գնդում ամեն բանի վայ նաչար հասնաձայն եմ,  
նույնիսկ առանց վարտիքի ման գալու, բայց բոբիկ չեմ կարող  
պտըտիլ... Ներիր. **Քո Վահրամ**»:

Փափազյանի կապնած այս ցուցակ-նամակը կարդացողը ե-  
րևակայությամբ կարող էր տեղափոխվել կախարդական մի աշ-  
խարհ՝ Ալժիր, Թունիս, Մավրիտանիա, Թուրքիա, Ֆրանսիա և  
այլն, այն էլ 300 տարվա մի ժամանակաշրջանով:

Փափազյանի առաջարկած նյութերը մեծ գանձ էր մեր թան-  
գարանը հարստացնող և չգիտեմ՝ թե որևէ գումար, որքան էլ  
այն մեծ լիներ, կարո՞ղ էր ճշմարիտ արժեք համարվել նման մի  
հավաքայուտ հավաքածոյի: Իրականում դա արժեքավոր մի  
նվեր էր թանգարանին: Ադամյանից հետո Փափազյանը երկրորդ  
խոշոր դերասանն էր, որի գլխավոր դերերի բեմական զգեստ-  
ները պիտի ունենայինք՝ այն էլ մանրամասն բացատրությամբ,  
ներկայացվող իրերի յուրահատուկ «կենսագրությամբ», իսկ դա  
հեշտացնելու էր արխիվի գիտական մշակման գործը և աստղծ  
կարող էր դառնալ ապագա հետապոստողների համար:

Բայց՝ բացատրություններից ո՞րն էր իրականը, որը՝ երևա-  
կայականը, կատակով ատվածը, մանավանդ կատակային մասը,  
ինչպես երևաց իմ նկարագրությունից, բավական շատ էր:

Անհրաժեշտ էր այս մասին խոսել իր հետ՝ նախքան արխի-  
վի մշակումը՝ հավանական թյուրիմացությունները կանխելու  
համար:

Հանդիպեցինք: Շնորհակալություն հայտնեցի ցուցակի հա-  
մար, շեշտեցի նրա տված բացատրությունների օգտակարու-  
թյունը.— էլ որտեղի՞ց պիտի իմանայինք այդ բոլորը, օրինակ,  
Ադամյանի բեմական զգեստների և իրերի մասին նման տեղե-  
կություններ չունենք և չգիտենք, թե որը երբ, ինչ պայմաննե-  
րում և որտեղ է պատրաստվել,— ասացի:

Ենթադրում էի, թե առանց իմ ասելու էլ պիտի ճշտի որոշ քան, ասի՝ թե որը իրական է, որը՝ կատակ: Ամենևին կարևորություն չտվեց: Հարկադրված եղա խոսք բաց անել ինձ վբաղեցնող խնդրի մասին: Ասացի, թե արդյո՞ք 300 տարվա հնություն ունեին Օթելլոյի դաշույնն ու ջեմբյեն: Պատմական թանգարանում նման իրերի տարիքը որոշելը շատ դժվար է լինում:

— Կասկածո՞ւմ եք, — ասաց:

— Ոչ, — բայց մենք պարտավոր ենք վզույշ լինել, չէ՞ որ գիտական մշակման նպատակն է օգնել ապագա բանասերներին ու հետապոստողներին:

— Ինձ այդպես են ասել, ես էլ այդպես գրել եմ. դուք կարող եք հնագետների միջոցով ստուգել, մանավանդ, որ այդ իրերից մի քանիսը գրություններ ունեն:

Բռնապետիկ սկսված վրույցը բռնապետիկ էլ շարունակվեց: Ոչ նա ինձ գոհացնող որևէ բացատրություն տվեց, ոչ էլ ես կարողացա խոսել այն բոլոր կասկածելի բաների մասին, որ մշտքումս ունեի: Մնում էր մեր ուժերով որոշել նրա վկայություններից մի քանիսի իսկությունը:

Նկատելով, որ տրամադիր չէ նոր բան ասելու, փոխեցի խոսակցության նյութը: Հարցրի, թե Լենինգրադում մնո՞ւմ են արխիվային այլ նյութեր, թե բոլորը ցուցակագրվել էին:

— Կան, քեզ ամենից շատ հետաքրքրող նյութերը դեռ մընում են, — ասաց ծիծաղելով, որ ինքնին ապացույց էր, թե կատակում է:

— Օրինակ, — հարցրի:

— Օրինակ, Ռոմանոս Սետեֆճյանի պիեսներից մի քանիսը, որոնցով հետաքրքրվում էիր քո գրելիք պատմության համար:

Դրանք 1908 թ. տրամադրել էին ինձ, որպեսզի ընտրեմ և մեկն ու մեկը ներկայացնեմ, բայց չհավանեցի. մնացին ինձ մոտ:

— Հապա ինչո՞ւ չեք հիշատակել ձեր ցուցակում:

— Կբերեմ, երբ Լենինգրադ գնամ, — ասաց ու փակեց զըրույցը:

Չէի տարակուսում, որ այս բոլորը կատակ էր: Սետեֆճյանի պիեսներից ոչ մեկը նրա մոտ չէր: հաճախ էր այդպիսի խոստումներ տվել:

## ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԵՐԵԿՈ

1962 թվականի մայիսի 2-ին Վահրամ Փափապյանին տիկնոջ հետ հրավիրել էի մեր տուն՝ ճաշի: Եկել էին նաև մեկ-երկու բարեկամներ, որոնք ցանկանում էին մոտիկից ծանոթանալ նրան:

Փափապյանը ժուժկալ էր խմելիս: Հապիվ երկու բաժակ խըմեց ամբողջ ճաշի ընթացքում: Մի բաժակ սուրճն էլ նրա առաջ դրված մնաց մոտ կես ժամ: Խոսում էր, պատում, մի ունայ առնում, նորից խոսում, նորից սուրճի բաժակը մոտեցնում շրթներին: Ավելի շատ ծխում էր: Չնայած սովորաբար «Աստրա» էր ծխում, այդ օրը մոտը «Արմենիա» էր և համարյա տուփը դատարկեց:

Սեղանի շուրջ մեր զրույցի հիմնական նյութը մնաց թուրք կնոջ ստրկական վիճակը: Երկար խոսեց հարեմական կյանքի մասին: Դա, ասաց, բնության դեմ մեծ մեղանշում է: Մուսուլմանական աշխարհում մեկը կարող է 10-15, անգամ 100 կին ունենալ, իսկ հավարավոր առողջ երիտասարդներ հնարավորություն չեն ունենում որևէ կնոջ դեմք տեսնել:

Ա՛րդեն գիտեի, որ այս նյութը Փափապյանին շատ էր վա-  
ղեցրել. իր ստեղծագործություններում նույնպես տասնյակ էջեր  
էր նվիրել հարեմի հետ կապված դեպքերի, ուստի չէի փորձում  
վրույցի բնույթը փոխել, թեև ուզում էի, որ խոսեր թատրոնի  
հետ կապված խնդիրների մասին: Նույնիսկ, երբ սկսեց պատ-  
մել Պոլսի մասին, դարձյալ շնորհադարձավ հարեմին: Ասաց, թե  
առհասարակ հարեմական կյանքը յուրահատուկ կնիք է դրել ոչ  
միայն տղամարդկանց ու կանանց հոգեբանության, նրանց բա-  
րոյական նկարագրի ու ըմբռնումների, այլև բնակավայրերի, քա-  
ղաքների ընդհանուր նկարագրի վրա: Դրա արտահայտություն-  
ներից մեկն է հարեմի կանանց հանգստի ու հաճույքի հետ  
կապված միջոցառումներին հատուկ ուշադրություն դարձնելը,  
ծաղկանոցների, ջրավապանների, վարդաշատ պարտեպների  
առատությունը քաղաքներում, մասնավորապես մայրաքաղաք  
Իստանբուլում: Թուրքական գրեթե բոլոր տներում ընդունված  
է ծաղկանոցներ աճեցնել, վարդի նկատմամբ բացառիկ սերն էլ  
գալիս է այդ կենցաղից:

Պատմեց մի շարք փաշաների ամառանոցային սքանչելի  
պալատների մասին, Սուլթան Աբդուլ Համիդի պալատի՝ Յըլդը-  
պի երապային պարտեպների ու սվարձության վայրերի մասին,  
պատմեց դրվագներ Համիդի կանանոցից, ասաց թե սահմանա-  
դրությունից հետո Պոլիս այցելելիս, առաջին ցանկությունը եղել  
է մոտիկից տեսնել հապարումեկ գիշերների պատմությունների  
ջղարշով ծածկված Յըլդըպը: Տեսնել այն խորհրդավոր որջը,  
որտեղ դարբնվում էին աշխարհի ամենաահռելի ոճիրները և որ-  
տեղ հարեմի 300-ից ավելի կանայք բարոյական ստրկության  
մեջ էին ապրել մինչև սուլթանի գահընկեց լինելը, երբ նրան  
միայն 11 կին էր նվեր տրվել, իսկ մյուսները ապատություն էին

ստացել: Նկարագրեց Յըլդըլի մեծ պրոսայգին, այն լճակը, որտեղ սուլթանը սուլորոություն ուներ՝ նավակով պրոսնել ամենասիրուն աղջիկների հետ, անձնատուր՝ կրքերի մարած պեկոծումներին:

Հիշեց ուշագրավ մանրադեպեր թուրք փաշաների կանանց ու քրիստոնյա երիտասարդների սիրային կապերի մասին: Ասաց, թե մինչև 19-րդ դարի կեսերը, անգամ ավելի ուշ, օտար կրոնի պատկանող երիտասարդների հետ կենակցող թուրք կինը պատժվում էր մահվամբ. հիշատակեց մի դեպք 17-րդ դարից, մի դեպք էլ՝ 18-րդ դարից, որոնց մասին կարդացել էր ֆրանսերեն ինչ-որ գրքում, նվիրված Թուրքիային:

— Բայց, — ասաց, — հակառակ այս վայրագ միջոցներին, թուրք կանայք, մասնավորապես տարեց փաշաների հարեմների երիտասարդ աղջիկները, ամեն միջոցի դիմում էին հայ, հույն, հրեա երիտասարդների հետ գաղտնի կապեր հաստատելու համար, աչք առնելով անգամ մահվան պատժի անխուսափելիությունը:

Փափապանը և տիկին Անահիտը այդ օրը երկար նստեցին, սեղանակիցները հափշտակությամբ էին լսում այս պատմությունները, որոնք բոլորիս տեղափոխում էին Իստանբուլի խորհրդավոր անկյունները: Ժամը 11-ի մոտ հանկարծ ասաց.

— Մի քիչ էլ գրադարանդ նայենք: Տեսնենք այսօր ինչ գիրք պիտի տաս կարդալու. գիշերները քունս փախչում է, զըրքեր եմ կարդում:

Գնացինք աշխատասենյակս: Դարձյալ հետաքրքրությամբ դիտեց վենետիկյան գրքերը՝ «Պատմություն գաղիացվոց», «Պատմություն օսմանյանց» և այլն: — Սրանք որպես դասագիրք օգտագործել ենք ուսանող ժամանակ, հաճույքով կարդացել եմ

նան այս մեկը,— ասաց թերթելով Քսենոփոնի «Կյուրոսի խրատու պատմությունքը», բայց թարգմանությունը վիջում է թե՛ Բագրատունու թարգմանություններին, և թե՛ Եղիա Թումաճանի:

Ուզում էր գրաբար մի գիրք վերցնել, երբ տեսավ Ղուրանը: Իսկույն վերցրեց ու ասաց.

— Օ՛, Ղուրան ունե՞ս: Ո՞ւմ թարգմանությունն է:

— Լևոն Լարենցի: Ասում են Աբրահամ Ամիրխանյանի թարգմանությունը ավելի հարապատ է, բայց չեմ տեսել: Սա էլ հաճույքով կարդացվում է, ունի ճոխ ծանոթագրություններ:

— Լսել եմ Լարենցի թարգմանության մասին, բայց ծանոթ չեմ, ես կարդացել եմ ֆրանսերեն թարգմանությունը: Լավ գիրք է: Ղուրանի արժեքը նրա ընտիր լեզվի և բանաստեղծական վառ երևակայության մեջ է. պետք է հաշվի առնել, թե երբ է գրված: Կրկին պիտի կարդամ: Դրեց սեղանին, նստեց և հանկարծ ասաց.

— Հարեմը լավ հասկանալու համար էլ պետք է Ղուրան կարդալ:

Մի պահ մտածեց, ձեռքը ճակատին տարավ, շեշտակի նայեց ինձ ու շարունակեց.

— Իսկ դու գիտե՞ս որ ես էլ մեկ շաբաթով ընկել եմ հարեմ...

— Ոչ, բայց այդ մասին գրե՞լ եք ձեր հուշերում:

— Չեի կարող գրել, թեև իմ կյանքի անմոռանալի ու արկածալի դրվագներից մեկն է:

— Չե՞ք պատմի:

Մի պահ չպատասխանեց: Տատանվում էր: Այլա ասաց.

— Պատմեմ:

Պատմեց շատ հետաքրքիր մի սիրարկած, որի նմանը «Հա-

պարունեկ գիշերներում» կարելի է հանդիպել: Եղելությունն է, թե պճնապարդված դեպք, ինչպես «Հետադարձ հայացքի» որոշ դրվագներ, դժվարանում են ասել: Բայց եթե մասնակի հնարանք էլ պարունակի, ճշմարտապատում է, այնքան առցված միջավայրի շնչով և հատուկ այդ տարիներին, որ իրավամբ կարող էր տեղ գրավել նրա տայագրված հրաշալի հուշագրություններուն: Միաժամանակ չեն կասկածում, որ Փափապյանի հետ նման բան կարող էր պատահել օսմանյան սահմանադրության տարիներին, ինչպես պատահել է արևմտահայ գրողներից մեկի՝ Չիֆթե Սարաֆի հետ: Այդ պատմությունն էլ ես լսել էի Հրաչյա Աճառյանից:

## ԼԻՄՈՆԸ

— Քսաներկու տարեկան էի,— սկսեց Փափապյանը, խռպոտ ձայնին տալով դրամատիկական նկատելի երանգ և վառելով սիգարետը:— Օթելլոյի իրար հաշորդող ներկայացումներից հետո մի անգամ էլ նույնը խաղացինք թուրքերեն: Ես կատարեցի Օթելլոյի դերը, որպես Յագո խաղընկերս էր մի թուրք դերասան, որը նոր էր բեմական ասպարեզ ոտք դնում, անունն էր Քեմալ Էմին բեյ: Կասիոյի դերը կատարեց Ջեմալ բեյը, սրանց երկուսին էլ ես էի վարժեցրել և բեմական որոշ հույսեր ներշնչում էին: Ռոդրիգոյի դերն էլ վստահել էի ինձ տարեկից մի սիրուն ու անփորձ հույն երիտասարդի՝ Յանիին, որի միակ թերությունը թուրքերենի վատ առոգանությունն էր:

Խաղը լավ վերջացավ: Գիտեինք, որ վանդակների միջից, վարագույրների ետևից ներկայացումը դիտում էին թուրք փա-

շաների հարեմի կանայք, որոնց դեմքը արգելված էր տեսնել: Յերեկային ներկայացումները սովորաբար նրանց համար էին կազմակերպվում:

Ներկայացումից հետո ես և Յանին մտանք սրճարան՝ մեկ-մեկ բաժակ սուրճ խմելու ու հանգստանալու համար: Մի կողմից էլ կարծիքներ էինք փոխանակում դերակատարումների մասին, նոր ծրագրեր կազմում: Գովեցի նրա խաղը, վառ ապագա գուշակեցի: Յանիի դեմքը ճառագայթում էր ուրախությունից:

Փոքրիկ սրճարան էր, հալիվ 8—10 մարդու սպասարկող: Դեռ չէինք ավարտել մեր սուրճը, որ սպիտակազգեստ փոքրիկ մի աղջնակ թիթեռնիկի պես սահեց սեղանների արանքով, թըղթի մի կտոր նետեց մեկ ու անհայտացավ:

Վերցրինք թուղթը, թուրքերեն անվարժ ձեռագրով գրված էր. «Եթե ցանկանում եք այս գիշեր լինել ջեննաթի փերիների հետ, նստեցեք այն կառքը, որ սպասում է ձեզ սրճարանի մոտ, նեղ փողոցում: Միք վախենա, մենք ձեր բարեկամն ենք»:

Ուրեմն՝ նրանք մեզ ծանոթ էին. դերերո՞ւմ էին տեսել, թե կյանքում: Ժամանակ չկար նման բաների մասին մտածելու:

Նայեցինք միմյանց: Շատ էինք լսել նման արկածների մասին: Երկուսս էլ անփորձ էինք, անհամարձակ: Չեռքից ձեռք էր անցնում խորհրդավոր գրությունը:

— Ի՞նչ ես ասում, Յանի,— հարցրի վերջապես:

— Կյանքի հարց է,— ասաց Յանին այլալված,— գնալ կա, գալ կարող է չլինել:

— Բայց հրավերը շատ է հրապուրիչ:

— Շատ էլ վտանգավոր:

— Ես իմ կողմից ամեն վտանգ աչք կառնեի՝ գեթ մեկ գիշեր հարեմուս լինելու համար,— ասացի:

— Իսկ գիտես անշուշտ, որ հարեմից դուրս գալը հրաշքի պես բան է:

— Նույնքան հրաշք այնտեղ ընկնելը:

— Ուրե՞մն:

— Ուրեմն գնում ենք:

— Խե՞նթ ես:

— Ոչ, պարպապես արկածախնդիր:

Նորից լռեցինք: Յանին հիմա խոժոռել էր դեմքը, մատների արանքում տրորում էր թղթի կտորը: Հետո ձեռքը տարավ ճակատին: Դժվար չէր կարդալ նրա մտքերը՝ գնա՞լ, թե չգնալ. ո՞րն էր ավելի լավ. գնալ և վայելել չքնաղ մի թրքուհու հրապույրնե՞րը ու ենթարկվել մահվան սարսափին, թե՞ լինել պուշ, նստել այստեղ և տառապել մերժված հրապույրի մտապատկերով ու դատապարտել վախկոտությունը:

— Յանի,— ասացի բարձրաձայն,— ես գնում եմ:

— Ո՞ւր:

— Ուր հրավիրում են:

— Մոռացանք սուրճը,— ասաց Յանին և մի քանի կուս խմեց. ապա կանչեց զարսոնին, հաշիվը փակեց: Երևում էր, որ արդեն որոշել է հետևել ինձ: Երանի՜ չհետևեր: Իմ կյանքում ոչ մի արարք այնքան չի տառապեցրել ինձ. որքան այդ. եթե ես չլինեի՝ իմ բարի Յանին...

Լուռ դուրս եկանք: Նրբանցքի ծայրին կանգնած էր քառաձի կառքը: Փարթամ բեղերով, դաժան դեմքով ներքինի կառապանը, ճիպտոր ձեռքին, սպասում էր. կարծեք ակնթարթի բան

էր, որ սուրար կառքը: Մահական կառքի տպավորութիւն թողեց ինձ վրա:

Կարող էինք չնստել, անցնել կողքով: Սկզբում թվաց, թե կառապանը մեր վրա ուշադրութիւն չդարձրեց, բայց երբ ճիպոտի ծայրով նշան արեց նստելու, հասկացանք, որ մեզ էր սպասոււմ, թեև այնպես էլ չնայեց մեզ:

Յանին ետ անելով հաստ վարագույրի խոպոպները՝ մտավ ներս...

Հետևեցի նրան:

Չարմանալի բան՝ կառքը դատարկ էր: Ներքինին մեզ էր միայն տանում, իսկ թե ո՞ւր ինքը գիտեր:

Չորս ձիեր սկսեցին քառատրոփ հարվածել Պերայի Շիտակի սալահատակը, հարվածել համաչափ ու ներդաշնակ չխկոցով:

Փափապանը մի պահ ընդհատեց պատմութիւնը, սիգարետի փոշին թափ տվեց մոխրամանի մեջ, մի երկու շունչ քաշելով՝ հանգցրեց:

Թվաց, թե ուզում է կիսատ թողնել:

— Բայց կառքը շարժվեց, — ասացի:

— Այո՛, շարժվեց: Ես ու Յանին օրորվում էինք կառքի մեջ, բարձրանում, իջնում վսպանակալոր նստարանի վրա: Չէինք խոսում: Կարող եմ ասել՝ չէինք էլ մտածում: Կտրվել էինք աշխարհից:

Մի պահ ձիերի սնբակների համաչափ չխկոցը թուլացավ. սալահատակի քարերի ձայնը չէր լսվում: Վարագույրի արանքից դուրս նայեցի. կառքը անցնում էր ծառերի միջով. հսկա ծառերի ճյուղերը թմբկահարում էին կառքի տանիքը: Բավական տևեց այդ վիճակը: Հետո նորից շեշտվեցին ձիերի սնբակների

դոփյունները՝ չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ. այնքան ուժեղ, որ այլևս չէինք լսում կառապանի մտրակի շաչունը:

Ո՞ր փողոցներով էինք անցնում, ո՞ւր էինք հասել, կախարհական Պոլսի ո՞ր խորհրդավոր անկյունում էինք, չէինք կարող գուշակել: Ես ավելի անհանգիստ վիճակի մեջ էի, քան Յանին: Նա, թիկն տված կառքի կողերին, լուռ դիտում էր ինձ, կարծեք ասելով՝ — Ինչո՞ւ համաձայնվեցինք... Բայց արդյո՞ք մտածում էր:

Վերջապես կառքը կանգ առավ: Լսեցինք դարպասների բացվելը...

Ներքինին ետ տվեց վարագույրները և անձայն առաջարկեց իջնել:

Ոչինչ չէր երևում: Համատարած մթության մեջ տեսնում էինք միայն հսկա ապարանքի ստվերը, մռայլ, դաժան, ինչպես մեզ այդտեղ բերող ներքինիի դեմքն էր:

Հետո մեզ մտցրին շենքից ներս... ծառայողներից մեկը բռնեց ձեռքիցս, մութ-մութ անկյուններով առաջ տարավ, թեքվեցինք աջ, իջանք մի քանի աստիճան: Բաղնիքի գաղջ օդը, կանացի օձանելիքների բույրը փոխարարեց, թե գտնվում ենք հարեմի բաղնիքային բաժնում:

Բնապղաբար ետ նայեցի: Յանին չկար: Նրան տարել էին այլ ուղղությամբ: Ինձ մտցրին մարմարակերտ ջրավապանով, ոսկեպօծ ծորակներով պատրաստված մի բաղնիքից: Հանեցին շորերս: Երկու ներքինի տղամարդ լողացրին այնպիսի վարպետությամբ, ինչպես գիտեն լողացնել միայն արևելյան բաղնիքներում:

Օգնեցին շորերս հագնելուն: Ապա առաջնորդեցին մի սենյակ:

Երբ ներս մտա, ինձ թվաց, թե դատարկ է սենյակը, բայց շուտով աչքերս վարժվեցին առատ լույսին. տեսա բազմոցի վրա՝ բեռեպեղ ծածկոցի մեջ փաթաթված կիսամերկ երիտասարդ մի կին...

Հետո ի՞նչ պատահեց, ոչ պատմել կլինի, ոչ նկարագրել:

Փափազյանը նորից ընդհատեց պատմությունը: Մի պահ կարծեցինք, թե մեր հետաքրքրությունը սրելու համար ընդհատեց, բայց չէ, տրամադիր չէր շարունակելու: Խնդրեցինք պատմել, թե ինչ վախճան ունեցավ այս վտանգավոր բարեկամությունը:

Փափազյանը, արդեն ոչ նախկին ոգևորությամբ ասաց, թե ավելի քան մեկ շաբաթ եղել է այդ չքնաղ աղջկա գերին: Ասաց, թե այդ մեկ շաբաթվա իր կյանքը երազ պիտի կարծեր, պիտի չհավատար, թե նման բան պատահել է, եթե Յանիի ուրվականը չհալածեր իրեն:

— Վերջին օրը հանըմը կանչեց ինձ իր սենյակը... Գլխիկոր նստեցի մի աթոռի: Հագել էր տնային երկար խալաթ, միայն կրծքի վերին մասը բաց էր, և ինձ թվաց, թե այն էլ ծածկելու հակամետ է: Հանըմը ժպտաց. չարաճճի մի ժպիտ, որ անթարգմանելի էր ինձ համար: Առաջարկեց նստել բազմոցին, իր մոտ: Լուռ հնազանդվեցի: Դիտեցի սենյակը, փոքրիկ սեղանը, որի վրա սովորականի պես մի շիշ օշարակ կար, երկու բաժակ և քանակած մի լիմոն:

— Պիտի բաժանվենք,— ասաց թախծոտ ձայնով, կարծես հուզված, որ այդպես է լինելու:

— Ափսոս,— ասացի,— պիտի գրկվեմ իմ կենսատու արևից:

— Քո ընկերը արդեն գրկվեց իր կենսատու արևից,— ասաց հանգիստ:

Սառը քրտինք պատեց ինձ...

— Ո՞ր է Յանին,— ասացի հուզված:

Նայեց քամված լիւնին, հետո վերցրեց, հանգիստ լուսամուտից դուրս նետեց:

— Ո՞ր է Յանին,— կրկնեցի, գրեթե ճչալով:

— Կից սենյակի լուսամուտից նրան դուրս նետեցին դեպի Բոսֆոր...— Ասաց այնքան հանգիստ, որ կարծեք խոսքը վերաբերվեր մի կտոր լիւնի:

— Աստված իմ, սպանե՞լ են:

— Այսինքն՝ խեղդել... Այդպես է մեր կարգը: Տղամարդիկ մեզ են պատժում բանտարկելով այս դղյակների մեջ, մենք էլ նրանցից վրեժ ենք լուծում մեր ձևով: Չկարծեք, թե անում ենք սոսկ արկածախնդրական նկատառումով կամ չարությունից: Ամեննին: Մենք այս մի քանի օրվա ընթացքում այնքան ենք մտերմանում միմյանց, որ կցանկանայինք շարունակել, բայց... մեր կյանքը թանկ է. բավական է խնայենք մեկին՝ կկործանվենք: Ազատվածը, այս որջից ողջ առողջ դուրս եկողը կպատմի մի ուրիշի, նա էլ երրորդին և կիմանա փաշան... Իսկ փաշան, օ՛, աստված նրա կյանքը երկարի, արդեն 70-ը անց է և բավական վրեժխնդիր... Իսկ մենք ուլում ենք դեռ ապրել. ոչ միայն ապրել, այլ վայելել մեր երիտասարդական կյանքի հաճույքները. չէ՞ որ ես ընդամենը 20 տարեկան եմ: Ահա թե ինչու՝ ամեն գաղտնիք հենց այս պատերի մեջ թաղելու համար մեր սիրարկածներին ծառայող տղամարդկանց դուրս ենք գցում լուսամուտներից: Յանին արժանացավ այդ ձակատագրին:

Լուռ լսում էի: Ի՞նչ կարող էի ասել: Առանց այն էլ նա բավականաչափ հուզված ու կատաղած վիճակում էր, մոնչում էր էգ վագրի վայրագությամբ, սիրո հագուրդ չստացած կնոջ մոլեգնությամբ:

Շեշտակի նայեց դեմքիս և ասաց.

— Չես խոսում:

— Բայց մենք մինչև երեկ լավ բարեկամներ էինք, — ասացի անհամարձակ:

— Հիմա էլ բարեկամներ ենք. Ալլահի կամքը ինչ է՝ այն էլ պիտի լինի: Անշուշտ պիտի ուզեիր ապրել: Շատ ես երիտասարդ: Բայց...

Մի քիչ շունչ առի: Այդ նախադասությունը հուստ ճառագայթ էր իմ մթագնած հոգու համար: Կարո՞ղ էր խնայել...

— Բայց վախենում եմ, թեև ուզում եմ, որ դու լինես երջանիկ բացառություն այն երիտասարդների մեջ, որոնք ինձ հետ եղել են այս սենյակում...

Մի ժպիտ խաղաց նրա վարդագույն շրթների վրա՝ ներքին դաժանությունը ծածկելով բարության ու քնքշության նուրբ վարագույրով:

— Ուրեմն դուք ինձ սիրո՞ւմ եք:

— Սիրո՞ւմ, ի՞նչ եք ասում: Այդ զգացումը մենք վաղուց ենք կորցրել: Իմ մեջ խոսում է միայն կինը: Եվ եթե, այնուամենայնիվ, ուզում եմ, որ դու ապրես, Վահրամ բեյ, — շարունակեց հանընդ շեշտելով բեյը, միաժամանակ համբուրելով ինձ, — ապա այն պատճառով, որ ինձ պարզել ես մի ուրիշ հաճույք... Դու կախարդել ես ինձ քո Օթելլոյով: Ինձ թվում է, թե սպանելով քեզ՝ պիտի սպանեմ Օթելլոյին, օ՛, գերազնիվ այդ մարդուն, որ այնքան կրքով ու խանդով գիտեր սիրել իր կնոջը: Օթելլոն հենց իր վայրագությամբ ցույց տվեց, թե կինը որքան բարձր էակ է, ինչպիսի սիրով պետք է սիրել նրան:

Չարմանալի բան էր: Մինչ այդ նա ակնարկ անգամ չէր արել իմ դերակատարման մասին, երբեք չէր խոսել «Օթելլոյի» ներկայացման մասին:

— Ես տեսել եմ Պապա Մնակի ներկայացումներն էլ, որոնց մեջ կանայք սիրում են, սիրվում, տառապում, տառապեցնում, վրեժխնդիր լինում, գիտեն պաշտպանել իրենց շահը, պատիվը... Մենք կահ-կարասի ենք, որ կարող են օգտագործել, վաճառել: Դու խեղդեցիր քո սիրած կնոջը խանդից, ասել է, թե սիրուց, որքան կուզեի, որ տղամարդիկ ինձ էլ խեղդեին այդպիսի բուռն սիրուց, ինձ այնպես սիրեին, ինչպես դու էիր սիրում...

— Ձեր ամուսինն էլ ինձ կսպաներ, եթե այստեղ բռներ:

— Հա՛, հա՛, հա՛, ամուսի՛ն, բայց մենք ամուսին չունենք, մեկ այստեղ բանտարկող տիրակալներ ունենք, որոնք կարող են վրեժխնդիր լինել իրենց կալվածը պաշտպանող մարդու իրավունքով, հաջորդ օրն էլ նվիրել մի ուրիշի, բերել տալ նոր հարձեք, ինչպես պիտի վարվեին մի վույգ կոշիկ փոխելիս:

Խոսում էր վայրացած, գրեթե դողալով, բայց՝ տրամաբանված, խելացի, ինձ թվում էր, թե հիմա իմ առաջ կանգնած է մի ուրիշ կին, մի ուրիշ էակ:

— Քեզ Բոսֆորի ալիքներին չեմ հանձնելու, — ասաց իշխանական տիրակալությամբ և իր իրավունքը քաջ գիտակցող կլնոջ խրոխտությամբ, — բայց պիտի երդվես, որ ոչ ոքի, լսո՞ւմ ես Վահրամ բեյ, ոչ ոքի պիտի չպատմես այստեղ գալը: Դու այստեղ չես եկել, դա եղել է երապ, բայց այս անգամ որպես երապ էլ մի պատմիր քո այս սիրարկածը, մեկ շաբաթվա այս անսնոռանալի օրերը, անսնոռանալի, բայց մոռացման ենթակա օրերը: Իսկ եթե պատմես՝ չեմ խնայի նաև Օթելլոյին: Մոռացիր այս սենյակը, մոռացիր ինձ...

Հանընը լռեց: Բացեց դուռը. ինչ-որ մեկին կարգադրություններ արեց, եկավ նստեց տեղը: Մի քանի րոպեից երևաց

նույն դաժան ներքինին. դուրս եկա խորհրդավոր այդ շենքից այն ճանապարհով, որով մտել էի...

Փափապանը այս հետաքրքիր պատմությունը ավարտեց միանգամայն այլ տրամադրությամբ, քան սկսել էր: Հիտուն տարի առաջվա վերիուշը պեկոժել էր նրան, մռայլել: Մեկ թվաց, թե մտքում դեռ իր պատմած դեպքերի շրջանակի մեջ է, սիրուն այդ հանըմի, դաժան ներքինիի, մանավանդ անմեղ զոհ Յանիի հետ:

Հետո շատ կամաց ասաց.

— Է, Անահիտ, գնանք չոջուխս:

— Գնանք:

Շարժվեցին դեպի դուռը:

— Ղուրա՛նը, — ասացի, կարծելով, թե մոռացավ:

— Թող մնա մի ուրիշ անգամ կկարդամ:

Բայց դա վերջին անգամն էր, որ իմ գրադարանը նայելու առիթ էր ունենում. և այնպես էլ Ղուրանը չկարդաց...

### «ՎԱՆԻԹԱ ՎԱՆԻԹԱՐՈՒՄ»

Այս պրույցը տեղի ունեցավ 1962 թվականի սեպտեմբերի 15-ին, Գրականության և արվեստի թանգարանում:

Փափապանը եկավ վաղ առավոտյան: Հոգնած դեմք ուներ: Բարևեց և նստեց: Ասաց, թե գիշերը գրեթե չի քնել. մի քանի անգամ փակվել են աչքերը, բայց մղձավանջային երազներից ցնցվել է ու վարթնել:

Երբեք այդքան երկար չէր նստել, երբեք այդքան հուզված չէի տեսել նրան. երբեք այդքան չէր բացվել ինձ մոտ, երբեք

այդքան շատ չէր ծխել: Ամեն ինչից երևում էր, որ հոգեկան ծանր ապրումների մեջ է: Ցանկացել էր գտնել մեկին, հաղորդակից դարձնել իր ապրումներին, գեթ մասամբ հանգստանալ: Պարզապես ինձ վիճակվեց ականատես լինել այդ պոռթկումներին:

Նախքան բուն կրույցն սկսելը ասաց, թե վերջնականապես որոջել է մեկնել Լենինգրադ, այնտեղ անցկացնել իր վերջին տարիները: Ուրիշ անգամներ էլ խոսել էր այդ մասին, բայց խոսել էր հենց այնպես, կես կատակով, ասել էր ու մոռացել: Այս անգամ գաղափարը բևեռվել էր ուղեղում. ծրագրեր էր կապմել, որոնց մասին բացատրություններ էր տալիս, տեղն ու տեղը փոխում միտքը, ասում, որ եթե այդ մեկը չհաջողվի, ուրիշ մը տաղորդություն ունի: Փոխում էր ծրագրերը, բայց մեկնելու որոշումը անդառնալի էր պահում:

Հետո արդեն բաց արեց սիրտը:

— Ի՞նչ է իմ վիճակը այժմ,— ասաց կնճռոտելով խորշումած ձակատը:— Ռուսաստանում այդպես չէր: Այնտեղ ինձ ավելի լավ էին հասկանում ու գնահատում: Բոլորը անկեղծ էին, առանց դիմակի: Այստեղ ժողովուրդը սիրում ու գնահատում է թե՛ ինձ և թե՛ իմ արվեստը, սիրում է հայկական ջերմությամբ շնորհակալ եմ: Բայց չեմ տեսնում թատրոնի որոշ մարդկանց գնահատումը: Բոլորն էլ ժպտում են ինձ հետ խոսելիս, լավ լավ խոսքեր շռայլում, բայց զգում եմ, որ անկեղծ չեն: Մի մասը չի թաքցնում վերաբերմունքը. ես նրանցից ավելի գոհ եմ: Գիտես, որ մարդը քեզ չի սիրում, գուցե հիացած չէ քո արվեստով, գուցե նա է իրավացի. կան արվեստի տարբեր ընկալումներ: Ավելի սարսափելի են մյուսները, այն մարդիկ, որոնք երեկ քեզ հետ սեղան նստած ժպտացել են, այսօր բամբասում

են: Գուցե ես էլ մեղավոր եմ. կարծիքներս մատուցարանի վրա ցուցադրող մարդ եմ, որից ոմանք խայթվում են, վիրավորվում: Թող հետևեն իմ օրինակին, հրապարակավ քննադատեն, վիճեն:

— Բայց հենց թատրոնում, դերասանների մեծ մասը ոչ միայն գնահատում են ձեզ, այլ ձեր իրական երկրպագուներն են:

— Կան, հարկավ կան,— ասաց մի քիչ մեղմացած, բայց...

Մի պահ լռեց, խոժոռեց դեմքը, վառեց սիգարետը, ակնարկը հառեց կողքին դրված՝ Ա. Իսահակյանի խճանկարին, սպա շարունակեց.

— Կան, բայց դժվար է ճանաչելը. չգիտես դրանցից ո՞րն է քո իսկական բարեկամը: Այդ բարեկամը թող լինի թեկուզ մեկը, բայց լավ ճանաչես ու վտահես, խոսես նրա հետ քո հոգեկան անհանգիստ պահերին, նրան հենվես՝ չընկնելու համար: Նայում եմ շրջապատս, չեմ գտնում այդ մեկին և մենակ եմ պզուկ ինձ: Ինձ մեղադրում են, որ քիչ եմ ծառայել մայրենի բեմին, ստեղծագործական կյանքիս մեծ մասը անց եմ կացրել Ռուսաստանում. ո՞վ է մեղավոր: Հրավիրել են, բնակարանի ու աշխատավարձի հարցը լուծել են՝ չե՞մ եկել: Միայն 1946 թվականին, այն էլ ի՞նչ դժվարությամբ հրավիրեցին, հետո էլ հապար ու մի պայան:

Փափապանը ընդհատեց պրոպոզը: Հնչել էր հեռախոսի ձայնը: Սպասում էր, որ վերջացնեն:

Խոսում էի ուրիշի հետ, բայց ուշադրությունս նրա վրա էր: Ջղաձգական շարժումով ծխախոտի գլանակը ճակեց մարմարյա սոխաբանանի մեջ ու նորը վառեց, սեղմեց ծխախոտից դեղնած մատների մեջ:

Հեռախոսային պրուլցս վերջացել էր, բայց չէր շարունակում:

Մնում էր սպասել նրա մտքերի ներքին հարց-պատասխանի ավարտին, որպեսզի նորից սկսի կամ համարի ավարտված ու հրաժեշտ տա: Անշուշտ նախընտրելի էր վերջինը, քանի որ այդքան գրգռված վիճակի մեջ էր:

— Միայն թատրոնը չէ,— ասաց,— վերցնենք թատերական ինստիտուտը: Մի՞թե ես ոչինչ չէի կարող տալ մեր ուսանողությանը: Հրավիրե՛լ են դասախոսելու գեթ մեկ կիսամյակ, մեկ ամիս: Չէ՛, սիրելիս, ինձ չեն գնահատում: Հոգով ու ամբողջ էությունս ինձ գնահատող միայն մի էակ կա՝ Անահիտը, դժբախտ, մանկությունից որբացած, անուժ մի կին, որը ոչինչ չի կարող անել, բացի ինձ հուսադրելուց, համբերություն քարոզելուց: Հոգնել եմ, հոգնել ոչ թե բեմից,— դերասանը բեմից երբեք չի հոգնի,— այլ՝ կյանքից, կեղծ ժպիտներից:

Այս անգամ վերջնականապես ընդհատեց պրուլցը. պատաստվեց մեկնելու: Երբ եկավ թանգարան, «Աստրայի» տուփը նոր էր բաց արել, իսկ երբ գնաց՝ մի քանի սիգարետ էր մնացել:

Մեր ամբողջ պրուլցի ընթացքում ձեռքին կար ինչ-որ գրիչ, որով թղթի վրա բաներ էր խզվում: Նրա մեկնելուց հետո ուլեցի այդ թուղթը գցել պամբյուղը, բայց նկատեցի, որ վրան գըրություններ կան, այն էլ մի քանի լեզվով՝ հայերեն, լատիներեն, թուրքերեն, ֆրանսերեն:

Հետաքրքրությունս շարժեց: Փորձեցի կարդալ: Թղթի հենց վերնի մասում մի քանի տող թուրքերեն էր, այն էլ արաբատառ թուրքերեն, որով քիչ հայեր կարող էին գրել:

Չարչարվեցի և դուրս բերեցի թուրքերեն քառյակի բովանդակությունը: Անծանոթ մնաց շրջանակի մեջ առնված մի բան միայն, որը մինչև այժմ էլ մնացել է առեղծված ինձ համար:

Ահա թուրքերեն այդ քառյակի բովանդակությունը.

Այս աշխարհը հենց իր հիմքից խախտու է,  
Ախտոս, ախտոս, որ այդպես խախտու է:  
Կամ պետք է թողնել աշխարհն ընդմիջու,  
Կամ էլ տանել ամեն ցավ ու վիշտ:

Տակին գրված էր երկու տող լատիներեն՝ «Վանիթա վանիթարում թուրա է վանիթա», որ Սողոմոն Իմաստունի հայտնի խոսքերն են՝ «Ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ընդունայն է»: Դրան հաջորդում էր ֆրանսերեն մի աղավաղված բան:

Այս բոլորից հետո, արդեն հայերեն, գրված էր. «Իմ կյանքի գնահատականը աշխարհի վրա», որ անշուշտ վերաբերում էր վերոհիշյալ մտքերին: Թղթի ամբողջ երկարությամբ էլ, հենց մակագրությունների վրա, ստորագրել էր՝ «Վահրամ Փափապյան, 15 սեպտեմբերի, 1962»:

Այնպիսի ջղաձգական վիճակում էր գրել, որ հայերեն գրնահատական բառն էլ գրել էր արևմտահայ արտասանությամբ՝ քնահատական, մի բան, որ խոսակցության ընթացքում ավելի հաճախ էր անում:

Թուրթը ինձ հուշեց նույն օրը երեկոյան գրի առնել մեր պրուլցի հիմնական մասը, թեև վստահ էի, որ այդ բոլորը արդյունք էր նախորդ օրվա ինչ-որ սհաճ վեճի այն անձնավորու-

թյուններից մեկի հետ, որոնց անունը տվել էր: Հաջորդ օրը նա իսկապես բոլորովին այլ տրամադրության մեջ էր և շատ ավելի մեղմ էր արտահայտվում նույն մարդկանց մասին:

«ՀԻՎԱՆԴԸ»

1963 թվականի մայիս ամիսն էր:

Բարեկամս՝ դիրիժոր Իսայիր Խարաջանյանը, ինձ ու տիկնոջս հրավիրել էր իրենց տուն:

Ժամը 6—ի մոտ էր: Պատրաստվում էինք մեկնելու, որ հնչեց հեռախոսի ձայնը: Վերցրի լսափողը:

— Քառնիկ, շուտ եկուր, Վահրամը քեզի կուզե,— լավեց կանացի հուզված մի ձայն:

— Ի՞նչ է պատահել, տիկին Անահիտ,— հարցրի անհանգիստ, նախազգալով համենայնդեպս ոչ լավ բան:

— Շուտ եկուր, հոս կիմանաս:

— Բայց ես հիմա պատրաստվում եմ ուրիշ տեղ գնալու, եթե վաղը գամ չի՞ լինի:

— Ո՛հ, ո՛հ, հիմա պիտի գաս, Վահրամի վիճակը լավ չէ...

— Հիվանդ է:

— Հիվանդ է, շատ ծանր հիվանդ, կուզե քեզի տեսնալ:

Տիկնոջ լացակումած ձայնը ցնցեց ինձ: Ուզեցի ավելին իմանալ: Հարցրի, թե ինքը չի՞ կարող հեռախոսի մոտ գալ:

— Սպասե նայիմ,— ասաց:

Մի պահ տիրեց լռություն: Ապա հեռախոսի միջից լավեց Փափազյանի խոսքոտ ու թույլ ձայնը.

— Գառնիկ, չոջուխս, շուտ եկուր, վիճակս անհուսալի է...

Հիվանդ մարդու ձայն էր, այնքան խորհրդավոր, խուլ ու անբնական, որ վղջացի հեռախոսի մոտ կանչելուս:

«Անհուսալի» բառը ստիպեց ինձ ամեն ինչ մոռանալ ու նստել տաքսի և սուրալ ուղիղ Կիևյան փողոց:

Աստիճաններից բարձրանալիս՝ ներքևի հարկի դռանը հանդիպեցի Մամուր Ֆաթիմիին՝ Եգիպտոսից ներգաղթած մի հայ մտավորական, որ նույնպես ապրում էր այդ շենքում: Բարևեցի: Մռայլ էր. հապիվ պատասխանեց:

Ուրեմն սա էլ գիտի Փափապյանի վիճակի ծանր լինելը, մտածեցի: Գուցե նրան են հանձնարարել շտապօգնության բժիշկներին վեր առաջնորդելու գործը, թեև գիտեի, որ Փափապյանը ոչ մի հարաբերություն չուներ նրա հետ և չէր համակրում:

Բարձրացա: Սիրտս շատ արագ էր խփում... Ինչե՛ր ասեք, որ մարդու մտքով չի անցնի նման րոպեին:

Սեղմեցի կոճակը...

Բացվեց դուռը... Տեսա Անահիտի գունատ դեմքը: Այնպես էր այլալված, մարմնով այնպես էր կուչ եկել, որ թվում էր թե ամեն ինչ վերջացել է...

Հապիվ կարողացա հարցնել.

— Ի՞նչ է պատահել, տիկին Անահիտ:

Խեղճը կարկամած ինձ էր նայում: Չէր կնքողանում խոսել: Չեռքերը կրծքին խաչաձև հապիվ կմկմաց.

— Վահրամը չկա, Վահրամը կերթա կոր, վա՛խ յավրում, վա՛խ...

— Ի՞նչ, — ասացի սարսափած:

— Եկուր տես, ինչ վիճակի մեջ է. վա՛խ, աս ի՞նչ փորձանք էր:

Անահիտը ինձ առաջնորդեց ընդունարան: Տեսա մի պատկեր, որը չէր կարող սարսուռ չսպրդել մարդու:

Փափապանը, հագած Օթելլոյի հանդիսավոր խալաթը, գլխին գդակ, ձակաւորն կապած լայն շոր, ծալապատիկ նստել էր թախտին, արձանային անշարժութեամբ, նման Արևելքի դերվիշներին: Պակասում էր միայն ձեռքի համրիչը: Մտող՝ սեղանի վրա, դրված էին դեղի սրվակներ, դեղահատի փաթեթներ, բաժակով ջուր:

Բարևեցի: Թվաց, թե չնկատեց: Ոչ մի արտահայտություն դեմքին, ոչ մի ձայն, ոչ մի շարժում:

— Բժիշկ կանչե՞մ, տիկին Անահիտ,— հարցրի շատ կամաց:

— Հարկավոր չէ: Չուլեր: Քանի մը ժամ առաջ ջղային նոպա ունեցավ: Սիրտն ալ չէր աշխատիր... վտանգը դեռ անցած չէ:

Խոսում էր անկապ, թրթռուն ձայնով: Չգիտեի՝ որն էր իմ պարտականությունը, ինչո՞ւ էին կանչել: Փափապանի դեմքը այնպես էր այլալվել, գունատվել, որ սարսափ կարող էր ազդել նայողին: Չէի տարակուսում, որ եթե բժիշկը նայեր՝ իսկույն հիվանդանոց կտեղափոխեին: Գուցե դրա համար խուսափում էր բժշկից:

— ձակատիդ լաթը փոխե՞մ, — հարցրեց կինը մի քանի քայլ առաջ գալով:

Նրան պատասխանելու փոխարեն՝ գլուխը դարձրեց դեպի ինձ և առանց խոսելու, ձեռքի շարժումով, առաջարկեց նստել կողքին՝ բազմոցի վրա:

Նստեցի մատնացույց արված տեղը: Անահիտը նայում էր մեզ. երևում էր, որ գիտեր, թե ինչու է կանչել ինձ. Փափապանը դեռ լուռ դիտում էր դիմացի պատը, որտեղ կախված էր նրա թոռնիկի՝ Ժաննայի սիրունիկ նկարը:

Նայում էի հիվանդի հարափոփոխ դեմքին: Մտածեցի զննել պարկերակը: Չհամարձակվեցի: Մի ականթարթում ինչպիսի՞ ա-

լափոխություններ էր կրում նրա կնճռոտած դեմքը, մերթ արտահայտում էր հոգեկան փոթորիկ, մերթ՝ անբացատրելի խաղաղություն, մերթ՝ վայրույթ, մերթ՝ ներողամիտ հանգստություն:

— Գառնիկ, տղաս,— ասաց վերջապես, խզելով ծանր լռությունը,— վիճակս մտահոգիչ է: Պիտի մեկնեմ այստեղից: Հենց վաղը փակիր հաշիվս, վճարիր ինձ հասանելիք գումարը, որ մեկնեմ: Պիտի հեռանամ, գնամ ընդմիշտ, այս անգամ անվերադարձ:

Գլխի ընկա, թե ինչի մասին էր խոսքը: Թանգարանը դեռ չէր վճարել բեմական պեեստների և իրերի արժեքը:

— Բայց, — ասացի, — դա ինձնից կախված չէ. հաշվապահական ձևակերպումներ կան, պետք է Ակադեմիայի նախագահությունը կարգադրություն անի կենտրոնական հաշվապահությանը, որ այդ նպատակի համար գումար փոխանցի:

— Չգիտեմ՝ ինչ պիտի անես՝ արա, որ շուտ վերջանա այս գործը և ես մեկնեմ Լենինգրադ: Երեք օրից պիտի մեկնեմ, ամեն ինչ կարգադրել եմ:

Խոստացա, որքան հնարավոր է, արագացնել վճարումը:

Անահիտը վերցրեց սեղանի վրա դրված տուփը, ասաց.

— Ժամանակ չեղավ սուրճ մը տալու, ասիկա Պոլսեն բերված Հաջի Բեքիրի շաքարեղեն է. հատ մը առեք:

Վերցրի մեկ հատ, առողջություն ցանկացա և մեկնեցի:

\* \* \*

Խարաջանյանների տանը խոսակցության նյութը մնաց Փափապյանի հիվանդությունը: Ափսոսում էին, տարբեր կարծիքներ հայտնում:

Հակոբ Խանջյանը պատմեց, թե Փափապյանը գրել է մի պիես, ներկայացրել Արվեստի վարչություն, որպեսպի բեմադրվի: Վարչությունը պիեսը՝ առանց հեղինակի անունը հայտնի անելու՝ ուղարկել է մեր ականավոր գրողներից մեկին՝ կարծիքի: Ստացվել է բացասական կարծիք. գրախոսը գրել է, թե պիեսի հեղինակը գաղափար չունի թատրոնից...

Բոլորս ծիծաղեցինք:

Իսպիր Խարաջանյանը հետաքրքիր հուշեր պատմեց 1930-ական թվականների կեսերից, երբ իր փառքի գագաթնակետին գտնվող Փափապյանը լենինգրադցիների պաշտամունքի առարկան է եղել:

Հետո, դարձյալ Իսպիրը, պատմեց Փափապյանի դստեր՝ Մարիայի ամուսնությունը կոնսերվատորիայի իր դասընկերներից Վուտիրասի հետ, որը հետագայում դարձել էր ականավոր երգիչ:

Այսպիսի բաներ էին պատմում, բայց իմ ուշքն ու միտքը Փափապյանն էր: Մյուսները չէին տեսել նրա այդ օրվա վիճակը և չէին կարող պատկերացնել լրջությունը:

Երբ սեղանակիցներն անցան այլ հարցերի, մտածեցի զանգահարել Արման Կոթիկյանին, ասել, որ Փափապյանը հիվանդ է: Կոթիկյանը լուրն ընդունեց ավելի հանգիստ, քան սպասում էի: Ասաց, թե առավոտ կանուխ կայցելի, եթե անհրաժեշտ լինի, ինձ էլ կկանչի:

Այդ գիշեր շատ անհանգիստ քնեցի: Արդյոք իմ գալուց հետո չէ՞ր կրկնվել նույան:

Առավոտ հապիվ էի պատրաստվում թանգարան գնալ, որ Կոթիկյանը զանգահարեց:

— Ինչպե՞ս է Փափապյանի առողջությունը, — հարցրի:

— Քեզմե, ինձմե լավ:

— Բայց երեկ...

— Երեկ խաղցած են,— ասաց Կոթիկյանը լսափողը լցնելով լիաթոք ծիծաղով:

— Խաղցա՞ծ...

— Հապա, հապա, խաղցած են: Պիտի տեսնեիր, թե ինչպես կինդային պատմելու ատեն: Կնկարագրեին քու վիճակդ:

— Բայց իրենց վիճակն էր ծանր: Մարդը կարգին հիվանդ էր, իսկ Անահիտը, այնտեղ պիտի լինեիր, որ տեսնեիր նրա տազնապալի դեմքը:

— Իշտե խաղցած են ըսինք ա՛... Որոշել են «հիվանդ» խաղալ, որպեսպի գումարը շուտ ստանան ու Լենինգրադ երթան: Վահրամը ողբերգուի դերն է կատարեր, Անահիտը՝ պրիմատոննայի...

— Իսկ ե՞ս...

— Դուն ալ շվարած ու անձարակ դիրեկտորի դերը: Ամենից խղճալին քու վիճակդ է եղեր: Ատանկ ըսավ Վահրամը: Ամեն ինչ հեռախոսով չըսվիր, կուգամ թանգարան, կպատմեմ: Բայց դուն գումարի վճարումը պիտի արագացնես: Ինձի ալ ըսավ քի հիշեցնեմ քեզի... Պիտի երթա Լենինգրադ. ան միտքը բան մը դնե նե, կընե:

Նոր միայն հանգստացա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ «ԽԱՂԸ»

Այս տարօրինակ ներկայացման յուրօրինակ քննարկումը տեղի ունեցավ դրանից մեկ-երկու օր անց, թանգարանում:

Ժամը 1-ի մոտ էր: Հիմա չեմ հիշում ինչու՝ տրամադրությունս տեղը չէր: Հանկարծ ներս մտան Վահրամ Փափապյանն ու Արման Կոթիկյանը, ավելի ճիշտ՝ նախ ներս խուժեց Կոթիկյանի ծիծաղը, ապա երևացին երկու դերասանները: Հաճախ էին միասին գալիս, թեև կարճ ժամանակով նրանց հարաբերությունը դարձել էր պաշտոնական՝ «Հետադարձ հայացքի» պատճառով: Կոթիկյանը դժգոհ էր մնացել այդ գրքի որոշ գնահատումներից և իրեն հատուկ անմիջականությամբ հայտնել էր կարծիքը, գործածելով խիստ նախադասություններ: Փափապյանն էլ պատասխանել էր նույն խստությամբ, թեև ընդունել էր, որ նրա ասածների մեջ ճշմարտություններ կան:

Սակայն կարճ էր տևել նրանց գժտությունը: Կոթիկյանը պատմում էր, թե Փափապյանը հեռախոսով կանչել է մի օր և այնպես ողջագուրվել, որ կարծեք տարիներով միմյանցից հեռու լինեին և զրուցել էին այնպես, որ կարծեք ոչինչ չէր պատահել նրանց միջև:

— Ինտո՞ր ալ խաբեր են քեզի. չես հասկցեր, որ Վահրամը կերպարի մեջ է, ծանր հիվանդ մարդու կերպարի մեջ,— ասաց Կոթիկյանը, մտնելով սենյակ:

— Այնքան բնական էր, այնքան հուպիչ, որ մտքովս չէր կարող անցնել այդպիսի բան:

Փափապյանը լուռ ժպտում էր, հոգեկան հանգիստ վիճակի մեջ էր: Այդ օրը առաջին անգամ նկատեցի, որ մազերը ներկել է: Նույն օրն էր ներկել, թե մի քանի օր առաջ, դժվարանում եմ ասել: Խաղի օրը չէի նկատել՝ գուցե հուզված լինելուս պատճառով:

— Պիտի տեսնեիր Գառնիկի դեմքի այլալուսը,— ասաց Փափապյանը ժպտալով,— կարծում էր, թե վերջին ժամերս են...

— Է, խնայելու էիր մեր բարեկամին, ատանկ ծանր հուշումներու չի կրնար դիմանալ,— ասաց Կոթիկյանը նկատելի լրջութեամբ:

— Ա՛լ սկսած էինք, պիտի լավ խաղայինք:

— Բայց ձեր վիճակը իսկապես տագնապալի էր,— ասացի,— հայելի էր պետք, որ տեսնեիրք: Հետո՛ դուք իմ կողմն էլ չէիք նայում, հուշումն ինչպե՞ս տեսաք:

— Տեսնում էի թե՛ քո դէմքը, և թե՛ իմը:

— Հապա, հապա, ճշմարիտ արվեստը իշտե ատ է,— ասաց Կոթիկյանը: Չե՞ս հիշեր Ադամյանն ալ Թիֆլիս գինովի դեր խաղցած է քեֆի ժամանակ:

— Մեկ էլ Փարիզում եմ կատարել հիվանդի դերը,— ասաց Փափապյանը,— այն էլ մեքենայի մեջ: Այնքան լավ կատարեցի, որ շոֆերը ինձ փոխանակ հյուրանոց տանելու, ուզում էր հիվանդանոց փոխադրել:

— Փարի՞զ,— ասաց Կոթիկյանը,— կեցիր, կեցիր, պիտի հիշեմ:

— Չէ, այդ օրը միասին չէինք, դու չես կարող հիշել:

— Անանկ է նե պատմե տեսնանք՝ ինչ պարագաներու մեջ խաղցար:

— Փարիզում, 1932 թվականի հյուրախաղերի օրերին, հրավիրատուն ստացա Ռուբինշտեյնի համերգի համար: Որոշեցի գնալ: Ծանոթներիցս մեկը խոստացավ մեքենա ուղարկել: Ճանապարհները մեքենաներով ողողված էր: Շատ դանդաղ էինք առաջ գնում: Տեղ-տեղ էլ կանգնում էինք: Ուրախ տրամադրության մեջ էի, կատակում էի, բաներ պատմում: Հանկարծ բարեկամներիցս մեկը երևաց մայթին. արագ մոտեցավ և հապիվ ինձ համար լսելի ձայնով հայերեն ասաց.— Վահրամ, մի՛ գնա

այդ համերգին, անախորժ բան պիտի պատահի: Արկածներ սիրում են, բայց այս մեկը տարբեր էր. օտար քաղաք, օտար մարդիկ, ժամկետների մեջ տեղավորված պարտավորություններ, ո՞վ է իմանում, ինչ կարող էր պատահել: Թատրոնի շենքին հապիվ 400 մետր էր մնացել: Ինձ տանող մարդն էլ պիտի չիմանար: Միանգամից լրջացա, ընդհատեցի կատակախառն զրույցը, շուտ-շուտ ձեռքս ճակատիս տարա, թաշկինակով ճշմարիտ քրտինք սրբեցի, որ վարորդը տեսավ. և երբ հասանք թատրոնի շենքի մոտ, ասացի. «Շարունակյիլ ճանապարհը, վատ են զգում, շատ վատ, ինձ իսկույն հասցրու հյուրանոց: Մարդը նայեց դեմքիս, սարսափեց... — Բայց մի քանի րոպե առաջ ոչինչ չունեիք,— ասաց միամիտ ու բարի ֆրանսիացին այլայլված:

— Սիրտը այդպես է...,— պատասխանեցի,— սրտի նույա է, հաճախ է պատահում: Ինձ հասցրու հյուրանոց. մեքենան էլ շատ դանդաղ քշիր: Մարդը մոլորվել էր. չգիտեր ինչ օգնություն ցույց տա: Առաջարկեց մոտակա մի հիվանդանոց տանել կամ որևէ բժշկի, գովեց մի քանիսին: Մերժեցի: Գնալով վիճակս «ծանրացավ» և երբ հյուրանոց հասա, արդեն ինձ ընդունեցին որպես ճշմարիտ հիվանդ և բուժեցին... սիրտս, ասելով, որ տասը րոպե եթե ուշանայի, հասկանո՞ւմ եք ընդամենը տասը րոպե, կարող էր պայթել սիրտս: Խեղճ բժիշկներ: Երբ իբր թե կանխեցին վտանգը, աստիճանաբար մտա առողջ մարդու կերպարի մեջ: Մի քանի րոպեից, արդեն իմ սենյակում, կատակում էի ֆրանսիացի ծառայողի հետ, որը աստծու ողորմածությանը վերագրեց մեծ փորձանքից ապատվելս: Երեկոյան զանգահարեցի բարեկամիս և հարցրի, թե ի՞նչ էր պատահել:

— Վահրամ,— ասաց,— ստույգ տեղից իմացել էի, որ դիտ-

մամբ են քեզ հրավիրում, որպեսզի սայտակ վտարանդի մա-  
մուկի թղթակիցները հարցազրույցի պատրվակով հակասովետա-  
կան վեճեր բորբոքեն, որը անշուշտ պիտի հուպեր քեզ և ազ-  
դեր հաջորդ օրվա քո խաղի վրա:

— Հապա ան մյո՞ւսը,— ասաց Կոթիկյանը:

— Ո՞րը:

— Մարսելինը չե՞ս հիշեր:

— Չեմ հիշեր:

— Ինչպե՞ս չես հիշեր: Դերակատարներեն երկուսը մենք  
էինք, մյուսը՝ Անահիտը: Երվանդ Թոլայանն ալ մեզի փրկեց:  
Չե՞ս հիշեր Մարսելի հյուրանոցի դեպքը:

— Հիշեցի, հիշեցի,— ասաց Փափապյանը ժպտալով:

— Քանի որ հիշեցիր, պատմե. ես կենտրոնական դեմքն եմ,  
ինձի չի վայելեր պատմել. Անահիտն ալ հոս չէ:

— Բայց այդ խաղի մասին կարծեմ գրել եմ «Հետադարձ  
հայացքում»:

— Քանի մը տողով հիշատակած ես. պատմե ինչպես ե-  
ղած է:

— Փարիզում վերջին ներկայացումները տվել էինք և պատ-  
րաստվում էինք Մարսել գնալ,— սկսեց Փափապյանը:— Մեզ  
հավաստիացրել էին, թե տեղի մեծահարուստ հայերը թատ-  
րոնի հոգսը, հյուրանոցի վարձը իրենց վրա էին վերցրել: Շատ  
էլ հույս չէի կապում այդ հարուստների հետ, բայց երգիծաբան  
Թոլայանը, որ Պոլսից ծանոթ էր և թատրոնի մոտ կանգնած  
մարդ, նյութապես էլ համեմատաբար լավ վիճակի մեջ, խորհուրդ  
տվեց անպայման մեկնել և խոստացավ անհրաժեշտության  
դեպքում նյութապես օգնել: Երբ մեր գնացքը հասավ Մարսել՝  
տեսանք, որ մենակ ենք ու անօգնական, չարաչար խաբվել

ենք: Ես և Անահիտը իջևանեցինք նախօրոք որոշված մի լուքս հյուրանոցում, որի արժեքն էլ լուքս պիտի լիներ անշուշտ: Անհրաժեշտ էր նույն օրն իսկ վճարել սենյակի վարձը: Մեր փողը քիչ էր: Կոթիկյանն ու մյուս դերասանները այլ հյուրանոց էին իջել: Անահիտը իսկույն հեռախոսով կապվեց Կոթիկյանի հետ և բացատրեց մեր վիճակը: Հյուրանոցի աշխատողները ներս ու դուրս էին անում, սպասելով հաշիվը մաքրելու գործին: Անցավ կես ժամ: Հանկարծ հյուրանոցի ծառայողներից մեկը ներկայացավ Անահիտին, բացառիկ հարգանքով ասաց.— Մաղամը բարի կլինի՞ ընդունելու կունս դե Գոթիկին: — Ո՞ւմը,— հարցրեց Անահիտը վարմացած:— Կունս դե Գոթիկ: Անահիտը կանացի բնագրով գլխի ընկավ, որ կունս դե Գոթիկը մեր բարեկամ Արման Կոթիկյանն է և ասաց.— Օ՛, ինչպես չէ, ասացեք իմ հարգելի կունսին, որ մաղամը երջանիկ պիտի պզա իրեն՝ ընդունելով կունսի այցելությունը: Մի քանի րոպեից հայտնվեց կունս դե Գոթիկը՝ ծանր-ծանր քայլելով, մենակնոցը աչքին, թեթև մի ժպիտ դեմքին, որի ներքին իմաստն էր չփչացնեք գործը, խաղացեք ձեր դերը: — Օ՛, կունս, բարի էք եկել,— ասաց Անահիտը և շարունակեց,— անշուշտ գիտեք ձեր հին բարեկամին՝ մոսյո Վահրամին:— Ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ,— ասաց կունսը նույնքան սիրալիր բարևելով ինձ: Որքան ուրախ եմ, որքան ուրախ, որ հանդիպում եմ իմ հին բարեկամներից երկուսին միաժամանակ:— Իսկ ես,— ասացի,— կրկնակի ուրախ եմ, որ հանդիպում եմ իմ լավ բարեկամ կունսին, որին հինգ տարի է չեմ տեսել:

Անահիտը թաշկինակով փակել էր դեմքը, որպեսպի հայտնի չանի ծիծաղը: Բարեբախտաբար ֆրանսիացին գլխի չընկավ, երևի կարծում էր, թե Թեոֆիլ Գոթիեի թոռներից մեկի հետ գործ ունի և ոչ հայ դերասանի: Ֆրանսիացին հեռացավ: Կո-

թիկյանը կանաց իմ ձեռքի մեջ սահեցրեց Թուլայանի ուղարկած գումարի չեկը...

Փրկված էինք:

Ավարտեց Փափապյանը պատմությունը, որ նա մի քիչ այլ կերպ է նկարագրել «Հետադարձ հայացքում», դուրս թողնելով Անահիտին:

Մինչ մենք՝ երեքով նման հարցերի մասին էինք խոսում ու ծիծաղում, եկան Սարգիս Մելիքսեթյանն ու Գևորգ Մադոյանը:

Թանգարանի աշխատակիցներից Գոհար Հարությունյանը, որ նման պահեր հաճախ էր որսում և ուղարկում լուսանկարիչ Մաքսիմին՝ արխիվի լուսանկարների ֆոնդը հարստացնելու հեռատես նկատառումով, այդ օրն էլ նույնը արեց և երևաց Մաքսիմը: Նա Փափապյանից աննկատելի չխկացրեց ամենաուրախ պահերից մեկը, երբ Փափապյանը ասում էր. — Որքա՞ն վախեցել էր Գառնիկը՝ ինձ այդպես «հիվանդ» տեսնելով...

Այդ լուսանկարում Փափապյանը այնքան է ուրախ, այնքան անհոգ, որ ամեն անգամ, երբ նայում եմ, մտածում եմ, որքան լավ պիտի լիներ, եթե այդպես շարունակվեր նաև նրա մնացած տարիների բոլոր օրերը... գուցե և լիներ՝ եթե մի անողոք հիվանդություն բույն չդներ նրա մարմնի մեջ և չսկսեր աստիճանաբար հյուժել, քայքայել ապոլոնյան այդ գեղեցկությունը...

ԱՆՎԵՐՋ ԾՐԱԳՐԵՐ

1963 թվականի վերջերին առողջական նկատառումով հրաժարվեցի թանգարանի աշխատանքիցս: Դարձա Արվեստի ինստիտուտում բաժնի վարիչ:

Հիմա քիչ էի հանդիպում Փափապյանին. չկար աշխատանքային անհրաժեշտություն. թանգարանում էլ հապվադեպ էի լինում, իսկ Փափապյանը, հասկանալի է, պահում էր կապը հարապատ հիմնարկի հետ:

Այնուամենայնիվ, շարունակվում էր մեր մտերմությունը: Մեկ-մեկ այցելում էի, ավելի հաճախ՝ հեռախոսով էինք հեռաքրքրվում միմյանցով: Երկուսիս առողջական վիճակն էլ լավ չէր և երկուսիս էլ բուժում էր Օհան Բոստանջյանը, հոգատար, ապնիվ մի բժիշկ:

Բոստանջյանը ինձ ասել էր, թե Փափապյանին հիմա չպետք է հոգնեցնել երկարատև կրույցներով, և առհասարակ չպետք է խոսել հուլոդ հարցերի մասին: Խորհուրդ էր տալիս Վարթ պահեր ստեղծել: Մի քանի անգամ փորձեցի: Չկարողացա: Չնայած աշխատում էր հայտնի չանել, սակայն հիմա նախկին աշխույժը չուներ, դարձել էր ավելի քչախոս, տխուր: Երբեմն այնքան անտրամադիր էր երևում, որ ինձ թվում էր, թե չի հետևում խոսակցության ընթացքին:

Այժմ, երբ բժիշկների խորհրդով հարկադրված էր ամիսներ շարունակ տնից դուրս չգալ, ուներ մի մտասևեռում՝ աշխարհ շրջել, նոր երկրներ տեսնել, մի կերպ քաղաքից դուրս գալ: Կապում էր անթիվ ծրագրեր, խանդավառվում, տեղն ու տեղը փոխում ճամփորդության ուղին, ճանապարհի ընկերներ որոնում: Ինձ թվում էր, թե ինչ-որ ներքին երկյուղ ուներ մենակ ճամփորդելուց: Անահիտը կար ու կար, բայց ուզում էր ուրիշներ էլ լինեին...

Մի անգամ հարցրեց.

— Ամառը որտե՞ղ ես հանգստանալու:

— Արդեն մի քանի տարի է, որ ծովափ եմ գնում, — ասա-

ցի,— Նովի Աֆոն, այնտեղ ապականներ ունեն, լավ մարդիկ են, հոգատար: Աֆոնում ձեզ էլ լավ գիտեն:

Այդ մասին ինձ հետաքրքիր հուշեր էր պատմել Աֆոնի՝ Լենինի անվան հայկական կոլտնտեսության նախագահ Չաքար Թովչյանը՝ բազմակողմանի պարզացած, թառերասեր, ազնիվ ու բարի մի մարդ, որ անվերջ մանրադեպեր էր պատմում Փափապյանի հետ կապված:

Փափապյանը հիշեց, որ նրանց տանը եղել է, երբ Աֆոն է այցելել: Ասաց, թե իսկապես գեղեցիկ տեղ է, իսկ երբ ինացավ, որ Գոհար Գասպարյանն էլ հենց իմ քեռու տանն է հանգստացել, և այնքան է հավանել այդ վայրին, որ ուզում է առանձնատուն կառուցել այնտեղ, խանդավառվեց, ասաց, թե միշտ էլ սիրել է ծովը, բայց չգիտի բժիշկները թույլ կտա՞ն Աֆոն գնալ: Հիշեց Աֆոնի հայկական դպրոցի տեղը, գեղատեսիլ բլուրը, որի գագաթին կառուցված էր դպրոցը: Յանկություն հայտնեց հենց այդ բլրի վրա անցկացնել օգոստոս ամիսը՝ վրանի տակ:

— Անահիտ, չգնա՞նք Գառնիկի գոված քեռի Արսենի տունը,— ասաց հանկարծ խանդավառ:— Միասին կլողանք. տեսնենք Գառնիկը կարո՞ղ է մրցել ինձ հետ:

Անահիտը հիշեցրեց բժշկի խորհուրդը՝ նման հեռավոր տեղեր չգնալու մասին: Փափապյանը մռայլվեց: Իվուր էր փշրել նրա վառ երապների պատրանքները, որոնք մի պահ մռռացնել էին տվել հիվանդությունը, իր ակամա բանտարկյալի վիճակը: Բայց կարճ տևեց: Իսկույն նոր ծրագիր կապվեց: Ասաց.

— Եթե Աֆոնի փոխարեն Լենինգրադ գնանք, այնտեղ արդեն չեն կարող արգելել: Կլիմային սովոր են, լավ կզգամ: Դու էլ արի, Օլգինոյում հիանալի օդ է, միասին կանցկացնենք: Ընտիր ելակ ունեն... գոհ կմնաս, գնանք:

Ամառանոցային այս հաճելի շրջապտույտից ու հովվերգական երապներից հետո ծրագրեց ճանապարհորդել աշխարհով մեկ, ասաց, թե կուլտուրայի մինիստրի հետ խոսել է, ամեն ինչ կարգավորվել է, պիտի Անգլիա գնա, լինի նաև Ֆրանսիայում ու Շվեյցարիայում, այնտեղից անցնի Աֆրիկա, մի անգամ էլ տեսնի Մավրիտանիան, որպեսպի ավելի լավ հասկանա Օթելոն:

— Կարծում ես, թե մինչև վերջ հասկացե՞լ եմ այդ բարդ կերպարը կամ որևէ մեկը հասկացե՞լ է...

Անցավ խաղացանկին: Հիշատակեց 5-6 պիես, որոնք ներկայացնելու էր տարբեր երկրներում: Մեծ մասը Շեքսպիրի գործերն էին: Անշուշտ չէր կարող, բայց չէր պզում, որ չի կարող, խոսում էր առանց հումորի, ինքնավստահ, որոշակի: Կարծեք լիներ ոչ թե 80-ի շենին կանգնած դերասան, այլ՝ խանդավառ ու երավկոտ պատանի:

Լուռ հավանություն էի տալիս նրա ծրագրերին, բայց մտածում էի՝ արդյո՞ք հավատում է իր ասածներին, թե հիմա էլ «առողջ» է խաղում, ինչպես «հիվանդ» էր խաղացել մի քանի տարի առաջ: Այն ժամանակ «հիվանդ» էր խաղում առողջ մարմնով, այժմ «առողջ» էր խաղում, երբ իսկապես հիվանդ էր:

Հետո՝ կրկին ծրագրեր, այս անգամ կապված նոր բնակարանի հետ: Ասաց, թե շուտով նոր բնակարան է ստանալու, քաղաքի կենտրոնում, թատրոններին ու համերգասրահներին մոտ: Ուզում էր ամեն ինչ թողնել ու գրել նովելները, որոնց մասին հաճախ էր խոսում:

— Մի քանիսը Չարլանի մոտ կարդացի. հանգիստ չի տալիս, հորդորում է անպայման գրել: Պիտի գրեմ. մի մեծ գիրք էլ այդ պիտի լինի:

Խորասուզվեց մտքերի մեջ. աջ ձեռքը ճակատին՝ նայում էր...

— Զե,— ասաց հանկարծ,— ինչ-որ ասացի, բոլորը կատարելու եմ: Ես չեմ կարող տանը մնալ. վանդակում փակված մընալու սահմանված մարդ չեմ: Ամբողջ կյանքումս շրջագայել եմ: Հիմա ինձ բերել բանտարկել են Կիևյան փողոցի այս նեղլիկ բնակարանում. ուզում եմ նոր քաղաքներ տեսնել, լինել նաև այն վայրերում, որ երիտասարդական տարիներիս եղել եմ: Այդքան խորհուրդներով, զգուշացումներով ամենաառողջ մարդուն էլ կարելի է հիվանդացնել: Տանը նստելը մահ է ինձ համար, մահ է ամեն մի դերասանի համար, եթե նրա կոչումը բեմն է:

Այդ՝ 1965 թվականի այն ամիսներին էր, որ սրտի նոպա էր ունեցել: Բժիշկները կտրականապես արգելել էին տնից դուրս գալ: Ակնարկը նման զգուշացումների մասին էր, չէր ուզում հասկանալ, չէր ուզում հավատալ, որ ինքը հիվանդ է:

Բայց այս անգամ, ավա՛ղ, իրոք հիվանդ էր...

## ՎԵՐՋԻՆ ԾԱՓԵՐԸ

Վերջին անգամ բեմում տեսել էի 1967 թվականի աշնանը՝ Մեք Գրեգորի դերում: Երբ Մեք Գրեգորը դողողջուն ձայնով արտասանեց վերջին բառերը և ամբողջ մարմնով դողալով փուլ եկավ, մեզ՝ հանդիսականներիս թվաց, թե նա ընկավ իր մահով, այնքան բնական էր այդ մահը, այնքան ներդաշնակ հյուժված ու քայքայված դերասանի իրական վիճակին: Ու երբ կրկին բացվեց վարագույրը և ծափահարությունների որոտի տակ երևաց Փափապյանը, նրա մահվան իրողությունը կիսով

չափ միայն հերքվեց. այո՛, ողջ էր սիրելի դերասանը, Մեք Գրեգորի հետ չէր մեկնել այս աշխարհից, բայց արդյո՞ք նա էր՝ իր լայն տարողությամբ բեմը լցնող, նրան շունչ ու կենդանություն տվող, ներքին հուրը հասարակությանը փոխանցող շողշողուն դերասանը: Իհարկե ոչ: Սա Փափալյանի սովերն էր միայն, որ կարծեք վերջին անգամ ուզում էր ուրախացնել իր երկրպագուներին, Դուրյանի բառերով՝ «գիտցեք որ դեռ կենդանի եմ»: Այդ օրը նույնպես ժպտացել էր, բայց այնքան թույլ ու աննկատ, անիրական ու անբնական՝ Փափալյանի համար:

Դրանից հետո այլևս բեմում չտեսա: Բայց տեսա, թե արվեստագետների մի փոքր խումբ ինչպես ծափահարեց նրան, ծափահարեց ամենաանկեղծ, ամենահուլիչ պայմաններում, ծափահարեց, երբ ոչ թե նրա դերակատարումներից մեկն ու մեկի վարագույրն էր իջնում, այլ՝ մի շողշողուն ու փառավոր կյանքի վարագույրը:

1967 թվականի դեկտեմբերի վերջին էր: Հավաքվել էինք Հայկական ՍՍՀ Գերագույն սովետում՝ կոչումներ ստանալու: Ինձ շնորհվել էր արվեստի վաստակավոր գործչի կոչում, Փափալյանին՝ Լենինի շքանշան:

Ճեմարահը լիքն էր արվեստագետներով՝ նկարիչներ, դերասաններ, երաժիշտներ, արվեստաբաններ, մոտ 100 մարդ: Մի մասը՝ ինձ ծանոթ, մի մասը՝ անծանոթ: Դեպի դուրս՝ աստիճանների ու հանդերձարահի մոտ, ծխի քուլաների մեջ սովերվող կանայք ու տղամարդիկ, աղմուկ, իսկ բուն ճեմարահում, խաղաղ մթնոլորտ, մտքերի փոխանակություն:

Հանկարծ խայտաբղետ այդ բավմության մեջ աչքերս գամվեցին կարճահասակ, նիհարավուն մի մարդու: Ուղիղ նայում էր ինձ: Մոտեցավ, փաթաթվեց, ու խզված ձայնով ասաց.

— Չի ճանչցա՞ր:

— Ինչպե՞ս չէ, ընկեր Փափապյան:

Բայց չէի ճանաչել, իսկապես չէի ճանաչել...

— Շատ եմ փոխվել, — ասաց գրեթե հևալով:

Այն էլ ինչպես էր փոխվել: Ո՞ւր էր ընդամենը երկու տարի առաջվա պարարտ մարմինը, խրոխտ ու ականական կեցվածքը, որը միջահասակ այդ մարդուն ոչ միայն բեմում, այլև կյանքում հսկա էր ցույց տալիս:

Կուչ էր եկել, փոքրացել, խեղճացել, աչքերը կորցրել էին իրենց նախկին փայլը, հուրը, որ այնքան սրտեր էր հրդեհել տասնամյակների ընթացքում, և որը միայն իրենն էր, չէր կարող ուրիշներինը լինել: Դեմքի խորշումները ավելի էին ընդգծված: Այտերը կախ էին ընկել թառամած ծաղիկների նման, մի խոսքով՝ մի հոյակապ տաճարի փլատակներն էին մնացել՝ հուպիչ ու սրտաձմևիկ՝ այն բոլոր մարդկանց համար, որոնք երջանկություն էին ունեցել տեսնելու այդ գեղեցկությունը՝ փուլ գալուց առաջ:

Ինչպե՞ս էր պատահել, որ այդ պահին ոչ մեկի հետ չէր: Երևի նոր էր եկել: Որքան երջանիկ էի, որ ինձ բախտ վիճակվեց նրա հետ լինել այդ օրը, խոսել վերջին անգամ: Թևանցուկ կրուցում էինք ու քայլում ճեմաբահում, քայլում խուլարկու աչքերի տարափի տակ:

Արդեն ճանաչել էին բոլորը: Ժպիտներ, բարևներ, ձեռքի արագ սեղմումներ, որոնք չխանգարեցին, որ մնանք միասին: Անահիտի մահից հետո չէինք հանդիպել: Շատ ասելիքներ ունեինք, թեև տրամադիր չէր խոսելու: Չգիտեի ինչի մասին խոսք բաց անել: Ասացի, թե լավ է, որ մի քիչ նիհարել է. չէ՞

որ ինքն էլ ինձ խորհուրդ էր տալիս նիհարել: Տառապալից մի արտահայտություն ուրվագծվեց նրա աչքերի մեջ, երբ ասաց.

— Չէ, Գառնիկ, այս ուրիշ նիհարել է, մարմնական հյուծում, վախճանի մոտեցում...

Մոտեցանք արձանագրման սեղաններին, որոնց շուրջ նըստած աղջիկները տարբեր ցուցակներում ստուգում էին յուրաքանչյուրի անունը, որպեսզի պատրաստեն փաստաթղթերը: Փափապանը ինձնից առաջ էր կանգնած: Մոտեցանք սեղանին: Քարտուղարուհին շեշտակի նայեց նրան ու հարցրեց.

— Դուք նկարի՞չ եք:

— Ո՛չ, աղջիկս, դերասան էի,— պատասխանեց Փափապանը դողդոջ ձայնով:

Ուլեցի փրկել դրությունը. ասացի.

— Ահա մի օրիորդ, որ չի ճանաչում Վահրամ Փափապանին:

Աղջիկը շիկնեց, կորցրեց իրեն.

— Ինչպես չէ, ճանաչեցի, ընկեր Փափապան, ցուցակներն էի նայում, չնկատեցի:

— Ոչինչ, աղջիկս, դու մեղավոր չես, ես այնքան եմ փոխվել, որ անգամ տարիների բարեկամս չճանաչեց...

Վերջացավ արձանագրության ծիսակատարությունը: Բոլորս լուռ նստեցինք դահլիճում: Փափապանը մի ուրիշի հետ խոսքի բռնվելով՝ նստեց նրա կողքին, երկրորդ շարքում, իսկ ես՝ ավելի հեռու:

Քարտուղարը մեկ-մեկ կարդում էր անունները ու մարդիկ բարձրանալով իրենց տեղից, մոտենում էին ամբիոնին, Գերագույն սովետի նախագահության նախագահից ստանում իրենց փաստաթղթերը՝ ձեռքի սեղմումով ու շնորհավորանքներով:

Հանկարծ դահլիճում լավեց Վահրամ Փափապյանի անունը:

Պոռթկաց ծափահարությունը: Բոլորը նայեցին այն կողմը, որտեղ նստած էր ականավոր դերասանը: Հուլված, այլայլված, մի քիչ էլ դժվարությամբ վեր կացավ տեղից, խոնարհվեց, շընորհակալություն հայտնեց աջ ձեռքը կրծքին: Ապա դանդաղ մոտեցավ նախագահին, սեղմեց նրա ձեռքը, ստացավ փաստաթղթերը: Տեղումս նստած մտածում էի՝ ինչպիսի՞ բառեր գտավ նախագահը նրա ծառայությունները գնահատելու համար. և հնարավո՞ր էր գտնել:


Երբ Փափապյանը գալիս էր դեպի իր աթոռը, նորից փոթորկվեց ծափահարությունը, այս անգամ ավելի բուռն, ավելի երկարատև: Շատերը, հավանաբար, զգում էին, որ վերջին անգամ են տեսնում ու ծափահարում Փափապյանին:

Հանդիսությունից հետո խմբով դուրս եկանք: Նրան սպասում էր հատուկ մեքենա, որը դանդաղ սահեց Բարեկամության փողոցով վեր և անհայտացավ մշուշի մեջ:

Նայում էի ետևից ու մտածում՝ ինչո՞ւ, ինչո՞ւ չկարողացա վերջին հրաժեշտը տալ:

### Յ Ա Ն Կ

Երկու խոսք . . . . .	3
Առաջին հանդիպում . . . . .	5
Մտերիմ կրույցներ . . . . .	8
Մի առեղծվածի լուծումը . . . . .	14
Պետրոս Ադամյանի միօրյա բանտարկությունը . . . . .	18
Թուլումբաջիները . . . . .	23
Սիրաւույշի հոբելյանի օրերին . . . . .	28
Փափապյանի ծննդյան 70—ամյակը . . . . .	31
Պատանեկան պոռթկում . . . . .	34
Գամիոը . . . . .	40
Խանդը . . . . .	45
«Արտիս պարտքը» . . . . .	51
Բովանդակալից կրույց . . . . .	55
Փափապյանի բեմական զգեստները . . . . .	60
Անմոռանալի երեկո . . . . .	64
Լիւնը . . . . .	68
«Վանիթա Վանիթարում» . . . . .	77
«Հիվանդը» . . . . .	82
Քննարկում ենք «ժաղը» . . . . .	87
Անվերջ ծրագրեր . . . . .	93
Վերջին ծափերը . . . . .	97



ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վահրամ Փափազյանի հետ

Միջին և բարձր դպրոցական տարիքի համար

ГАРНИК ХАЧАТУРОВИЧ СТЕПАНИАН

Вместе с Ваграмом Папазяном

Для среднего и старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Советакан ցрох»

Ереван, 1979

Խմբագիր՝ Լ. Տ. Սարգսյան

Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան

Գեղ. խմբագիր՝ Մ. Ս. Սարգսյան

Տեխ. խմբագիր՝ Թ. Է. Ավագյան

Վերստուգող սրբագրիչ՝ Չ. Ս. Կարապետյան

ИБ № 699

Հանձնված է շարվածքի 28. 02. 79: Ստորագրված է տպագրության՝ 14. V. 79.: ՎՖ 03654: Ֆորմատ 70×108 <sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակ՝ «Մնացականյան»: Տպագրություն՝ բարձր: 4,55 պայմ. տպ. մամ. հրատ. 3,7 մամ.: Տպաքանակ՝ 10.000: Պատվեր՝ 704: Գինը՝ 10 կոպ.: «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91: Изд-во «Советакан грох», 375009, Ереван-9, ул. Теряна 91. Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Արտաշատի ջրջանային տպարան: Арташатская районная типография Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0056055

10 4.



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»